ԵՐԵՎԱՆ

քաղաքի ամսագիր

#1(66)
2021

ереван / yerevan

ԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ՈՒՂԻՂ ՃԱՆԱՊԱՐՀ

«Անտարեսը»

► Ստեղծում է
ԿՐԹԱԿԱՆ ՈՒ ԳԻՏԱԿԱՆ

- գրքեր
- ձեռնարկներ
- դասագրքեր

► Ձգտում է ձևավորել
ԻՆՏԵԼԵԿՏՈՒԱԼ

- մթնոլորտ
- մրցակցություն
- հասարակություն

ԻՆՏԵԼԵԿՏՈՒԱԼ մթնոլորտը ձևավորվում է այն մարդկանց միջոցով, որոնք կարևորում ու ձեռք են բերում ԿՐԹԱԿԱՆ ՈՒ ԳԻՏԱԿԱՆ գրքեր:
Ձևավորի՛ր մթնոլորտ:

Երևան 0009, Մաշտոցի 50ա/1
Հեռ.՝ +(374 10) 58 10 59, 56 15 26
antares@antares.am / www.antares.am

Բիայնա Մահարի

Այն, ինչ տեղի ունեցավ 2020 թվի աշնանը՝ վերք է, որը երկար տարիներ չի լավանա, կբորբոքվի ու եթե բուժվի էլ, այնպիսի սպի կթողնի, որ ամեն անգամ հայելու մեջ մեզ նայելիս կտեսնենք ու կսարսափենք: Կհիշենք՝ ինչպես հպարտությունից պոկվեց ընկավ առաջին՝ կոկորդային, պարզ, շփական, խուլ, բաղաձայն հնչույթի գրային նշանը՝ հ տառը, ու մնաց պարտությունը: Կհիշենք՝ ինչպես շփոթված ու մոլորված սկսեցինք պարտության պատճառներ ու մեղավորներ փնտրել, ինչպես բաժանվեցինք ճամբարների, ինչպես փնտրեցինք զոհվածներին ու գերեվարվածներին, ինչպես լցվեցինք ատելությամբ ու ցավով: Ինչպես համարեցինք, որ ամեն ինչ անիմաստ էր... Բայց անիմաստ էր արդյոք:

Նոյեմբերի 9-ին հաջորդած առաջին օրերին գրեթե ամեն խոսակցություն սկսվում էր «բայց ամենաահավորն էն ա, որ...» բառերով, ու հասկանում էիր, որ այդ ամենաներն այնքան շատ են, որ նախաձանցը կորցնում էր իր իմաստը, չկար ամենաահավոր ու ավելի քիչ ահավոր, ամեն ինչ պարզապես ահավոր էր: Ահավոր էր հող կորցնելը, ահավոր էր հազարավոր երեխաների կորցնելը, ահավոր էր հազարամյա կոթողները կորցնելը, ահավոր էր հույսը կորցնելը, ահավոր էր չհասկանալը, թե որտեղ սխալվեցինք, ահավոր էր մշուշոտ ապագան պատկերացնելը, ահավոր էր գիտակցելը, որ պետությունը, որին այդքան վստահել էինք, որի հետ քայլել էինք հետ ու առաջ, պարզապես ոչինչ չկարողացավ անել այս արհավիրքի դեմ: Բայց կար մի լուսավոր կետ: Շատ լուսավոր: Մի փոքր կետ, որը չի կարելի ուրանալ, չի կարելի մոռանալ, անհրաժեշտ է հիշել, փայփայել ու հպարտանալ (չկորցնելով, պինդ պահելով բառասկզբում խուլ բաղաձայն հ-ն). այդ կետը ժողովրդի համախմբվածությունն էր:

Ինչպես շատ դիպուկ գրել էր լուսանկարիչ Բիայնա Մահարին՝ «ժողովուրդ, էդ ինչ սիրուն էիք. բոլորդ, բոլոր բոլորը, մեծից փոքր, դմբոյից խելոք, չաղլիկից նիհար ու հակառակը, հարուստից աղքատ, սևից սպիտակ, վերջ ի վերջո, էդ ինչ տարբեր էիք ու ինչ սիրուն մի մարդ դարձած, ոնց էիք կանգնել իրար կողք՝ բոլոր տարաձայնությունները մոռացած ու ձեռք ձեռքի տված մի հատ անվերջ ուժեղ բռունցքի վերածվել, ոնց էիք էդ սև օրերին ժպիտը դեմքներին դարձել մի ուտոպիական մրջյունների հասարակություն»:

Մարդիկ ըստ էության պարզապես իրենց վրա վերցրին պետության գործառույթները: Հասարակությունը բառացիորեն դարձավ պետություն ու գործեց հրաշքներ: Դրանք գուցե բավարար չէին հաղթելու համար, բայց հաստատ բավարար են ապագայի մշուշի մեջ հույսի լույս տեսնելու և դեպի այդ լույսը գնալու համար:

Գլխավոր խմբագիր
Արտավազդ Եղիազարյան

ԹԻԿՈՒՆՔ

04 Սոցապ

Սոցիալական ցանցից՝ սոցապ նախարարություն
Թիկունքի ամենապրեստիժային արտահայտումներից մեկը բարդապրեստիժ օգնության հավաքագրումն ու բաշխումն էր:

16 Ֆիննախ

Վաճառենք, որ օգնենք
Հին մեդալադրամներ, զարդեր, ֆետագործ բլիթներ և այլ բաներ, որ վաճառում էին Հիմնադրամին ազակցելու համար:

18 Ֆիննախ
Վաճառվում է արվեստ
Ինչպես էին արվեստագետներն իրենց աշխատանքների վաճառքից ստացած գումարով օգնում բակային:

22 Տուրիզմի վարչություն

Երևանը ժենգյալ է բուրում
Թիկունքում հայտնված արցախցի կանայք ժենգյալը դարձրեցին Երևանի գլխավոր ուրախություն:

25 ՊՆ
Պատերազմի շաբաթ-կիրակին
Թիկունքային Երևանը՝ երկու օրով ռազմաճակատի վերադարձած զինվորի աչքերով:

26 ՊՆ

Ողջ մնալու արվեստ
Մի օր ՌՄԱ-ի հետ, որի հիմնադիր Վովա Վարդանովը վաղուց էր ասում, որ պատերազմին պետք է նախօրոք պատրաստվել:

30 Մշնախ

Պատերազմ և արվեստ
Արվեստագետների պատասխանը պատերազմին՝ առաջին և երկրորդ Արցախյանների ժամանակ:

38 Մշնախ
Սոցցանց
Ինչպես Վալդորֆյան դպրոցում, Օպերայում և այլուր մարդկային սոցյանցը գործեց պաշտպանիչ յանցեր խակատի համար:

42 Մշնախ
Փախուստ դեպի հեքիաթ
Պատերազմի օրերին հեքիաթագիր Արփի Մաղաքյանն արցախցի երեխաների հետ կրկրվում էր ներկայիս ու փախչում Մրգրան արքայի ժամանակներ:

44 Տուրիզմի վարչություն

«Հովեր» հանրապետություն
Ինչպես դիլիզանյան մի հյուրանոց ընդունեց արցախցի փախստականներին ու վերածվեց մի առանձին հանրապետության:

47 Առողջապահություն

Գիրք զինվորին
Պատերազմից վերադարձած զինվորի համար օգնության լավագույն ցևերից մեկը՝ գրքեր:

48 Առողջապահություն
Մտքի պատերազմ
Պատերազմը դեռ երկար է շարունակվում այն անցածների մղձում. ինչպե՞ս ենչր հոգեբանական օգնություն ցուցաբերել նրանց:

50 ԱԳՆ

Անտեսանելի թիկունք
Արտերկրում սովորող հայ ուսանողի՝ սփյուռքահայության հետ համապատասխան պայքարն արդարության համար:

54 Զրից

«Ռազմաճակատին մոտ քեզ շատ ավելի կոմֆորտի մեջ էիր զգում»
Պատերազմը լուսաբանած լուսանկարիչ Արեգ Բալայանի ու լրագրող Սարեն Ավետիսյանի զրույցը՝ ռազմաճակատի ու թիկունքի մասին:

60 Կաղրերի բաժին
Շուշին ջարդերից հետո, 1920 թ.
Մի յավալի դրվագ Արցախի պատմությունից:

Շապիկ՝
Գևորգ Օրդակյան

ԵՐԵՎԱՆ #1(66) | 2021

Գլխավոր խմբագիր՝
ԱՐՏԱՎԱԶԴ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ
Արտ-տնօրեն՝
ՆՈՆԱ ԻՍԱԶԱՆՅԱՆ
Թողարկող խմբագիր՝
ԱՐՏԱԿ ՍԱՐԳՍՅԱՆ
Գրական խմբագիր՝
ԱՐՔՄԵՆԻԿ ՆԻԿՈՂՈՍՅԱՆ
Սրբագրիչ՝
ՀԱՍՄԻԿ ՊԱՊԻԿՅԱՆ
Ֆոտոմշակում՝
ԱՐՄԵՆ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ
Էջադրում՝
ԱՐՏԱԿ ՍԱՐԳՍՅԱՆ

Հեղինակներ՝
Մարգարիտ Միրզոյան, Հասմիկ Բարխուդարյան, Էլեն Բաբայան, Ամալի Խաչատրյան, Վիկտորյա Մուրադյան

Լուսանկարներ և պատկերազարդումներ՝
Վահան Ստեփանյան, Արեգ Բալայան, Բիայնա Մահարի, 4 Plus (Նազիկ Արմենակյան, Փիրուզա Խալափյան, Գայանե Հարությունյան, Տաթև Հակոբյան), Անդրեյ Իվանով

Տառատեսակ
Arek Armenian by Rosetta, Montserrat Arm հեղինակներ՝ Ջուլիետա Ուլանովսկի, Վահան Հովհաննիսյան

«Քաղաքի ամսագիր» ՍՊԸ
Տնօրեն՝
Արտավազդ Եղիազարյան

Հայաստանի Հանրապետություն,
0014, Երևան,
Պարույր Սևակ 8
էլ. փոստ՝
evnmag@gmail.com
Առցանց՝ evnmag.com

facebook.com/YerevanCityMagazine

instagram.com/evnmag

© 2011-2021 **«ԵՐԵՎԱՆ»**

Գովազդային նյութերի բովանդակության համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«ԵՐԵՎԱՆ» ապրանքային նշանի իրավատեր է հանդիսանում Արտավազդ Եղիազարյանը:

Համարը տպագրության է հանձնվել՝ 15.01.2021

Տպագրված է Անտարես տպագրատանը, 0009, Երևան, Մաշտոցի 50ա/1

Տպաքանակ՝ 4000 օրինակ

Ամսագիրը ղեկավարվում է «Զանգվածային լրատվության մասին» և «Գովազդի մասին» ՀՀ գործող օրենսդրությամբ:

Ամսագրի նյութերը վերատպվում են միայն իրավատիրոջ գրավոր համաձայնությամբ: «ԵՐԵՎԱՆ» ամսագրին հղում կատարելը պարտադիր է:

«ԵՐԵՎԱՆ» ամսագրի ստեղծման գաղափարը պատկանում է «Երևան Փրոդաքշնս» ՓԲԸ-ին:

EUROPEAN ENDOWMENT FOR DEMOCRACY

Մոպագրվում է ժողովրդավարության եվրոպական հիմնադրամի ազակցությամբ

ՎԻՇԱՊԱՎԲԱՐՈՒ ԳԱՂՏՆԻՔԸ



Նոր հայկական ֆենթըզի վեպ՝ մեր կողքին ապրող
վաղնջական առասպելական էակների մասին

Երևանի բոլոր գրախանութներում

գինը՝ 4990 դրամ

Սոցիալական ցանցից՝ սոցապ նախաարարություն

Թիկունքի ամենապերսանալի արդյունքներից մեկը բավմապերսակ օգնության հավաքագրումն ու բաշխումն էր: Այդ գործին լծվածներն այնքան հմտորեն էին կապարում ահռելի ծավալի աշխատանքը, որ, ըստ էության, կարողացան փոխարինել սոցապ նախաարարությանը: Ամբողջ աշխատանքը հնարավոր չէ ներկայացնել մի հոդվածում, բայց ԵՐԵՎԱՆը փորձ է անում ուրվագծել ընդհանուր պատկերը:

Երևանի Սասերային պետական թատրոնի բակում մեկնարկեց «Օգնություն Արցախին» նախաձեռնությունը, որի շրջանակներում պատերազմի օրերին կամավորները հագուստ, դեղորայք և սննդամթերք էին հավաքագրում Արցախ ուղարկելու համար:

Գոհարիկ Հարությունյան

Ի սկզբանե էր բանը

Արդար չի քննարկել, պրպտել՝ ով, երբ ու որտեղ առաջինը սկսեց օգնել: Սա մրցավազք չէ, սա ձնագունդ է, թե կուզեք՝ փեթակ, որի մայր մեղուն Արցախն է: Դե, իհարկե, ամենից տարածական ու աչքի ընկնող շտաբը Մատենադարանում էր (կամ Կամերայինում՝ տարբեր կերպ են կոչում): Այստեղ հայ դերասաններն ի բարօրություն հայոց աշխարհի ի գործ էին բանեցնում իրենց հայտնի ու սիրված լինելը, հավաքում օրենքով թույլատրելի ամեն ինչ (բերում էին տնական պահածոներ, որոնք, ցավոք, մերժում էին ընդունել):

Մեխանիզմը շատ պարզ էր. իրենց սոցկայքերի բազմահազարանոց էջերով ուղիղ եթեր էին դուրս գալիս ու ասում՝ ինչի կարիք ունի սահմանին կանգնած զինվորն ու թիկունքում ապաստան գտած արցախցին: Ռոպեներ անց սկսվում էր ավտոշքերթ դեպի հնագույն ձեռագրապահոց: Հիմնականում բերում էին տաք շորեր, ուտելիք, ծխախոտ, դեղեր, բժշկական պարագաներ, զինվորական հեռադիտակներ, ջուր, ծածկոցներ, անկողնու սպիտակեղեն, զուգարանի թուղթ, անձեռոցիկներ, քնապարկ, չոր սնունդ, զինվորների ներքնաշորեր, փաուեր բանքեր, արևային մարտկոցներ, մեծ արկղեր... ոչի՞նչ չմոռացա: Վստահ եմ՝ այս ցանկն այդ օրերին Մատենադարանի մատույցներում քնող-զարթնող կամավորների զայրույթը կշարժի, քանի որ նրանք կթվարկեն ևս երկու տասնյակ իրեր, որոնք անձամբ են դասակարգել, փաթեթավորել, առաքել:

Սոցցանցից՝ սոցապ

Այդ օրերին տեղ ու դադար չկար Մաշտոց-Կորյուն հատվածում, ու խցանումները որևէ կերպ կանոնակարգելու նպատակով նույնիսկ ճանապարհային ոստիկաններ էին եկել: Ապրանքը գալիս էր անդադար, բոլորն ուզում էին մասնակից լինել այն ահռելի գործընթացին, որը կարող էր որոշիչ դեր խաղալ պատերազմի ընթացքում:

Ու պարզվեց, որ հեռատես հայերից ամեն մեկի տանն էլ կային նեղ օրվա համար պահած ապրանքներ: Կամավորները պատմում են, որ փոքր երեխաներից մինչև պատկառելի ծերունիներ ուզում էին իրենց ունեցածը կիսել զինվորի ու արցախցու հետ: Ու հատկապես ազդեցիկ էին դեպքերը, երբ մարդիկ բերում էին ոչ թե իրենց ավելորդը, այլ ունեցած վերջինը...

Արդյունքում դերասանների վարկանիշի ու կամավորների օրուգիշեր անխոնջ աշխատանքի շնորհիվ կայացավ, արմատներ գցեց ու արագ ընդլայնվեց այլընտրանքային սոցապնախարարությունը: Նրա SS բաժնի ծրագրավորողները գրեցին հատուկ ծրագիր՝ առաջարկ-պահանջարկի բազա: Սրտացավ մարդիկ առաջարկում էին կացարաններ, կամավորները դասակարգում, այնուհետև տեղավորում Արցախից տեղահանվածներին: Ժողովրդական սոցապի տրանսպորտն ապահովում էին կամավոր-վարորդները, որոնցից ոմանք 17-20 անգամ անձամբ են իրենց մեքենաներով օգնություն հասցրել պայթող արկերի տակ տնքացող Արցախի հիվանդանոցներ ու զինանոցներ: Կային կամավորներ, որոնք ամեն գիշեր գնում էին օդանավակայան՝ դիմավորելու ԱՄՆ-ի կամավորների ու բարեգործների ուղարկած դեֆիցիտ ապրանքները:

Կամերայինի աստղային կազմին նույն Մատենադարանի տարածքում միացել էին նաև «Գլոբինգի» աշխատակիցները: Նրանց ստեղծած շտաբում հավաքում էին հիմնականում տաք հագուստ, ծածկոցներ և այլն: Ու նայելով մաթեմատիկական ճշգրտությամբ առանձնացված տաղավարներին, գիշերային ճշգրիտ լուսավորությանը, անձրևին ընդառաջ ջրադիմացկուն կտորներն օպերատիվ ամրացնելուն, տղամարդու, կնոջ, երեխայի հագուստի հստակ տեղաբաշխման անվանական արկղերին՝ պարզ էր դառնում, որ այս ամենի մենեջերը (կարդալ՝ թիմի բոլոր անդամները) պերֆեկցիոնիստ է:

Տիկնիկայինի շրջաբ

Սոցցանցերում հազարավոր երկրպագուներ ունեցող մեկ այլ դերասանուհի հեղինակում էր Սայաթ-Նովայի Տիկնիկային թատրոնում տեղ գտած նույն ժողովրդական սոցապնախի ևս մեկ ճյուղ: Անահիտ Սարդարյանը պատմում է, որ սեպտեմբերի 27-ին արդեն ժամը 11-ին Արյան կենտրոնում էր՝ դոնոր դառնալու ակնկալիքով: Ու մեկ ժամ անց էլ խառնել էր մի քանի հարուստ ընկերների, որպեսզի գումար հատկացնեն օգնության համար:

Անահիտն Արցախից է, նա զգում էր, որ այս կռիվը շուտ չի ավարտվելու: Բայց դեռ չէր պատկերացնում անելիքի այն ահռելի ծավալը, որն անհրաժեշտ էր հետևանքները գոնե որևէ կերպ չեզոքացնելու համար: Տիկնիկային թատրոնը միանգամից համաձայնեց նրանց հյուրընկալել: Առաջին ընտանիքը, որոնց օգնեցին, Հրազդանում էր ապաստանել: «Նրանց որդին կռվում էր, երեք փոքր տղաներ ունեին, ու երբ մայրն ասաց, որ ևս երեք զինվոր էլ հիմա է մեծացնում, ես հասկացա, որ անմնացորդ պարտական ենք նրանց: Այդ պահից քուն ու դադար կորցրեցինք»,– պատմում է ու սկսում թվել, թե որքան մեծ թվով կամավորականներ միացան նրանց:

50-ից ավելի մարդիկ հերթափոխով աշխատում էին ռոբոտի պես՝ առանց տրտնջալու, առանց սխալվելու իրավունքի: Անահիտն անդադար մոտ 150 հազար հետևորդներով սոցցանցի իր էջում ուղիղ եթերներ էր ունենում, հաճախ՝ արտասուքից կարմրած, այտուցված աչքերով: Նրա սթորիներից հետո մարդիկ միանում էին նախաձեռնությանը, բերում ուտելիք, սնունդ, կահույք տրամադրում: Գումար չէր հավաքում, նույնիսկ երբ առաջարկում էին, կամավորականների հետ ուղարկում էր գնումներ անելու խանութից:

15 հազար ընտանիք մոտ քառասուն օր չեն ունեցել կենցաղային խնդիրներ ժողովրդական սոցապի Տիկնիկայինի մասնաճյուղի օգնությամբ: «Մի օր փոքր տղա եկավ, հետևից ինչ-որ մարդիկ 15 հատ տորթ էին բերում: Պարզվեց՝ տղայի ծննդյան օրն է, նա խնդրել էր, որ ծնողները որքան կարող են շատ տորթ առնեն, որ բերի արցախցի երեխաներին: Մի կին կար Կալիֆորնիայից՝ դոկտոր Անին, երկու օրը մեկ նրա անունով օգնության արկղ էին բերում, պարզվեց՝ երկու օրը մեկ է աշխատում ու գումարը փոխանցում այստեղ՝ ընտանիքին, նրանք էլ սնունդ էին առնում, ու նրա անունից բերում: Մի տղամարդ այդպես էլ գաղտնիք մնաց, միայն անունն իմացանք՝ Արտակ: Շաբաթը մեկ գալիս էր հազար դոլարով ու հարցնում՝ ինչ առնեմ: Ոչ մի կերպ չասեց՝ ով է: Մի Ռոբերտ պապիկ ունեինք, բոլոր կամավորներին Անահիտ էր ասում, ամեն ուրբաթ տղան փող էր ուղարկում, նա էլ սնունդ էր գնում-բերում: Տիկնիկային թատրոնում աշխատող մի կին, ով մեզ հետ հավաքագրում էր օգնությունը, մի քանի օր չեկավ: Զանգեցինք,

↓ Երևանի Կամերային պետական թատրոնի բակում

Գայանե Հարությունյան

ՈՒՂԻՂ ԵԹԵՐ ԷԻՆ ԴՈՒՐՍ ԳԱԼԻՍ ՈՒ ԱՍՈՒՄ՝ ԻՆՉԻ ԿԱՐԻՔ ՈՒՆԻ ՍԱՀՄԱՆԻՆ ԿԱՆԳՆԱԾ ԶԻՆՎՈՐՆ ՈՒ ԹԻԿՈՒՆՔՈՒՄ ԱՊԱՍՏԱՆ ԳՏԱԾ ԱՐՑԱԽՑԻՆ

Գայանե Հարությունյան

Գայանե Հարությունյան

Մարթա Հովսեփյան

↖ Արմենուհի Ասրյանը հարևանների և թոռների հետ հոկտեմբերի 3-ին Սյունիքի մարզի Սյունիքի գյուղից տեղափոխվել էր Երևան: Սամաշորների զանգերով հավաքագրված օգնությունը բաշխվում է նաև պատերազմի հետևանքով Արցախից Երևան և այլ բնակավայրեր տեղափոխված ընտանիքներին: Այս ընտանիքները գրանցվում են Սոցիալական ապահովության ծառայության բաժնում և տեղափոխվում կացարաններ

↑ Սամաշորների զանգերով հավաքագրված օգնությունը բաշխվում է նաև պատերազմի հետևանքով Արցախից Երևան և այլ բնակավայրեր տեղափոխված ընտանիքներին

↑ Սամաշորները տեսակավորում են Արցախ ուղարկվող դեղորայքը «ՈՄԱ» կազմակերպությունում

Գայանե Հարությունյան

→ Սամաշորների զանգերով հավաքագրված օգնությունը բաշխվում է նաև պատերազմի հետևանքով Արցախից Երևան և այլ բնակավայրեր տեղափոխված ընտանիքներին

Փրկության հապավիրան

↑ Պատերազմի օրերին Թումոյի այգում մարդիկ յանկեր էին գործում: Նրանց միասել էին անվտանգության աշխատակիցներ

Սամվելի հիմոն

15 ՀԱԶԱՐ ԸՆՏԱՆԻՔ ՄՈՏ ՔԱՌԱՍՈՒՆ ՕՐ ՉԵՆ ՈՒՆԵՑԵԼ ԿԵՆՑԱՂԱՅԻՆ ԽՆԴԻՐՆԵՐ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՍՈՑԱՊԻ ՏԻԿՆԻԿԱՅԻՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ՕԳՆՈՒԹՅԱՄԲ

Նարեկ Սիրեքանյան

← ↑ Ա. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոնի նախաճեռնությամբ առազնագծի և վինվիրին պաշտպանելու համար բեմում պատրաստվում էին ֆոլարկող յանցեր

պարզվեց՝ հիվանդացել է: Հոկտեմբերի վերջն էր արդեն, ցրտել էր, իսկ նա իր տան ամբողջ տաք վերմակներն ու ծածկոցները բերել էր... օրինակները շատ-շատ են»,– իրար հերթ չտալով պատմում են կամավորներն ու հանկարծ լռում:

«Մի հղի կին կար, Շուշիից էր... Շուշիի գրավման օրը յոթ ամսական աղջիկ ծննդաբերեց: Մենք հավաքվեցինք, օժիտ կապեցինք, գնացինք տեսակցության: Աղջիկ էր, անունն էլ Շուշի...»: Չեն ավարտում միտքը: Թվում է՝ սա նոր կյանքի մասին լավ պատմություն է: Բայց ոչ... Շուշին երկու շաբաթ անց մահացավ:

Ուզենք, թե չուզենք, ապրողներս դեռ ապրում ենք: Հիմա Տիկնիկայինի շտաբում վերանորոգում է, սոցապնախի մասնաճյուղից այն շուտով նորից կանցնի Մշակնախի իրավասության ներքո: Բայց արդեն ժողովրդական չի լինի:

Երեխաներ

Պատերազմը հատկապես ծանր հետևանքներ է ունենում երեխաների վրա՝ դա հայտնի փաստ է: Ու այդ խնդիրը, թեկուզ և ժամանակավոր, բայց փորձեցին լուծել էլի սոցցանցերի հայտնի մարդիկ, դերասաններն ու երգիչները: Նրանց օգնությունը շոշափելի չէր, սակայն հաճախ ավելի կարևոր հարցեր էր լուծում, քան կենցաղային խնդիրները: Երեխաների սիրելի մուլտհերոսները, մանկական հաղորդումներում (այն սակավաթիվ) ներգրավված դերասանները շրջում էին հյուրանոցներով ու զվարճացնում երեխաներին:

Կավագործության, նկարչության խմբակների ղեկավարները, գրկած իրենց մատիտներն ու մոլբերտները, կավն ու տարբեր տարրաները, ասես իրենց սուրբ պարտքն էին կատարում՝ փորձելով գոնե ժամանակավոր կտրել երեխաներին համընդհանուր վշտից ու աղետից: Ու մեծամասամբ հաջողվում էր:

Դերասան Անդրանիկ Հարությունյանը պատմում է, որ Աշտարակում այցի ժամանակ մի տղա ոչ մի կերպ չէր ժպտում. «Մնացած դերասանները շարունակեցին ներկայացումը, ես աննկատ մոտեցա, փորձեցի նրան էլ ներգրավել: Բայց տղան սառը նայեց աչքերիս մեջ ու ասաց, որ այս առավոտ նրա հայրը մահացավ: Ես չկարողացա շարունակել ներկայացումը, ու ընդհանրապես ես հետո մի կերպ կարողացա իմ մեջ ուժ գտնել այլ ապաստաններ այցելելու»: Անդրանիկը չի կարողանում ընտանիքների որևէ թիվ նշել, փոխարենը գիտի երեխաներին, որոնց համար զվարճալի ներկայացումներ է խաղացել, երգել-պարել. «Երեք հազարից ավելի արցախցի երեխաների հետ եմ ծանոթացել, ոմանց նույնիսկ կարողանում էինք նվերներ տանել, դե, եթե որևէ տեղից գտնում էինք գումար կամ օգնություն: Մի անգամ նույնիսկ վատ այլընտրանքի առաջ էինք կանգնել. մեզ գումար էին ուղարկել նվերների համար, բայց իմացել էինք, որ Սևանի ափին տնակների մեջ տեղավորված 150 ընտանիքները մրսում են, ցուրտ է, պլիտաներ չկան: Ու այդ անգամ երեխաները նվերներ չունեցան...»: Առանց նվերի էլ նրանք կմեծանան, միայն թե առողջ լինեն: Ու հայրիկը վերադառնա:

Ստացվեց այնպես, որ երեխաների հետ աշխատող դերասաններն ու երգիչները նոր ենթաճյուղ ավելացրեցին ժողովրդական սոցապնախի կառուցվածքում: Նրանք առանձնացրեցին ու լուծումներ փորձեցին գտնել երեխաների սոցիալական դերի պահպանման, պայքարեցին նրանց մանկության իրավունքի համար:

Լոֆթ

«Լոֆթի» ժողովուրդը, ախր, շատ առաջադեմ է: Թեպետ մի քիչ ավելի ուշ միացան սոցապնախարարությանը՝ չէին կողմնորոշվում ֆորմատի հարցում: Բայց հապաղելու ժամանակ չկար, պատերազմի արդեն 10-րդ օրը կազմավորվեց դրամահավաքի ու տեղեկատվության շտաբը: Ամբողջ ռեսուրսն ուղղվեց ֆինանսական ներդրումների ներգրավմանը: «Լոֆթն» առաջիններից էր, որ չթերագնահատեց նաև տեղեկատվական պատերազմը: Արագ ներգրավեցին կամավորների՝ գրաֆիկ դիզայներների, վեբ քոնթենթ ստեղծողների, տարբեր լեզուների թարգմանիչների, SMM մասնագետների և այլն: Ձևավորված կրեատիվ թիմն անդադար հորինում, մշակում ու տարբեր հարթակներում տարածում էր վիզուալ պրոդուկտ, որի շնորհիվ «Հայաստան» համահայկական հիմնադրամի նախաձեռնած դրամահավաքն ավելի ու ավելի լայն շրջանակներ էր ինտեգրում: Այստեղ ստեղծեցին թուրքական ապրանքները բոյկոտող մի շարք կարևոր պոստերներ, գեներացվեցին գաղափարներ, որոնց միջոցով վիզուալ տեսք ստացան թշնամիների ահաբեկչական ձիրքերը:

«Լոֆթում» կին ձեռներեցների հայկական արտադրանքների բարեգործական վաճառք եղավ, որի ընթացքում հիմնադրամի համար հավաքեցին 1 մլն 700 հազար դրամ:

Պատերազմի օրերին «Լոֆթի» տարածքը վերածվել էր ահռելի վորքփլեյսի՝ մի անկյունում հայտնի հայերի տեսաուղերձի նկարահանումներն էին, մյուսում՝ նկարածի մոնտաժը, մի կողմում Արցախից ժամանած ֆելդշերը սեմինար էր անցկացնում առաջին բուժօգնության մասին, մյուսում այդ նույն բուժօգնության սեմինարի թվարկած պարագաներն էին հավաքագրում, որ ուղարկեն առաջնագիծ: Այստեղ հյուրընկալվեցին նաև մի խումբ արցախցի փոքրիկներ, խաղացին համակարգչային խաղեր, սեղանի թենիս, սեղանի խաղեր, կինոսրահում նայեցին ուրախ ֆիլմ ու գոնե ինչ-որ չափով մոռացան, որ իրենց հայրենիքում հիմա կռիվ է, որ մաման ու տատիկը լացում են, երբ պապայից երկու օր լուր չեն ստանում:

Գայանե Հարությունյան

Արցախի երեխաները նկարելով էին պբաղված, մինչ իրենց ծնողները իրենց հասանելիք օգնությունն էին ստանում Նամերային պետական թատրոնից, նկարները թողնելով խաղասենյակի պատին

ՍԻՐՎԱԾ ՄՈՒԼՏՀԵՐՈՍՆԵՐԸ, ՄԱՆԿԱԿԱՆ ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐԻ ԴԵՐԱՍԱՆՆԵՐԸ ՇՐՋՈՒՄ ԷԻՆ ՀՅՈՒՐԱՆՈՑՆԵՐՈՎ ՈՒ ԶՎԱՐՃԱՑՆՈՒՄ ԵՐԵԽԱՆԵՐԻՆ

Գերմանական հշտապահության շտաբ

Երեկոյան ժամը 6:38 էր, Երևանի Կոմայգու շտաբի կամավորներն անհանգիստ աչ ու ձախ էին նայում. սպասում էին: Երկու շաբաթից ավելի է՝ ամեն օր գերմանական ճշտապահությամբ նույն ժամին մոտակա շենքերից ամուսիններ էին գալիս՝օգնելու կամավորներին տեսակավորել օրվա ընթացքում հավաքվածը: Ուղիղ 6:40 մտան շտաբ: Ամուսիններն աշխատում էին լուռ, արագ, արդյունավետ:

Կոմայգու շտաբն ընդհանրապես գերմանական օրենքների հետ ընդհանրություն շատ ուներ: Այստեղ առաջին օրից ձևավորված պատասխանատվությունների և իրավունքների մեխանիզմն այնքան հստակ էր, որ նույնիսկ օգնություն բերողներն էին ակամայից դառնում պարտաճանաչ: Օրինակ, Էդուարդ անունով մի տղա իր ընկերների հետ օրացույցային երկու շաբաթը մեկ բերում էր ուղիղ երեք մեքենա օգնություն, հետո անհետանում ու երկու շաբաթ անց նորից ներկայանում: Կամ Ստեփանակերտից մի ընտանիք

Գայանե Հարությունյան

← Փոքրիկ Ալեխը Սյունիքանակերտցիս է: Նրան Երևան էին բերել հարևանները: Ծնողները մնացել էին Սյունիքանակերտում: Ալեխի հայրը վինտորական է, մայրը՝ բուժքույր

↓ Սամերային պետական թատրոնի խաղասենյակներից մեկում, մի խումբ կամավորականներ Արցախի երեխաների կբաղեցնում են պարբեր խաղերով

Գայանե Հարությունյան

Մարի Հակոբյան

← ↓ → Կամավորների վինվորական վերապատրաստման դասընթաց «ՈՄԱ» (Ողջ Մնալու Արվեստ) կազմակերպությունում

Գիրու

Մարթե Հակոբյան

Մարթե Հակոբյան

Գայանե Հարությունյան

↑ Սպարտակի ընկերության կնօրեն Հակոբ Հակոբյանը պատերազմի օրերին առաջնագծում գտնվող վիրավորներին օգնում էր հոսանքով, ֆնապարկերով, ամենագնացներով և այն ամենով ինչի կարիքը ունի թիկունքը: Կամավորական թիմը ֆեսթիվալում էր սովորական յուպիեսները վերածելով 220 վոլտի, որն առաջնագծում վիրավորին թույլ կտար լիցքավորել հեռախոս, ռացիա և գիշերային տեսագրիչներ

Սաթե Հակոբյան

↑ → «Դաժճևիկ» նախաձեռնության կամավորները Թարտրոնի և Սինոյի պետական ինստիտուտում թիկունքի համար անջրնապաշտպան և այլ անհրաժեշտ պարագաների պատրաստման աշխատանքներ կատարելիս

Սաթե Հակոբյան

ամեն առավոտ ուղիղ ժամը 10-ից մինչև երեկոյան 6-ը գալիս էր օգնելու կամավորներին, ասես աշխատանքի գային: Կոմայգու շտաբը համակարգողների ֆունկցիաներն էլ էին հստակ տարանջատված: Մանյա Սարգսյանը շտաբի մամլո խոսնակն էր, ամբողջ օրն իր սոցիալական ցանցերով տեղեկացնում էր՝ ինչի կարիք ունեն: Մհերն ու Սամվելը Կոմայգու տարածքը բաժանել էին ըստ ենթաբաժինների, կամավորներն էլ ապահովում էին օրգանիզմի անխափան աշխատանքը. «Օրումեջ սահման գնացող մեքենա ունեինք, մի օր այնպես ստացվեց, որ դատարկ էր շտաբը, զինվորներին ուղարկելու ոչ մի բան չունեինք: Արդեն բոլորին զանգել էի՝ ոչ ոք ոչինչ չուներ տալու: Համարյա հուսահատվել էինք, երբ եկան մի խումբ ուսանողներ ու բերեցին մեծ քանակությամբ սնունդ: Հանգիստ շունչ քաշեցինք, տղաները սոված չեն մնա. հենց այդ պատասխանատվության գիտակցումն էր, որ այդ օրերին համախմբեց մեր պես հազարավոր հայ մարդկանց»:

Մի օր մի տատիկ եկավ ու թոռան համար տակդիր խնդրեց: Հարցին՝ ինչո՞ւ միայն տակդիր, ասաց՝ վաղը թոշակ եմ ստանալու, մնացածը կկարողանամ գնել, տակդիրները թանկ են, օգնեք: Բնականաբար, հավաքեցին մի մեծ փաթեթ ու ճանապարհեցին տատիկին»: Շտաբի «Աշխատանքի արդյունավետ կառավարման» վարչության պետ Սամվելն էլ հիշում է՝ ինչպես էին բոլոր լրագրողներին հարցազրույց տալուց առաջ գոնե 20 րոպե ինտեգրում կամավորական աշխատանքին, ասում է՝ մինչև անձամբ չմասնակցեն, չզգան րոպեի արժեքը, չեն հասկանա՝ մեխանիզմն ինչ տրամաբանությամբ է գործում: Իսկ մեխանիզմը գործում էր գերմանական ճշտապահության ու խստապահության օրենքներով:

Լուսավորիչները

Ժողովրդական սոցապի ամենատղամարդկային կետը Պոռոշյան 12 հասցեում էր. այստեղ հոսանք էին ստանում: Մինի պոլիտեխնիկ հիշեցնող շտաբում ամենուր լարեր էին, ups-ներ, տարբեր մարտկոցներ, բրուտալ գործիքներ: Առաջնագծում կապի միջոցներն ու ջերմահեռադիտակները լիցքավորելու համար հոսանք ստեղծելու, առաջացնելու, մոգոնելու համար լուրջ հաշվարկ էր պետք: Ամսի 5-ին հավաքված թիմն ուներ մեկ առաջադրանք. վերաձևափոխել հին ու անսարք ups-ներն ու ստանալ մոտ 300-500 հատ գործող սարք, որոնք 12 V հոսանքը կդարձնեն 220 V:

Տղաներն իրենք էլ չնկատեցին՝ երբ ու ինչպես հանրապետության բոլոր դպրոցների, մարզպետարանների, ԱՁ-ների ու այլ ընկերությունների սարքերը հավաքվեցին Պոռոշյանի փոքր բակում: «100-ը դարձավ 1000, հետո 2000... հետո կորցրեցինք հաշիվը: Միայն պետությունը մեզ տրամադրել է գործածությունից դուրս եկած 8000-ից ավելի սարք, խոշոր ընկերություններն այնպիսի քանակներ էին բերում, որ պահեստավորման նորմալ տեղ էլ չէինք գտնում»,– պատմում է Պոռոշյանի ժողնախի համանախարար Կարեն Դերձյանը:

Աստիճանաբար սահմանին լույս տվեցին, հերթում բունկերներն էին: Կամավորների մի մասը՝ «պոլիտեխնիկ-շտաբի ասպիրանտները», բարդ ինժեներական խնդիրներ էին լուծում, «առաջին կուրսեցի» կամավորներն էլ գիշեր-ցերեկ ձուլում-միակցում-զոդում էին սպիտակ-կարմիր լարերը: Արդյունքում քանդվեց մոտ 10 հազար անսարք ups, որից ստացան 5 հազարից ավելի գործող սարքեր: Իսկ դա նշանակում է, որ փաստացի Արցախում յուրաքանչյուր 100 մ հեռավորության վրա կային հոսանքի աղբյուրներ. Արցախը լուսավորված էր:

«Մեր շտաբում աշխատանքը շատ սպեցիֆիկ էր, բայց եղել են մարդիկ, ովքեր տեղում են յուրացրել ու լավ արդյունքներ տվել: Չեմ մոռանա մի տղամարդու, ով քաղցկեղով հիվանդ էր, քիմիաթերապիաների արանքում գալիս էր մեզ օգնելու: Գիտեր, որ երկար կյանք չունի, բայց ուզում էր վերջին օրերին էլ օգտակար լինել: Կային մարդիկ, որոնք իրենց տան միակ ups-ն էին հանում-բերում: Շատ կային զինվորների հայրեր, ովքեր գալիս էին օգնելու ու, դա նրանց հավատ էր տալիս առ այն, որ իրենց սարքած ups-ը հենց հասնի սահման, հենց հոսանք ունենա, անպայման կզանգի իր հերոս տղան: Ու նման կոնսոլիդացիայի արդյունքում հնարավոր դարձավ հաղթահարել հոսանքի խնդիրը, որը պատերազմից մեկ շաբաթ անց արդեն կրիտիկական էր»:

Պոռոշյանի շտաբի աշխատանքն ուներ մեկ կարևոր տարբերություն. եթե նախորդ կետերում աշխատանքի պտուղները ժամանակի ընթացքում էին քաղում, ապա այստեղ ամեն ինչ շատ օպերատիվ էր: Առաջնագծում գտնվողները հեռախոսը լիցքավորելուց հետո նկարում-ուղարկում էին ups-ներն ու գրում. «Տեսեք՝ ինչ լավ սարք ենք ստացել»՝ հաճախ չիմանալով էլ՝ որտեղից ու ոնց: Ու կամավորները ժպտում էին ի պատասխան ու շարունակում «լավ սարք» հավաքել:

Աշխատող օրգանիզմ

Մենք, իհարկե, չկարողացանք ընդգրկել Երևանում ու նաև մարզերում գործող ժողովրդական սոցապների մեծ մասը: Բայց պատկերը գրեթե ամենուր նույնն է՝ տրամադրվող ու տեղաբաշխվող օգնություն, դրամահավաք, կացարանների հայթայթում և այլն: Իսկ ձեռագիրը նույնն է, քանի որ նպատակն է նույնը, տեսլականը, կամավորականների մղումները: Որովհետև թիմ են՝ անկախ նրանից, թե որ քաղաքում են տվյալ պահին: Ընդհանրապես, կարծիք կա, որ թիմային աշխատանքը հայերի ամենաուժեղ կողմը չէ: Պնդումը միշտ հիմնավորվում է ֆուտբոլում մեր ունեցած պարտություններով ու, հակառակը, շախմատում արձանագրած համաշխարհային ձեռքբերումներով: Ու այս պատերազմի օրերին հանկարծ գործով ապացուցվեց, որ հայերն ունեն հավաքական ոգի, որը գլուխ է բարձրացնում ճգնաժամի, գլոբալ աղետի դեպքում: Ու պարզվեց, որ մենք կարողանում ենք մի քանի օրում ստեղծել օպերատիվ գործող սոցապ նախարարություն՝ իր բարդ ենթակառուցվածքներով: Բայց ռեալ աշխատող օրգանիզմ՝ հիմքում ունեցող մարդասիրական ու կառուցողական օրենքներ: Իհարկե, հետո կլինեն ոչ կառուցողական պնդումներ, իբր այդ նույն ոգին մարում է, հենց աղետը փոքր-ինչ հեռանում է: Բայց միշտ կարելի է շրջել պատմության անիվը:

Գայանե Հարությունյան

UPS-ների վերակինումը Պոռոշյան 12-ի բակում

ՓԱՍՏԱՑԻ ԱՐՑԱԽՈՒՄ ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐ 100 Մ ՀԵՌԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՎՐԱ ԿԱՅԻՆ ՀՈՍԱՆՔԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ. ԱՐՑԱԽԸ ԼՈՒՍԱՎՈՐՎԱԾ ԷՐ

Էլեն Բաբայան
4 Plus / Նապիկ Արմենակյան, Փիրուզա Ռաֆայելյան, Գայանե Հարությունյան, Անթիմ Հակոբյան

Վաճառենք, որ օգնենք

Պարերազմի ընթացքում բոլորս միահամուռ որոշեցինք ու լիքը փող հավաքեցինք: 8000 կարճ համարին ինչեր ասես, որ չգրեցինք ու նույնիսկ այդպես միմյանց ծննդյան օրը շնորհավորեցինք: Եղան և մարդիկ, ովքեր չբավարարվեցին եղածով ու որոշեցին վաճառել ինչ-որ բան՝ գումարը հիմնադրամին փոխանցելու համար: Սպասվում է՝ թե՛ գնորդն է բարեգործ և թե՛ վաճառողը: Առք ու վաճառքի այս դեպքերն իսկապես չափազանց շատ են: Երբ որոշեցինք բոլորին հավաքել մեկ տեղում, ցուցակն անցնում էր 60-ից: Եվ սա միայն այն դեպքերը, որոնք մեզ հայտնի էին: Ներկայացնում ենք լուրերից ամենաարտասովորները:

1910-ականների անտիկվարիատ

Հավաքած գումարը՝ 650 000 դրամ

1911 թվականի Նիկոլայ 2-րդի ոսկյա մետաղադրամից պատրաստված մեդալիոնը երկու անգամ օգնեց տիրոջ հայրենիքին. «Վաճառում եմ այս չերվոնից մեդալիոնը, ամբողջ գումարը կփոխանցվի «Հայաստան» համահայկական հիմնադրամին: Նախնական գինը՝ 200 000 դրամ, բայց ակնկալում եմ ավելի բարձր գնով վաճառք»,– Քրիստինե Արմենակյանի այս գրառումը մեծ արձագանք ստացավ ֆեյսբուքում, ի վերջո Գևորգ Պողոսյանը գնեց այն 300 000 դրամով և նորից աճուրդի դրեց՝ նախնական գինը սահմանելով արդեն 350 000 դրամ:

Սերինե Գասպարյանի ձեռագործ պայուսակներ

Հավաքված գումարը՝ 84 000 դրամ

«Հիմնադրամին մի քանի անգամ գումար փոխանցեցի, մի պահ հասկացա, որ էլ գումար չունեմ: Մայրիկս դերձակ է: Միասին գնացինք կտոր առանք ու 25 հատ tote-bag կարեցինք: Ընկերուհիս էլ դրանց վրա տատիկ-պապիկին նկարեց: Ճիշտն ասած էդ ընթացքում հիվանդացա COVID-19-ով ու գործը մի քիչ հետ ընկավ: 30-ից ավել պատվեր եղավ: 84 000 դրամն արդեն փոխանցել եմ հիմնադրամին: Բայց էլի պատվերներ կան, պայուսակներս հասել են Փարիզ, Վիեննա ու Բեռլին: Իրենք այնտեղից կփոխանցեն»:

Ձեռագործ թխվածքաբլիթներ Մարիամիկ ու Թովմասիկիկ

Հավաքած գումարը՝ 204 000 դրամ

«900 հատ թխել եմ արդեն: Նպատակին հասնելու համար ևս գոնե մի 15 տոպրակ պետք է վաճառեմ: Էդ դեպքում 200 000 դրամ կփոխանցեմ հիմնադրամին: Երեք ու կես տարեկան տղայիս հետ ենք պատրաստում: Ինքն էս թխվածքաբլիթների շնորհիվ կամքի ուժ է ձեռք բերում: Գիտի, որ չի կարելի ուտել: Առաջին փաթեթը հենց ամուսինս է գնել մեր տղայի համար: Այլ պարագայում չէի թողնի վերցնել: Իհարկե, վատ ստացված կամ կոտրված թխվածքաբլիթները ևս իրենն են: Հավանաբար թաքուն երազում է, որ կոտրվածքները շատ լինեն»: Արդյունքում վաճառվեց 99 փաթեթ՝ տասական թխվածքաբլիթով: Հիմնադրամ փոխանցվեց 204 հազար դրամ:

Ռաֆայել Դանիելյանը Sistem Of A Down-ի մեդիատոր է վաճառում (դեռ)

«SOAD-ի հանրահայտ Երևանյան համերգի ընթացքում տղաները մեդիատոր նետեցին բեմից: Էդ հաջողակը ես էի, ով բռնեց: Դե, մտածեցի, SOAD-ը հայտնի է, իրենց սիրում են, իրենցից մի մասնիկն աճուրդի հանելն ինձ հետաքրքիր գաղափար թվաց: Դեռ չի վաճառվել, բայց աճուրդը շարունակվում է, տեսնենք, առաջին առաջարկված գինը 100 ԱՄՆ դոլարն է»:

Երևանի գրքի տոնավաճառ. ընթերցեցինք ու հանգանակեցինք:

Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության նախաձեռնությամբ և մի շարք մարդկանց օգնությամբ Երևանի գրքի տոնավաճառը տեղի ունեցավ հոկտեմբերի 31-ին՝ Գաֆեսճեան արվեստի կենտրոնի քանդակների պուրակում: Գրահրատարակիչների առջև միայն մեկ պայման կար՝ տոնավաճառից ստացված հասույթի առնվազն 50%-ը փոխանցել զինծառայողների ապահովագրության հիմնադրամին: Տոնավաճառն ընդգրկեց 30-ից ավելի գրատներ և որոշ թանգարաններ ու գրադարաններ: Նրանցից շատերը նույնիսկ վճռեցին հիմնադրամին փոխանցել հասույթը 100%-ով: Տեղի ունեցավ նաև Արտավազդ Եղիազարյանի «Վիշապաքարի գաղտնիքը» գրքի շնորհանդեսը, որի վաճառքից ստացված ողջ հասույթը ևս փոխանցվեց զինծառայողների ապահովագրության հիմնադրամին: Տոնավաճառի արդյունքում վաճառվեց 1455 գիրք և հավաքվեց 2 001 680 դրամ:



Չօգտագործած կարմիր զգեստ Ինձա Սարգսյանից
Հավաքված գումարը՝ 100 դոլար

«Պատմությունը սկսվեց դեռևս փետրվարին, երբ չկար համավարակ և երկու մոտ ընկերներիս շատ սպասված հարսանիքին կրելու համար պատվիրեցի մի չքնաղ կարմիր զգեստ։ Բայց, ցավոք, համավարակի պատճառով հարսանիքը չկայացավ։ Դե ես էլ զգեստներ շատ եմ սիրում, դա բոլորը գիտեն, ու, իհարկե, շատ էի ափսոսում, որ այդ կարմիր զգեստն այդպես էլ չհագա։ Երբ սկսվեց պատերազմը՝ զգեստապահարանս բացելիս ոչ հագուստների բրենդներն էր աչքիս երևում, ոչ էլ գույները։ Այնպես ստացվեց, որ այդ ընթացքում չունեի աշխատանք և հիմնադրամին չէի կարող գումար փոխանցել։ Եվ ինձ նման բրենդամոլն առանց մեկ վայրկյան վարանելու որոշեց վաճառել այդ կարմիր զգեստն ու գումարը փոխանցի հիմնադրամին։ Վաճառքի հայտարարությունս ֆեյսբուքում ոչ միանշանակ ընկալվեց, բայց ի վերջո մի կին ցանկություն հայտնեց գնել այն՝ վճարելով նույնիսկ ավելին, քան ես նախատեսել էի։ Արդյունքում 100 ԱՄՆ դոլարը փոխանցվեց հիմնադրամին։ Եղբայրս այդ ժամանակ սահմանին էր, երբ զանգ տվեց և իմացավ կատարվածի մասին, խոստացավ կրկին գնել ինձ համար այդ զգեստից, երբ վերադառնա»։

Սիլիկյան մետաղադրամներ
Հավաքած գումարը՝ 1225 ԱՄՆ դոլար

«Եթե մետաղադրամները վաճառվեն,– գրել էր ֆեյսբուքում դրանց տերը,– խորհրդանշական կերպով հայոց արքաները նույնպես ուղղակիորեն ներդրում կունենան արցախյան նոր հաղթանակի կերտման գործում»։ Հավաքածուն, որի աճուրդի նախնական գինը 500 ԱՄՆ դոլար սահմանվեց, ներառում էր Լևոն Բ արքայի մեկ արծաթե մետաղադրամ, ևս մեկը՝ Հեթում Ա արքայի և Զաբել թագուհու, ինչպես նաև մեկ պղնձե մետաղադրամ-քարտեզ՝ Լևոն Գ արքայի։ Աճուրդն ավարտվեց 1225 ԱՄՆ դոլար վերջնական գնումով։

Արծաթագործ Թադևոս Հարությունյանի աշխատանքներ
Հավաքված գումարը՝ 450 000 դրամ

«2017-ից զբաղվում եմ արծաթագործությամբ, իմ աշխատանքներում ներառում եմ նաև հայկական հարուստ զարդարվեստային մշակույթը։ Պատերազմի օրերին միտք հղացավ սահմանափակ քանակի աշխատանքներ վաճառել և ամբողջը տրամադրել Հայաստան համահայկական հիմնադրամին։ Վաճառքն իրականացրել եմ իմ անձնական ֆեյսբուքյան հաշվով և TEVO'S-ի բրենդից դուրս՝ որպես շարքային քաղաքացի։ Գտա, որ ազգային մշակույթը, որից ոգեշնչվել և օգտվել եմ այս դժվարին պահին, իմ միջնորդությամբ կարող է ծառայել շատ կարևոր նպատակի իրագործմանը։ Արդյունքում վաճառքից գոյացած 450 000 դրամ հասույթը փոխանցեցի հիմնադրամին։ Խոնարհումս մեր բանակին և խաղաղություն բոլորիս»։

Ձեռագործ տիկնիկ Լիլիթ Հարությունյանից
Հավաքված գումարը՝ 15 եվրո

«Ի սկզբանե գործում էի նվիրելու նպատակով, հետո միտք առաջացավ տիկնիկները վաճառել Ֆեյսբուքի միջոցով և ամբողջ գումարը հիմնադրամին փոխանցել։ Արտերկրից մի երիտասարդ գնեց, փոխանցման կտրոնն ուղարկեց ինձ և ասաց, որ տիկնիկը կարող եմ նվիրել ում ցանկանամ։ Արժեքը 7000 դրամ էր, բայց ինքը 15 եվրո էր փոխանցել։ Մեկն էլ եմ վաճառել, մյուսն էլ ընթացքի մեջ է։ Ցավոք ժամանակի սղության պատճառով քիչ եմ կարողանում գործել։ Մեկ տիկնիկի պատրաստումը 5-6 օր կարող է տևել կեսգիշերն անց աշխատելու հաշվին»։

LOFT-ում գրքեր ու լիքը ուրիշ հավես բաներ վաճառեցին
Պատերազմի առաջին իսկ օրերից LOFT-ն իրականացրեց տարաբնույթ միջոցառումներ՝ հիմնադրամին աջակցելու համար։ Ընդհանուր առմամբ վաճառքի դրվեց երեք գիրք. Հայկ Հակոբյան «Հովսեփ Օրբելի. Գանձասարի և Հավոցպտուկի արձանագրությունները» գիրքը, որի շնորհանդեսին վաճառվեց 50 օրինակ (արժեքը՝ 1000 դրամ), Քրիստեան Բատիկեանի «Մետաղէ երազներ» գիրքը, որից վաճառվեց 4 օրինակ (արժեքը՝ 5000 դրամ) և Լևոն Չուգասզեանի «Արշակ Ֆեթվաճեան» գիրքը, որից էլ 5 հատ վաճառվեց (արժեքը՝ 6000 դրամ)։ Գրքերից բացի LOFT-ը հաջողությամբ իրականացրեց Արթուր Հովհաննիսյանի «Ստվերներ և արտացոլանքներ» շարքից մեկ գեղանկարի վաճառքը (արժեքը 1 000 000 դրամ), կազմակերպեց «Կին ձեռներեցները՝ զինվորի կողքին» բարեգործական տոնավաճառ, որի հասույթը կազմեց 1 700 000 դրամ, հյուրընկալեց Sigma Sol բենդի համերգը, որի հասույթը կազմել է 120 000 դրամ, ինչպես նաև իրականացրեց կրծքանշանների, շապիկների ու tote-bag-երի վաճառք։

Դիանա Մնացականյանը սինաբոններ թխեց
«Քովիդի ժամանակ, երբ մարդիկ տարբեր բաներ էին պատրաստում ու հրապարակում, ես էլ որոշեցի սինաբոններ պատրաստել։ Ընկերներս ասում էին, որ լավ է ստացվում։ Պատերազմի ժամանակ հասկացա՝ ինչքան որ կարող ենք օգնել, շատ քիչ էր, պետք էր նոր բաներ ձեռնարկել։ Մի օր նստած մտածում էի ինչ անել, ոնց անել, մտածեցի հասկանամ, մարդկանց ռեակցիան հասկանալ ու ֆբ-ում փոսթ արեցի, հատը 1000 դրամով սինաբոն վաճառելու մասին։ Միանգամից պատվերների մեծ քանակ հավաքվեց։ Ընդհանուր թվով 340 հատ սինաբոն եմ վաճառել, և այդքան գումար եմ ուղարկել հիմնադրամին։ Դրա հետ մեկտեղ տատիկս փափուշներ էր գործում, որոշեցինք դրանք էլ վաճառել, դրանից էլ 20 000 դրամ հավաքվեց, դա էլ առանձին ուղարկեցինք»։

Էլյա Ռաչայրյանն էկլերներ թխեց
«Գաղափարն առաջացավ, երբ մարդիկ սկսեցին տարբեր նախաձեռնություններով հանդես գալ, իրականացնել բարեգործական վաճառքներ։ Իմ ընկերների և բարեկամների շրջանում մեծ համբավ է վայելում իմ պատրաստած էկլերների աշտարակը, որը Կոռկեմբուշ է կոչվում։ Ես էլ որոշեցի հենց դրա միջոցով գումար աշխատել հիմնադրամի համար։ Ես իրականում զբոսավար եմ, տուրիզմի ոլորտից եմ, բայց այս տարի համավարակով պայմանավորված մնացի գործազուրկ և այլ տարբերակ հանգանակման համար պարզապես չունեի։ Դեռևս 30 000 դրամ է հավաքվել, բայց վաճառքը շարունակվում է»։

Համլիկ Բարխուդարյան

ՎԱՃԱՌՎՈՒՄ Է ԱՐՎԵՍՏ

Հիմնադրամներին գումար փոխանցելու, բանակին ու արցախցիներին օգնելու մղումը յուրահատուկ արֆագանֆ գտավ արվեստագետների շրջանում: Շատ արագ մեկը մյուսի հետևից իրենց աշխատանքները վաճառքի ու աճուրդի հանեցին գրեթե բոլորը, նրանցից շատերը նույնիսկ իզեցրին արժեքը, որպեսզի մեծայնեն վաճառելու հավանականությունը, ինչը, ինչպես հայտնի է,անթույլատրելի է արվեստի շուկայում: Եղան նաև առանֆին նախաձեռնություններ, ստեղծվեցին վաճառքի հարթակներ՝ օնլայն կատալոգներ և այլն: Ամենևին պետք չեղան արտադիլլերներն ու արվեստաբանական բոցաշունչ փեֆստերը: Մարդիկ պարզապես արվեստ էին գնում:

Դիանա Հակոբյանն իր արվեստով վա բանկ գնաց

«Մի բան պարտադիր անելու միտքն եկավ միանգամից, պատերազմի առաջին իսկ օրերին: Սկզբում չէի մտածում, որ կարելի է ֆեյսբուքն օգտագործել որպես վաճառքի հարթակ գեղանկարների համար: Մի քանի հոգու հետ խոսեցի՝ հույս ունենալով, որ ինչ-որ հարթակներ ավելի կազմակերպված ու լայնամասշտաբ կզբաղվեն այդ հարցով, առաջարկեցի թե՛ իմ և թե՛ Դավիթ Կարեյանի գործերից վաճառել: Համաձայնեցին, բայց լավ կազմակերպելու համար ժամանակ էր պետք: Դե ես էլ մտածեցի, որ մեկը մյուսին չի խանգարի ու վա բանկ գնացի: Շեշտեցի 50% զեղչը, ինչն այլ պայմաններում երբեք չէի անի և ստացա 5400 ԱՄՆ դոլար հասույթ, որն ամբողջությամբ փոխանցեցի հիմնադրամին: Մեկն էլ ֆոնդի միջոցով եռապատկեց գումարը»:

Ալիկ Ասատրյանը Նիդերլանդների Հաագայում իր արվեստանոց-խրամատը ստեղծեց

Ալիկ Ասատրյանն առաջիններից էր, ով արագ արձագանքեց իրավիճակին ու նախաձեռնեց իր աշխատանքների վաճառքը: Ինքն էլ փաթեթավորում ու հեծանվով փոստատուն էր հասցնում աշխատանքները. «Չգիտեմ, պատահականություն է, թե ոչ, բայց պատերազմի 44 օրերի ընթացքում 41 աշխատանք վաճառեցի և ընդհանուր 22 106 եվրո նվիրվեց հայրենիքին, ևս 230 եվրո՝ մի վիրավոր ազատամարտիկի, չէի էլ հասցնում փաթեթավորել,– ասում է Ալիկն ու հավելում,– իմ արվեստանոցն էլ իմ խրամատն է»:

Արևիկ Առաքելյանը փաղուց նկարված արևոտ նապտյուրմորտներ վաճառեց

«Մտածում էի՝ ո՞նց կարող եմ օգնել բանակին: Ի՞նչն է ինձ մոտ ամենալավը ստացվում: Դե, իհարկե, նկարելը: Որոշեցի վաճառել մրգերի շարքս ամբողջությամբ, որի յուրաքանչյուր նկար 30 000 դրամով վաճառվեց Հայաստանում, ևս երկուսը գնեցին Գերմանիայից 150 եվրոյով, մեկ կտավ էլ՝ 270 եվրոյով: Ամբողջն իհարկե փոխանցեցի հիմնադրամին: Վաճառքը շարունակվում է»:

Գևորգ Գրիգորյանի Artists for Artsakh նախաձեռնությունը

«Բանն այն է, որ շատ արվեստագետներ հանդես եկան ցանկությամբ վաճառել իրենց աշխատանքներն ու ինչ-որ կերպ աջակցել հայոց բանակին: Սակայն վաճառքի արդյունավետ կազմակերպման համար մեկ ընդհանուր հարթակ էր պետք և ես ստեղծեցի այս ֆեյսբուքյան էջը: Նպատակը մեկն է՝ մեր հնարավորության սահմաններում և դրանից էլ դուրս անել ամեն բան հաղթանակի համար»: Տեղադրվեց 600 աշխատանք, որոնցից մոտ 100-ն արդեն վաճառվել է և հիմնադրամներին փոխանցված գումարն արդեն իսկ հատել է 6 000 000 դրամը: Վաճառքներն աճում են, հետաքրքրությունն արվեստի հանդեպ՝ ևս»:

Գայանե Վան Երկանյանն էլ իր արվեստը վաճառեց

«Սկզբում մտածում էի, թե հիմա ո՞վ պիտի հին աշխատանքներից գնի և որ այս պահին այդ վաճառքից ստացված հասույթը ոչինչ չի փոխի: Բայց շուտով հասկացա, որ վիճակը ծայրահեղ է, էլ երկմտելու ժամանակ չկա ու գործել է պետք: Ռադիկալ մտքեր առաջացան մոտս, որ ես ու արվեստս եթե այսօր չէ, ապա էլ ե՞րբ պիտի հայրենիքի կողքին կանգնենք: Այսօր է այդ օրը: Առանց մեր հաղթանակի ում է արդյոք պետք իմ արածը: Հատկապես, որ հայկական գրատպության, տառերի հետ եմ աշխատում, խաղում, իրենցով եմ փորձում Հայաստանից դուրս ասելիքս ասել: Վաճառեցի Ֆեյսբուքի և Etsy-ի միջոցով և 5500 եվրո գումար հավաքեցի: Հետո էլ մի շաբաթ պաստառներն էի փաթեթավորում ուղարկելու համար»:

Գրեկրա Հարությունյանն իր կրպակի փոխարեն ուրիշինը վաճառեց

«Վաղուց էի տրամադրվել գործերս վաճառելուն, բայց պատերազմական իրավիճակն ավելի մեծ անհրաժեշտություն առաջացրին գործերս նույնիսկ շատ ավելի մատչելի վաճառելու: Եվ, ի վերջո, պետք է թույլ տալ, որ գործերը գնան ու իրենց կյանքով ապրեն: Կամավորական աշխատանք անել չէի կարող, միայն այդ կերպ կարող էի օգնել: Եկան գնելու իմ գործերից, հավանեցին մի նկար, որ կախված էր պատից, բայց որն իմ հեղինակածը չէր, համ ծիծաղելի էր, համ էլ դե, ինչ տարբերություն, կարևորը գումար լինի, որ փոխանցեմ հիմնադրամին: Որոշեցի վաճառել, բայց իմ գործերից մեկն էլ նվիրել: Գնի՛ր մեկը, ստացի՛ր մյուսն անվճար սկզբունքով, ի՞նչ վատ է որ: Վաճառվեց 70 000 դրամով, դա էլ կփոխանցեմ, տեսնենք, էլ ինչ կվաճառվի»:

Նունե Թումանյանի խանդակներն արդարացաղթեցին հանուն հայրենիքի

«Երկիրս դժվար օրեր է ապրում՝ պատերազմ, տնավեր մարդիկ ու էլի շատ խնդիրներ, որոնք ահռելի ծախսեր են պահանջում: Յուրաքանչյուրիս պարտքն է ինչ-որ կերպ, թեկուզ չնչին ներդրումով սատար կանգնել պետությանը: Անկեղծ ասած՝ մտահղացումն իմը չէ, ֆեյսբուքում աչքովս ընկել էին նման քայլեր: Եվ քանի որ ինչքան արագ կարողանայի մի բանով օգտակար լինել, այնքան լավ, որոշեցի սկսել առավել մատչելի գործերից: Դեռևս վաճառվել է երկու գործ: Գործերս մեկնել են արտերկիր ու հիմնադրամին փոխանցվել է 120 հազար դրամ: Երկու աշխատանքի արժեք էլ իջեցրել եմ, արագ վաճառելու և կրկին ողջ գումարը հիմնադրամին փոխանցելու նպատակով»:

Վերոնիկա Բարսեղյանը չգրկված գրքի նկարազարդումներ վաճառեց

«Նախքան համավարակը նպատակ կար Հովհաննես Թումանյանի պատմվածքներն իտալերեն թարգմանելու և հրատարակելու: Ես էլ այդ գրքի համար նկարազարդումներ էի արել: Համավարակը փոխեց ամեն ինչ: Նկարազարդումները չտպվեցին: Ես իրենց շատ էի սիրել, շատ էի ափսոսում: Եղավ պատերազմն ու ես որոշեցի, որ ավելի լավ տարբերակ լինել չի կարող: Նկարազարդումները վաճառել է պետք: Այսպես՝ 5000 դրամ սիմվոլիկ գումարով նկարազարդումների tiff տարբերակներն ուղարկեցի գնորդներին: Արդյունքում հիմնադրամին փոխանցեցի 250 000 դրամ»:

Մանու Հարությունյան. պատերազմից հայրենի լուսանկարները՝ յուղաներկով

«Պատերազմը չէր կարող ազդեցություն չթողնել ինձ վրա: Անկախ ամեն ինչից ստեղծագործում եմ ինձ մտատանջող կամ ընդհանրապես ազդեցություն ունեցող թեմաներով: Հերթական անգամ, երբ կարդում էի լրահոսը, փորձելով մի բան իմանալ դեպքերի զարգացումից, հանդիպեցի Տեր Աբել Քարտաշյանի խոսքերին ու հենց այդ խոսքերում գտա իմ բաժին ուժն ու խաղաղությունը: Պատրաստ էր պատկերը: Երկու ժամում նկարեցի: Անցան օրեր: Լսեցի, որ անհրաժեշտ է հիմնադրամին աջակցել ու որոշեցի անել մի բան, որ դեռ չէի հանդիպել այդ օրերին: Որոշեցի աճուրդով վաճառել կտավս և ուղարկել գումարը հիմնադրամին: Ստացվեց: Ստեղծել եմ 3 կտավ՝ արդիական թեմայով, պատկերել իրական պատերազմի դեմքերին: 2 770 000 դրամ փոխանցել եմ Համահայկական հիմնադրամին և 630 000 դրամ՝ զինծառայողների ապահովագրության հիմնադրամին: Հաղթանակի գրավականն ամուր թիկունքն է ու պայքարը՝ կապ չունի վրձնով, պաշտպանիչ ցանցեր գործելով, թե անձրևանոցներ կարելով»:

4 Պլյուսը լուսանկարներ վաճառեց (և ոչ միայն)

4 Պլյուսը լուսանկարչական օնլայն խանութ է, որտեղ վաճառվում են Նազիկ Արմենակյանի, Փիրուզա Խալափյանի, Նելլի Շիշմանյանի, Անահիտ Հայրապետյանի, ինչպես նաև այս խմբի հետ համագործակցող այլ լուսանկարիչների՝ Աննա Դավթյանի, Վաղինակ Նազարյանի և Տաթև Հակոբյանի լուսանկարները և այդ լուսանկարներով պարագաներ: Հարթակի հիմնադիրներից Նազիկ Արմենակյանը պատմում է. «Դեռևս նախորդ տարի էինք որոշել գործարկել կայքը, որոշ բաներ անավարտ էին: Երբ պատերազմ եղավ որոշեցինք արագ ավարտել ու ինչ-որ բանով օգտակար լինել: Խանութը գործարկվեց հոկտեմբերի 8-ից և վաճառքի հանվեցին 4 Պլյուսի լուսանկարիչների տարբեր տարիներին արված արխիվային լուսանկարներ, գրքեր, լուսանկարներով շապիներ և պայուսակներ»:

Խորհրդանշական է, որ Նազիկ Արմենակյանի «Բացիկներ Արցախից» տուփ-գրքից վաճառվեց ավելի քան 70 օրինակ և ամբողջությամբ սպառվեց, չէ՞ որ դրանք այսուհետ պատմական նշանակություն ունեն: Ի դեպ՝ Նազիկը մտադիր է վերատպել այն: Վաճառվեցին նաև 6 օրինակ «Վերապրածները» գրքից, 19 ֆոտոպրինտ, այլ պարագաներից՝ 18 նմուշ պայուսակ և շապիկ: Առայժմ հիմնադրամներին փոխանցվել է 800 000 դրամ:

100 արվեստագետ ներկայացվեց Art for Artsakh հարթակում

Art for Artsakh-ը (www.forartsakh.art) հենց պատերազմի ընթացքում ստեղծված հարթակ է, կարելի է ասել՝ կատալոգ, որտեղ պոտենցիալ գնորդներն ու արվեստագետները հանդիպում են միմյանց, կապ հաստատում, կազմակերպում վաճառքը, նվիրատվություն ու աշխատանքի փոխադրումը: Այս պահին կայքում ներկայացված է մոտ 100 հեղինակ: Կայքի նախաձեռնող գրաֆիկական դիզայներ Նվարդ Երկանյանը պատմում է. «Նախաձեռնությունը սկսվեց պատերազմի առաջին օրերին, երբ մտածում էի, թե ինչ կարող եմ անել Հայաստանի համար գտնվելով Ֆլորենցիայում: Որոշեցի իմ աշխատանքները վաճառել և հասույթը փոխանցել Հայաստան համահայկական հիմնադրամին: Նույն օրերին շատ ուրիշ արվեստագետներ նույն նախաձեռնությամբ հանդես եկան իրենց անձնական ֆեյսբուքյան կամ ինստագրամյան էջերում: Քանի որ այս օրերին լրահոսը շատ արագ է լցվում նորություններով եւ գրառումներով, արվեստագետների գրառումները կորում էին լրահոսում: Գաղափարն արագ քննարկվեց Artsakh Awareness visual content փակ խմբում, որը պատերազմի առաջին իսկ օրերին ստեղծված դիզայներների խումբ է: Ինձ միացան ևս մի քանի հոգի, և միասին արագ պատրաստեցինք կայքը: Հանգանակված գումարի չափը ես չգիտեմ, անձամբ իմ գործերի վաճառքից առ այսօր ընդհանուր առմամբ մոտ 2 000 000 դրամ հանգանակություն եմ կարողացել անել և շարունակում եմ վաճառքը»:

Երևանը ժենգյալ է բուրում

Ինչպես Բրյուսելի փողոցներն են բուրում Բելգիայի ավանդական խաղող վաֆլլի հոտով, այնպես էլ Երևանի կենտրոնն է սկսել բուրել ժենգյալով հայի անուշ բույրով: Արցախյան երկրորդ պատերազմը, չնայած մի շարք յավոր կորուստների ու անդառնալի փրամադրությունների, Երևանին բերեց ժենգյալով հայի նոր մշակույթ: Արցախից Հայաստան տեղափոխված կանայք մինչև հիմա կենտրոնի մի քանի հատվածներում պատրաստում ու երևանցիներին են վաճառում իրենց ավանդական ղարաբաղյան ժենգյալով հացը: ԵՐԵՎԱՆը «ժենգյալային ալբոսանք» է կատարել քաղաքով ու տրուցել արցախցի տիկնանց հետ:

***

Աբովյան-Արամի խաչմերուկում հոկտեմբերի երրորդ շաբաթն է՝ բացվել է ժենգյալով հացի առաջին ու ամենահայտնի կետը։ Սկզբում թխողները երկուսն էին, հերթերը՝ անծայրածիր։ Պատերազմի ավարտից հետո այստեղ ժենգյալով հաց թխող արցախցի կանանց թիվը զգալիորեն մեծացել է, իսկ հերթերը՝ զգալիորեն քչացել։

65-ամյա Լեսմոնյա Օհանջանյանը Ստեփանակերտի շուկայի հայտնի ժենգյալով հաց պատրաստողներից է։ 30 տարի նույն գործն է արել, նույն շուկայում։ Այժմ, միայն ժամանակավոր, տեղափոխվել է Երևան ու միացել Աբովյան փողոցի ժենգյալով հաց պատրաստող կանանց։ Ստեփանակերտ անպայման վերադառնալու է. սպասում է, որ գործերն այնտեղ գոնե մի քիչ լավանան։

Նկատելի է, որ Լեսմոնյան մեջներից ամենաակտիվն ու փորձառուն է այս գործում, նա այս կանանցից նաև միակն էր, որ ինձ հետ զրուցելու առաջարկը չմերժեց։ Երևանն ու երևանցիներին է շատ սիրել. քանի որ աշխատում է քաղաքի հենց կենտրոնում, հասցնում է շատերի հետ շփվել ու նորովի ճանաչել։

«Երևանցիների մասին միշտ լավ կարծիքի եմ եղել, իսկ հիմա բառ չեմ ճարում գրականության մեջ, որ նկարագրեմ իմ զգացմունքները ձեր մասին։ Ինչքան մարդ տեսնում եմ, բոլորը ղարաբաղցիների նկատմամբ շատ հոգատար են, շատ լավատես, շատ օրհնանքով,– ասում է Լեսմոնյան ու շարունակում խոսքը,– Այս գործն էլ մեզ է օգնում, որ մի քիչ ցրվենք մտքերից։ Գոնե սենց մարդ ենք տեսնում, խոսում ենք, մեզ լավ ենք զգում։ Եթե տունը լինես այս մտքերով, կխելագարվես»։

Հետաքրքիր է, որ վերջին նախադասությունը մի քանի րոպե անց նույն բառերի ընտրությամբ ասում է նաև Լեսմոնյայի գործընկեր 60-ամյա Նովելլա Բալասանյանը. «Եթե այս գործը չլիներ, տանը նստած կխելագարվեի»։ Չնայած Նովելլայի խելագարվելու մտքերն ավելի սարսափելի են թվում։ Նա Հադրութի շրջանի Ուղտաձոր գյուղից է, մնացել է անօթևան, սպասում է պետությունների արձագանքին։

Հադրութի իրենց գյուղից տիկին Նովելլան ամենավերջինն է դուրս եկել։ «Հոկտեմբերի 25-ին տղաս դիրքերից զանգեց, ասաց՝ մեկ րոպե ժամանակ ունեմ գյուղից դուրս գալու համար. գյուղում այլևս կին չէր մնացել։ Դուրս եկա, երկու օր մնացի հարևան գյուղում, որտեղից էլ ինձ խաբելով բերեցին Երևան։ Ասացին՝ գյուղ ենք գնում, քշեցին Ստեփանակերտ, հետո Երևան»,– պատմում է հադրութցի կինը։

Թե դեռ ինչքան Նովելլան կաշխատի Երևանում ու մինչև երբ կգործի ժենգյալով հացի այս կետը, անորոշ է, ինչպես պատերազմին վերաբերող մյուս բոլոր հարցերը։ Արդեն մեկ շաբաթ կլրանա, ինչ Նովելլան այստեղ է աշխատում։ Ի տարբերություն Լեսմոնյայի՝ ինքը պրոֆեսիոնալ չէ, բայց պատրաստել շատ է սիրում։ «Տենց ղարաբաղցի չկա, որ ժենգյալով հաց պատրաստել չիմանա»,– վստահեցնում է Նովելլան ու շարունակում գրտնակելը՝ քաղաքավարությամբ հուշելով, որ բավական է խոսի։

↑ Մոսկովյան փողոցի արցախյան ժենգյալը

***

Մոսկովյան փողոցի «ՊԻԵՐ 28» ռեստորանում ժենգյալով հացի կետը քաղաքում հայտնիությամբ զիջում է միայն Աբովյանի տաղավարին: Այստեղ էլ հակառակն է՝ պատերազմի օրերին միանգամից մի քանի կին կարելի էր տեսնել՝ թխելու նույն գործողությունն անելիս, իսկ հիմա պատրաստողներից մեկ-երկու հոգի են մնացել:

Ստեփանակերտից 65-ամյա Ստելլա Ղուլյանին Մոսկովյանի այս ռեստորանում պատերազմի ավարտից առաջ՝ նոյեմբերի սկզբին էի հանդիպել: Շաբաթներ անց նա դեռ նույն տեղում է, նույն ժպիտով նույն գործն է անում: Տիկին Ստելլան շարունակում է մնալ Երևանում, որովհետև Ստեփանակերտ դեռ չի կարող վերադառնալ: Միանշանակ վերադառնալու է. իր տունը կանգուն է մնացել: Հիմա պարզապես սպասում է դպրոցական արձակուրդներին, քանի որ հոկտեմբերից Երևան տեղափոխվելուց հետո թոռնիկներն այստեղ սկսել են դպրոց հաճախել:

Ինչպես և առաջին, այդպես էլ մեր երկրորդ հանդիպման ժամանակ Ստելլան ինձ հետ խոսելու համար չի ընդհատում թխելը: Հրավիրում է ինձ Ստեփանակերտ ու խոստանում այնտեղ էլ ժենգյալ թխել՝ արցախյան տասնյակ կանաչիներով, որոնք նա աճեցնում է Ստեփանակերտի՝ «Տատիկ-պապիկ» հուշարձանի հետևում գտնվող իր սեփական հողամասում: Այդ հողամասն իր տատիկից է ժառանգել, նույն տատիկից իրեն է մնացել նաև ժենգյալով հացի ավանդական բաղադրատոմսը: Միայն մի քանի կանաչիներ են պակասում, սակայն կարևոր երկուսը ձեռքի տակ են՝ կնձմնձուկն ու ճոճռուկը:

Աբովյան-Արամի խաչմերուկում մշտապես ժենգյալի հերթեր են

«Ես տան կին եմ, ժենգյալով հաց պատրաստել եմ փոքր ժամանակվանից, սովորել եմ տատիկից, մայրիկից: Հիմա էլ աղջիկներս են ինձնից սովորում, նաև տասնհինգ տարեկան թոռնիկս»,– ասում է նա:

Երևանում տիկին Ստելլան շատ անգամներ է եղել: Իր ծնողների նման այս քաղաքը հատուկ սիրով է սիրում, հատկապես երիտասարդ տարիքում հաճախ է եկել ու օրերով զբոսնել: Հարցիս՝ արդյոք հասցրե՞ց այս անգամ էլ քաղաքով զբոսնել, որևէ նոր բան տեսնել, տիկին Ստելլան պատասխանում է. «Ինչ կմտածեն մարդիկ, եթե դուրս գամ քաղաքով զբոսնելու: Ամոթ է: Մարդիկ կասեն՝ Ստեփանակերտը թողել, եկել է Երևան, ուրախանում է: Այս անգամ ես միայն տնից գործի, գործից տուն»:

Չուզենալով երկար խանգարել տիկին Ստելլայի գործին՝ հրաժեշտ եմ տալիս: Իսկ նա զարմանալի լավատեսությամբ վստահեցնում է ինձ, որ շուտով ամեն ինչ լավ է լինելու և հյուրասիրում է ժենգյալով հացերից մեկը: Ջեռոցի վրայից հենց նոր վերցրած տաք հացը վառում է ձեռքերս, բայց ես շտապում եմ մի անկյուն գտնել ու այն արագ ուտել, որովհետև միայն տաք-տաք ուտելիս ես զգում, թե ինչպես են բերանումդ հալվում բոլոր կանաչիները:

Ամալի Խաչատրյան
Բիայնա Մահարի

Պատերազմի շաբաթ-կիրակին

Երևանն «ուրիշ» է թվում, երբ վերադառնում ես ֆամփորդությունից: Երևանն անգամ «ուրիշ» էր թվում կարանտինը խիստ պահպանելուց ու երկար ժամանակ փնից դուրս չգալուց հետո: Երևանը նաև շատ «ուրիշ» է թվում, երբ վերադառնում ես պատերազմից:

Զաքարն ուղիղ մեկ ամիս Երևանում չէր եղել. Արցախի սահմանների ամենաթեժ կետերում էր: Եղբոր՝ Հակոբի հետ կամավորագրվել են Արցախի պաշտպանությանը սեպտեմբերի 29-ին: Հոկտեմբերի 29-ին երեք օրով վերադարձել են տուն:
Հոկտեմբերի 29-ն Արտյոմի՝ ամուսնուս, ծննդյան օրն էր: Զաքարն ու Հակոբը նրա ամենամտերիմ ընկերներն են, չնայած Զաքարի հետ իրենց հետաքրքրություններն ավելի ընդհանուր են: Արտյոմին ճանաչելու օրերից Զաքարենք դարձել են նաև իմ մտերիմները: Ծնունդի կապակցությամբ Արտյոմին որոշել էինք անակնկալ անել. Զաքարենց գալու լուրը գաղտնի էինք պահում:
Զաքարի ու Արտյոմի անակնկալ հանդիպման վայրը ես էի որոշել՝ Հրապարակի ժամի տակ: Միլիոնավոր կարևոր հանդիպումներ են եղել Հանրապետության հրապարակի ժամի տակ, եղավ նաև պատերազմից ընկերոջ վերադարձի անսպասելի հանդիպումը:

***

Ոտքի վրա որոշեցինք՝ պետք է նշենք Արտյոմի ծնունդն ու Զաքարենց բարով-խերով վերադարձը: Մինչև մեզ կմիանան մեր մյուս ընդհանուր ընկերներն ու Հակոբը, հրապարակից սկսում ենք քայլել դեպի Աբովյան փողոց:
— Գնանք, Հյուսիսային պողոտայով անցնենք, մի քիչ քաղաքը տեսնեմ: Կարոտել եմ,– առաջարկում է Զաքարն ու մերժում Արտյոմի՝ միանգամից մեր տուն գնալու ու լավ ուտել-խմելու առաջարկը: Նախիրին՝ Զաքարի ընկերուհին, ժպիտով բռնում է Զաքարի ձեռքը, ես էլ՝ Արտյոմի ձեռքը, ու սկսում ենք էքսկուրսիան:
— Զաքար ջան, ինչպես տեսնում ես, ոչ մի բան չի փոխվել Երևանում, ընդամենը մի ամիս է անցել,– ասում եմ ես ու շարունակում,– չնայած քո համար երևի մի քանի տարի...
— Դեռ չեմ կարողանում այս իրականությանը հարմարվել, չեմ հավատում, որ քաղաքում եմ: Մյուս կողմից էլ չեմ կարողանում լրիվ կտրվել պատերազմից, որովհետև գիտեմ՝ վաղը չէ մյուս օրը հետ ենք գնում,– ասում է Զաքարը:

Իսկ Նախիրին ընդհանրապես չի խոսում. լուռ վայելում է Երևանի կենտրոնում ընկերոջ հետ խաղաղ զբոսանքը, որի մասին երազել է ուղիղ մեկ ամիս՝ ամեն օր ու ամեն ժամ:
— Է՛, ասում ենք չի փոխվել Երևանը: Նայի՛ր, ժենգյալով հաց պատրաստող ծյոծյաներ են ավելացել քաղաքի տարբեր ծերերում. դու հլը հերթը նայի՛: Ամեն տեղ դրոշներ են ավելացել ու «Հաղթելու ենք»,– ասում է Արտյոմը, ես էլ շարունակում եմ.
— Շենքերում էլ ավելացել են օդային տագնապի դեպքում պաղվալներ գնալու հայտարարություններ: Չնայած մեր շենքի պաղվալի դռան դիմաց միշտ ավտո է կանգնած...

***

Մի ժամ է՝ քայլում ենք Երևանի կենտրոնով: Ասում-խոսում-ծիծաղում ենք, բայց Զաքարի հայացքը ոչ մի կերպ չի փոխվում: Այս հայացքն առաջին վայրկյանից եմ բռնել, երբ պինդ գրկեցինք իրար: Շատ անբացատրելի հայացք է. ոչ տխուր է, ոչ մտքերով, ոչ էլ անտարբեր, ասես, անծայրածիր խորություն լինի աչքերում:
Ինչ պատերազմը սկսել էր, շատ էի մտածում՝ տեսնես հատկապես ինչը կփոխվի այն զինվորների կյանքում, որոնք պատերազմ են տեսնում: Փաստորեն՝ հայացքն է փոխվում, մտածում եմ ես ու այդ մտքից անհանգստանում, որովհետև այն ոչ մի կերպ չի սազում մեր Զաքարին: Գուցե կան նման խոր հայացքով մարդիկ, բայց Զաքարի հայացքն ընդհանրապես դրանցից չէր. նա կյանքի կայֆերը հասկացող տղա է:
Ամեն անգամ Զաքարի այս հայացքը բռնելով՝ հիշում եմ պատերազմն ու ինքս ինձ հիշեցնում, որ պետք է տխրել: Մյուս կողմից էլ այնքան հաճելի ու անհավատալի երեկո է. եթե Զաքարենց ճակատում մի բան պատահած լիներ, նման խախանդ երեկո չէր լինի:
Այս սարսափելի միտքն էլ անընդհատ շրջում է հետներս. չէ՞ որ Զաքարի պատմած պատերազմական բոլոր դրվագներից մենք լուռ հասկանում ենք, որ նրանք պարզապես սովորել են ողջ մնալու ձևերը: Ինչպես Արտյոմն է բնութագրում՝ Call of Duty խաղի բոլոր լևելներն անցել են՝ առանց որևէ կյանք կորցնելու:

***

Արդեն խմելու ժամն է մոտենում, առաջարկվում է գնալ Երևանի ամենահին ու քյառթու գարեջրատներից մեկը: Իրար հետևից միայն ֆրի ու գարեջուր պատվիրելուց հետո Զաքարը ծիծաղելով ասում է.
— Չեք հավատա, բայց էս Երևանին էլ էի կարոտել:
Հիմա մի շուխուռ ենք դրել գարեջրատանը: Հերթով մեզ են միանում մեր մյուս ընկերները: Վերջապես գալիս է նաև Հակոբը՝ իր մի քանի ընկերուհիների հետ, որոնց հետ էլ սկսում ենք մեր ակտիվ բանավեճը, թե արդյոք Հակոբին սազում է պատերազմից մնացած թրաշը:
Մեր քեֆը եթե կողքից մեկը տեսներ, հաստատ կասեր՝ «փոխանակ գնան ռազմաճակա՛տ»: Դե արի ու բացատրիր, որ մի ամիս ճակատում լինելուց հետո, առանց որևէ քերծվածքի, հենց նոր են հետ եկել: Նկատում եմ նաև, որ կամաց-կամաց հետ է գալիս Զաքարի հին հայացքը: Ուրեմն լավ գարեջուր է, ու ևս մեկն եմ պատվիրում: Այս շուխուռի մեջ վերջապես խոսում է նաև Նախիրին.
— Որ Զաքարը հետս ա, ոնց որ պատերազմը մի քանի օրով դադարեցրած լինեն: Պատերազմի շաբաթ-կիրակի է. ոչ լուր եմ նայում, ոչ էլ անհանգստանում:
Նախիրին գլուխը դնում է Զաքարի ուսին, իսկ ես պինդ սեղմում եմ Արտյոմի ձեռքը՝ սառնությամբ գիտակցելով, որ Նախիրիի հոգեվիճակը շուտով հնարավոր է ինձ էլ ծանոթ դառնա:

Ամալի Ռաչայրյան
Անդրեյ Իվանով

Ողջ մնալու արվեստ

Սովորաբար որևէ երևույթի մասին հոդվածն այդ երևույթի անունով վերնագրելը (ասենք՝ Կլեոպատրայի մասին «Կլեոպատրա»), մեղմ ասած, ոչ լուրջ լրագրողի արարք է համարվում: Բայց պատերազմի օրերին այցելելով ՈՄԱ-ի պատրաստման դասընթացներին և տեսնելով, թե ինչ ահռելի աշխատանք է տարվում այնտեղ՝ լրագրող Էլեն Բաբալյանը խիստախեց հոդվածի վերևում պարզապես բացել կազմակերպության հապավումը, քանի որ ավելի լավ, միևնույն է, հնարավոր չէ բնութագրել այն, ինչ նա տեսավ այնտեղ:

Չլուծված խնդիր

Ողջ մնալը հարատև խնդիր է ծնունդից ի վեր: Այդ խնդիրն ունեցել է նախամարդը, ունի հիմա աշխարհի ամենաանվտանգ երկրի՝ Շվեյցարիայի քաղաքացին, այդ խնդիրն ունի մարդ ասունն ու անասունը՝ քայլող, թռչող, սողացող, լողացող: Բոլոր-բոլորը: Ու անընդհատ: Այսու զարմանալի է, որ, ի տարբերություն երկրորդների, մարդ արարածին այդ հմտությունը չեն սովորեցնում, դասավանդում, մայրական կաթի հետ փոխանցում: Ու աչք փակելով խնդրի վրա՝ այն չի լուծվում: Փոխարենը ողջ մնալու հավանականությունն է կրճատվում:

Բնական է՝ խաղաղ պայմաններում հանգիստ սուրճը վայելող մարդը գերադասում է ջայլամի պես գլուխը խրել ավազներում ու չտեսնել վտանգը:

Հայաստանը թեև համարվում է ռազմականացված երկիր, «ազգ-բանակ» և այլն, սակայն հիմնականում թղթի վրա է... թղթի վրա էր... քանի դեռ թշնամին չհարձակվեց: Ու միանգամից սառը ջրից սթափվեցինք, հիշեցինք այն մեկին, ով զգուշացնում էր, որ եթե ամեն հայ չդառնա զինվոր, երկիրը պահել չենք կարողանա: Չէ, նժդեհը չէ, թեև նա էլ էր կողմ ազգ-բանակին: Հետախույզ, Արցախյան առաջին պատերազմի ժամանակ հատուկ նշանակության ջոկատի հետախուզական դիվիզիայի հրամանատար Վլադիմիր Վարդանովը, ով 2014-ին պատերազմով անցած յոթ ընկերների հետ հիմնել էր ՈՄԱ կազմակերպությունը:

Մենք պատերազմի մեզ ենք

Արվեստներից ամենակարևորը պիտի լինի ողջ մնալու արվեստը՝ ՈՄԱ-ն: Վարդանովն ասում, գրում, պատմում, հորդորում, կրթում, տեղեկացնում էր պատերազմական սխեմաների մասին իր հեղինակած «Հետախույզի օրագիրը» հաղորդաշարի ընթացքում FM106.5 լրատական ռադիոյի եթերներից: Կազմակերպում

էր դասընթացներ բոլոր ցանկացողների համար, որոնց թիվը, նախքան 2020-ը, նույնիսկ մոտ չէր բավարարին: «Մենք պատերազմի մեջ ենք, վտանգ միշտ կա: Ինչպես ամռանը պատրաստվում ենք ձմռանը, նույն ներուժով ու զգոն պատասխանատվությամբ էլ պարտավոր ենք պատրաստվել պատերազմներին»,– իր եթերներում ու հարցազրույցների ժամանակ հորդորում էր Վարդանովը դաշտում աշխատող գյուղացուն, օֆիսային մենեջերներին, սալոնում կյանքը մխող գեղեցկուհիներին, երեխաներին, մեծերին, արցախցուն, հայաստանցուն, ու մի քիչ էլ ախալքալաքցիներին ու ծովագյուղցիներին, քանի որ վերջիններս առանց այդ էլ ռազմատենչ են:
Հոկտեմբերի կեսերին Վարդանովի հորդորը հասավ նաև մեզ: Ու սկսեցինք կարդալ, հետաքրքրվել: Պարզվեց՝ տասնօրյա վերապատրաստման կուրսերին օրական 150-ից ավելի մարդ էր գալիս: Շտաբը քսանչորս ժամ բաց է:

ՊԱՐԶՎԵՑ՝ ԻՐԱԿԱՆ ԶԵՆՔԸ ԾԱՆՐ Է, ՈՒ ՄԻ ՔԻՉ ԷԼ ԱՆՀԱՐՄԱՐ: «ԱՋ ԿՐԱԿ, ՁԱԽ ԿՐԱԿ, ՄԱՐՏԻ...». ԹԻԿՈՒՆՔԻՑ ԼՍՎՈՂ ՀՐԱՀԱՆԳՆԵՐԸ ՍՏԻՊԵՑԻՆ ՇՐՋՎԵԼ

Իրական կենքը ծանր է

Նորք-Մարաշ, Արմենակյան 121/7 հասցեում գտնվող «Նաիրի» հյուրանոցի հետնաբակը մարդաշատ էր: Ահռելի տարածքը բաժանված էր առանձին հատվածների, շատ էին զինվորական համազգեստով տղամարդիկ: Մուտքի մոտ հրացանն արագ հավաքելու, լիցքավորելու դասն էր, կենտրոնում նստած տղամարդը ծանոթացնում էր զենքից օգտվելու կանոններին, շուրջբոլորը հավաքվածներն ուշիուշով հետևում էին նրա ձեռքերի շարժումներին: Մի քանի րոպե սառած, ապշած կանգնեցինք. ինչ մեղքս թաքցնեմ, ես կյանքում զենք չէի էլ տեսել: «Իմ զենքն իմ գրիչն է» կարգախոսը ժամանակավրեպ թվաց: Պարզվեց՝ իրական զենքը ծանր է, ու մի քիչ էլ անհարմար: «Աջ կրակ, ձախ կրակ, մարտի...». Թիկունքից լսվող հրահանգները ստիպեցին շրջվել:
ՈՄԱ-ում պատրաստություն անցնող երկրորդ խումբը տակտիկական վարժություններ էր անում փայտե մուլյաժ հրացաններով զինված: Մեզ նույնիսկ չնկատեցին, թվաց՝ անտեսանելի ենք դարձել: Հեռվում մեկ այլ դասընթաց էր, առանց կտրուկ գործողությունների: Բուժական գործն էր, առաջին շտապօգնությունը: Կենտրոնում գետնին կամավոր էր պառկած, որին էլ վիրակապեցին, էլ շրջեցին ու ոտքերից բռնած տարան, էլ այրվածքը բուժեցին, էլ տեղափոխեցին պատգարակի վրա: Դասընթաց վարողը, որոնց այստեղ «հրահանգիչ» են անվանում, սեղմ ներկայացրեց Բժշկական համալսարանի բուժֆակի առաջին կիսամյակի ծրագիրը՝ վերքերի ճիշտ վիրակապում, կոտրվածքների ու անդամահատության դեպքում գրագետ օգնություն: «Հավասարությունն ուսերի հետ պահեք... Ոտքերը խաչենք, ուղիղ տանելով տեղ չի հասնի... Հիշեք՝ բուժակից է կախված՝ վիրավորը կհասնի՞ պրոֆեսիոնալ բժշկին, թե ոչ»,– հրահանգիչը պտտվում է թվացյալ վիրավորի գլխավերևում ու ցուցումներ տալիս կուրսանտներին:

Անկյունում մի նիհար, վառվող աչքերով աղջիկ էր կանգնած: Իրինան էր, արդեն 14 օր հաճախում էր ՈՄԱ-ի կուրսերին. «Սպասում եմ ՊՆ-ն հրամանս տա՝ գնամ, աղջիկ կամավորների համար նրանց թույլտվությունն է պետք: Ես քաղաքացիական կյանքում դերասանուհի եմ, բայց հիմա դուրս ենք եկել մեր ստերիլ պայմաններից, ուրիշ տարբերակ չունենք»: Լռում ենք: Ավելացնում է. «Բայց ՈՄԱ-ն պատերազմի մասին չէ, այլ ապրելու, ողջ մնալու ...»: Անկյունում կամավորներն անհատական դեղատուփեր են հավաքում զինվորների համար:

Ձեր տեսած կինոները ծոռակեֆ

Նրանք, ովքեր արդեն դասը սովորել են, հիմա քննություն են հանձնում: Մեկ ուրիշ կետում հավաքվում է կուրսանտների մեկ այլ խումբ. գոյատևման դասի ժամն է: Ընկեր Արամն ակնոցով է, նոր է իջել Արցախի դիրքերից, աչքերն են վնասվել. «Երեկոյան մութը հենց ընկնում էր, էլ ոչինչ չէի տեսնում, 14 օր մնալուց հետո հետ ուղարկեցին, արդեն բեռ էի դարձել իմ ռազմընկերների համար»: Վիրավոր աչքն

«ՍՊԱՍՈՒՄ ԵՄ ՊՆ-Ն ՀՐԱՄԱՆՍ ՏԱ՝ ԳՆԱՄ, ԱՂՋԻԿ ԿԱՄԱՎՈՐՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՆՐԱՆՑ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆՆ Է ՊԵՏՔ: ԵՍ ԴԵՐԱՍԱՆՈՒՀԻ ԵՄ, ԲԱՅՑ ՀԻՄԱ ԴՈՒՐՍ ԵՆՔ ԵԿԵԼ ՄԵՐ ՍՏԵՐԻԼ ՊԱՅՄԱՆՆԵՐԻՑ»



ընկավ հեռախոսիս պատյանին. «Կանաչի այս երանգը շատ եմ սիրում: Ռազմական է: Բայց պատերազմ չեմ սիրում, սեպտեմբերին առաջին զնացողների անունները կարդալիս Աստծուն խնդրում էի նույն ցանկը հետդարձին էլ կարդալ»: Այդ 14 օրերից հիշում է միայն հոսպիտալում պատգարակների վրա չորացած արյունը, որն ամեն առավոտ մաքրում էին սանիտարները:

Խումբն արդեն հավաքվել-շրջան կազմած նստել էր գետնին, ինտերվյուն հետաձգվեց: Արամ Աբաջյանն այսօր պատմելու էր ականների մասին: Կողքին շարած տուփերից հերթով հանում-ցույց է տալիս. «Լիպիստոկն է, ծանոթացեք: Մեծապես կիրառվել է Աֆղանական պատերազմում, միսիան ոտքերը կտրելն է, եթե ոչ երկուսը, ապա մեկը՝ հաստատ: Սա տեսնելիս չենք մոտենում, չենք ուսումնասիրում, շրջանցում ենք: Ականորսիչը սովորաբար սրան չի գտնում: Էդ ձեր տեսած կինոները մոռացե՛ք»:

Զգուշորեն տեղադրում է, հանում մյուսը. «Էս ականն էլի նույն միսիան ունի, բայց էս մեկին հետախույզ շները կարողանում են գտնել: Շատ է հանդիպում դիակների, զինվորական ուսապարկերի, բրոնեժիլետների, զենքերի տակ: Հիմնականում բաժին է հասնում դիակապտության սիրահարներին, էն, որ դիակի հագից սապոգն ու զրահաբաճկոն են հանում: Չենք մոտենում թշնամու դիակին, հիշե՛ք: Ի դեպ, դիակապտության համար քրեական հոդված է նախատեսված»:

Գոյատևման դասը մեզ հետ ուշադիր լսում էր ՈՄԱ-ի շունիկը: Արցախից է, անունն էլ Քարվաճառ, մի կերպ են փրկել ռումբերից: Եթե նա կարողանար խոսել, հավանաբար, կասեր, որ Նորքի «Նաիրի» հյուրանոցի հետնաբակում այս պահին պատերազմի հոտ կա, ուղղակի սպեցէֆեկտներն են բացակայում:

Ողջ մնալու խանապարհը

ՈՄԱ-ն պատերազմի այբուբենն է, գրել-կարդալ կսովորեցնի իրական ռազմադաշտը: Բայց առանց այս կուրսերի ողջ մնալը բնավ դյուրին չի լինի: Հայաստանի ամբողջ տարածքով աշխարհազոր ստեղծելու, նրանց սպառազինելու, առաջին բուժօգնությանը ծանոթացնելու, բնակավայրերում ռմբապաստարաններ, թաքնված կրակակետեր կառուցելու, կամուրջներն ու ճանապարհներն ականապատելու ծավալուն գործընթացը վերջապես մեծ թափ է հավաքում: Այսչափ ու այսպիսի թշնամիներ ունեցող հայ ազգի ողջ մնալու համար այսուհետ կա մեկ ճանապարհ՝ Ազգ-Բանակ-Երկիր-Ամրոց:

Էլեն Բաբայան
Վահան Ստեփանյան

Դասերազմ և արվեստ



← Դավիթ Յուիսան-յան, Լուսիա Սագրամանյան. նկարազարդումն իրականացվել է Բեթոֆենեմյան ռադիոհաղորդման համար՝ նվիրված Արցախյան պատերազմին, հեղինակում նաև ցուցադրվել է ՄԵՆՔ ԵՆՔ նախագծի շրջանակում

Ինչ է լինում, երբ արվեստի դաշտ է բերվում մարդկության պատմության ամենադեստրուկտիվ երևույթը՝ պատերազմը: Ինչպես են հարաբերվում արվեստն ու պատերազմը և ինչ է լինում արվեստի հետ պատերազմից հետո: Փորձում ենք հասկանալ երկրորդ Արցախյանի օրինակով:

↑ Սահակ Պողոսյան, «Ակամապատված դաշտեր և պեչենու բաղեր» ինստալյացիա, 2012

Պատերազմի արհավիրքը հավերժական թեմա է արվեստում

Եվ խոսքը ոչ միայն մարտի դաշտում տեղի ունեցած բախումների մասին է, այլև ինչպես է պատերազմի արդյունքում տառապում խաղաղ բնակչությունը, ինչպիսինն է մարդու՝ անհատի պայքարը, ինչպես է ողջ մնում մարդն ու ինչպես է շարունակում ապրել, հաղթահարել պատերազմը թե՛ ֆիզիկապես ու թե՛ հոգեբանորեն: Որպես կանոն դրանք անդրադարձներ են պատերազմի մասնակից կամ ականատես արվեստագետների կողմից, ովքեր տեսել ու զգացել են պատերազմի արհավիրքը, ապրել ու ստեղծագործել պատերազմական ու հետպատերազմական շրջաններում:

Ընդ որում, միշտ չէ, որ դրանք ուղիղ անդրադարձներ են: Շատ հաճախ նույնիսկ միջնորդավորված, կցկտուր հղումներով, երբեմն էլ՝ ընդհանրապես փախուստ իրականությունից: Այս ամենը կա թե՛ Բոսխի ու Ժակ Կալոյի և թե՛ Գոյայի մոտ, թե՛ Պիկասոյի, Կիրխների ու Բոյսի մոտ: Ցավի, կորստի և պատերազմի արհավիրքի թեման զարմանալիորեն քիչ, բայց առկա է նաև հայ արվեստում (Սուրենյանց, Խանջյան, Քոչար և այլն), չնայած որ ասել, թե նման գեղագիտություն մեզանում ձևավորվել է, սխալ կլիներ: Ի տարբերություն, օրինակ, 20-րդ դարում հատկապես առաջին աշխարհամարտի ազդեցությամբ արևմտյան արվեստ ներթափանցած տագնապային ու հոռետեսական զգացողությունների և համանման գեղարվեստական լեզվի՝ էքսպրեսիոնիզմի ի հայտ գալուն, հայ արվեստում պատմական ողբերգական և նույնիսկ հաղթական դրվագները որպես կանոն արտահայտվում են խիստ ընդհանրացված և այլաբանորեն՝ առավել շեշտադրելով հավերժի, նկրտումի և վերածննդի գաղափարները (Սարյան, Գալենց, Աբեղյան և այլն):

↑ Սամվել Սաղաթելյան,
«Սիրային նամակ հերոսին»,
«Պատերազմական ռոմանս»
շարքից, 2020

← Մկրտիչ Մոնոյան, «Ռազմական պատմություններ», 2003

← Մկրտիչ Մոնոյան, «Ռազմական պատմություններ», 2003

↓ Սամվել Սաղաթելյան, «Օկուպացիա», 2003

Այս համարեէպրում առանձնանում է արցախյան պատերազմը

Այս թեմային հայ ժամանակակից արվեստագետները, որքան էլ զարմանալի է, գրեթե չեն անդրադարձել: Առհասարակ, չնայած որ Պերեստրոյկայից ընդհուպ մինչև 2000-ականներ՝ սկսած խորհրդահայ ուշ մոդեռնիզմից՝ հայ ժամանակակից արվեստի ինքնահաստատման կարևորագույն շրջանում, արվեստագետները երբեմն արժանին էին մատուցում ազգայինին՝ կոնցեպտուալ իմաստով, այնուամենայնիվ նկատելի է արվեստի՝ որպես ազգային մշակույթի գաղափար ընկալման մերժողականության, ինչպես նաև պատմության մերժողականության միտում: Այս ծայրահեղ մերժողականությունն արտահայտվում էր նույնիսկ ամենափոքր խորհրդանշանների, ասենք՝ «Մալբորո» ծխելու տեսքով: Հավանաբար հենց այս կոնտեքստում Արցախյան պատերազմը շատ անդրադարձներ չունեցավ այդ շրջանի արվեստում, քանի որ արցախյան հարցն ինքնին ընկալվում էր որպես պատմական ու ազգայնական դիսկուրս, ինչն էլ հակասում էր ժամանակակից արվեստագետների հակապատմական, արևմտամետ ռոմանտիկ մղումներին:

↓ Սամվել Սաղաթելյան, «Քարտեզ-վերմակ», 2012

Սակայն որոշ անդրադարձներ այնուամենայնիվ եղել են

Նախ շատ կարևոր էր լուսանկարիչների (Ռուբեն Մանգասարյան, Զավեն Խաչիկյան, Հ. Պողոսյան, Հ. Բերբերյան և այլն) կատարած աշխատանքը, ովքեր գտնվել են մարտի դաշտում և նրանց գործերը, որքան էլ վավերագրական էին, այնուամենայնիվ նրանց խորթ չէ գեղարվեստականացումը: Պատերազմի ազդեցությամբ ստեղծված արվեստից խոսելիս անհնար է շրջանցել Արցախյան պատերազմի մասնակից Ալեքսանդր Մելքոնյանի արվեստը, որն ինքն անվանում էր միլիթրի-արթ՝ ռազմական գեղարվեստ, որի մանիֆեստը հրապարակվեց 1995-96 թթ. և որը ձևավորվել էր հենց պատերազմի ընթացքում ու շարունակվել հետպատերազմական շրջանում: Անշուշտ, բարդ է ստեղծագործել, երբ գտնվում ես հենց պատերազմի դաշտում, շատ արվեստագետներ այդ ընթացքում դադարեցին ստեղծագործել, բայց ոչ Ալեքսանդրը,





← Ալեքսանդր Մելքոնյան, 1996

ով երբեմն, երբ հաջողվում էր լինել Երևանում, միշտ որևէ բան ձեռնարկում էր։
1996-ին էլ «Գոյակ» կենտրոնում նա ներկայացավ մի ցուցահանդեսով, որտեղ զինվորական քողարկող ցանցով էր պատել ողջ ցուցասրահն ու դրա ֆոնին ներկայացրել իր աշխատանքները։ Նա միակն էր, ով շարունակական կերպով առաջ մղեց իր ուղղությունը՝ միլիթրի-արթը՝ այն հասցնելով ինստալյացիաների, ֆոտոինստալյացիաների, վիդեո-արթի։ Դրանք ոչ թե ուղիղ անդրադարձներ էին կոնկրետ պատերազմի, այլ ռազմական մտածողության հայեցողական կիրառություններ արվեստում։
Ալեքսանդրի հետ միասին մարտական դիրքերում էր Մկրտիչ Տոնոյանը, ով դեռևս ուսանող էր, երբ առնչվեց Ալեքսանդրի արվեստին, ինչը հանգեցրեց հիբրիդային ժանրերի՝ ռազմական նատյուրմորտի, ռազմական դիմանկարների, ռազմական բնապատկերների։
Ավելի ուշ՝ 2012 թվականին, Արցախյան պատերազմին անդրադարձների մի ամբողջ շարք եղավ «Շուշի արտ փրոջեքթ» նախագծի՝ «Հող և տեխնոլոգիա» անվամբ ծրագրի շրջանակում։ Այս դեպքում էլ անհնար է շրջանցել կրկին պատերազմի մասնակից Աշոտ Ավագյանին, ով իրականացրեց մի իրական մեգալիթյան ծիսակարգ, որով նա որոշել էր ընդմիշտ հրաժեշտ տալ պատերազմին ու զոհասեղանին դրեց իր իսկ կտավներից՝ ի հիշատակ զոհված ազատամարտիկների։
Այս շարքի ցայտուն գործերից է Սահակ Պողոսյանի «Ականապատված դաշտեր և պեչենու բաղեր» ինստալյացիան, որտեղ պայթյունավտանգ ականները հանդես են գալիս պեչենիների տեսքով՝ ցույց տալով բանակցությունների ձախողումն ու դրա պայթյունավտանգ լինելը։
Մեկ այլ աշխատանք էլ ներկայացրել էր Սամվել Սաղաթելյանը, ով իր ձեռքով արցախցի կանանց հետ միասին բուրդ էր մշակել, կարել մի ընդարձակ վերմակ, որն իր վրա կրում էր Արցախի քարտեզը՝ հատված առ հատված, կտրատված-կարկատված, բայց հարազատ ու ջերմ, ինչպես հենց այդ հողը։ Հետաքրքիր է, որ Սաղաթելյանը, չլինելով պատերազմի մասնակից, դեռևս 90-ականներից՝ ստեղծագործական ուղու մեկնարկից ի վեր, իր գործերում արտացոլել է

↑ Սամվել Սաղաթելյան, «Նրա հերոսը ողջ է», «Պատերազմական ռոմանս» շարքից, 2020

պատերազմ զնացած ու վերադարձած մարդու ապրումները, նրա հարաբերությունները կնոջ ու ընտանիքի հետ՝ այդ ամենը գուցե վերցնելով իր ազատամարտիկ ընկերների (հատկապես Ալեքսանդր Մելքոնյանի) հետ շփումներից և իրականության կտրուկ փոխակերպումներից, որ ինքն էլ զգում էր այդ շրջանում: Ստեղծվեց «Գրոտեսկային իրականություն» շարքը, որտեղ արտացոլվեց հատկապես հետպատերազմյան շրջանն ու որտեղ կենտրոնական կերպար էր նաև կինը՝ որպես այդ մեկը, ով իր վրա է վերցնում բոլոր դժվարությունները, ով աղապտացվում է բոլոր իրավիճակներում և ում ներքին ուժն արտահայտվում է տղամարդու բացակայության կամ անկարողության պարագայում: Պատերազմից վերադարձողի համար խաղաղությունը կարող է կազմաքանդող ու ավերիչ լինել: Երբեմն շատ ավելի դաժան իրականություն կարող է լինել խաղաղությունը պատերազմից հետո, քան ինքնին պատերազմը: Պատերազմում հաղթանակածը պարտվում էր կենցաղում, հասարակական կյանքում, երբ ինքն իրեն չէր գտնում այդ նոր իրականության մեջ, երբ հիմք էր դրվում ոչ թե ամուր պետականությանն, այլ գողապետությանը և երբ ինքն օտարված էր այդ նոր իրականության ձևավորած հասարակությունից:

↑ → ↗ Վիլյամ Կարապետյան, 2020

← Ռուբեն Մաղայանի գրությունը դարձյալ պատերազմի օրերի ոչ պաշտոնական լոգոն, 2020





↑ Սիգրան Առաքելյան, 2020

Երկրորդ արցախյանը

Արցախյան երկրորդ պատերազմի ընթացքում Սաղաթելյանը ևս կտրուկ արձագանքեց իրադարձություններին։ Այս անգամ շեշտադրվեց գոյատևման, մաքառումի գաղափարը, որն իր արվեստում արտահայտվեց սիրո միջոցով։ Ի վերջո դրան է հանգեցնում արարելու, ստեղծելու, շարունակություն ունենալու վճռականությունը։ Ստեղծվեց փոստային քարտերի շարք՝ 20-րդ դարի պատերազմական ռոմանսի տրամադրությամբ, որն իր մեջ խտացնում է ռոմանտիզմը դեպի զինվորը, դեպի ցեղի գոյության իրավունքի պաշտպանը։

Արցախյան երկրորդ պատերազմի վավերագրության առումով անհնար է շրջանցել լուսանկարիչների՝ Վահան Ստեփանյանի, Ասատուր Եսայանցի, Արեգ Բալայանի, Նարեկ Ալեքսանյանի և այլոց աշխատանքը։ Այստեղ կրկին, որպես կանոն, զուտ վավերագրումից բացի գործ ունենք պատերազմի ռոմանտիզացման, առասպելականացման հետ։

Պատերազմի ընթացքում ֆեյսբուքի միջոցով հնարավոր եղավ տեսնել Տիգրան Առաքելյանի՝ հենց ռազմի դաշտում արված գծանկարները, որտեղ թռչող հրթիռները կրում են այդ նույն ֆեյսբուքի, նավթի, փողի ու տեռորիզմի դեմքը։

Առավել կտրուկ ու էքսպրեսիվ արձագանքեց Վիլյամ Կարապետյանը պաստառների իր շարքով, որտեղ նա դիսկուրս ծավալեց երկու հիմնական ագրեսորների՝ Ալիևի և Էրդողանի կերպարների շուրջ՝ տալով վերջիններիս ոչ թե քաղաքական, այլ հենց բարոյական գնահատականը։ Առանձնահատուկ էքսպրեսիվությամբ են աչքի ընկնում նաև Արցախի ճանաչման կոչ պարունակող պաստառները, որտեղ արվեստագետը կոչ է անում բացել աչքերը և խոսել, անկախ նրանից, թե որքան բարդ կլինի դա։

Մենք ենք

Պատերազմը դեռ չէր ավարտվել, երբ Երևանում բացվեց պատերազմի, իսկ ավելի ճիշտ՝ խաղաղության մասին առաջին Մենք ենք/We stand խորագիրը կրող ցուցահանդեսը, որտեղ մասնակից 27 արվեստագետներ Հայաստանից, Արցախից, Բելգիայից, Ֆրանսիայից, Էստոնիայից և Իտալիայից (Լիլիթ Ալթունյան, Սարգիս Անտոնյան, Տիգրան Արթենյան, Արեգ Բալայան, Էդիկ Պողոսյան, Մաիդա Շավաք, Արևիկ Դոր, Սիրանուշ Դանիելյան, Դավիթ Գալստյան, Կարինե Կոկչյան, Աննա Հակոբյան, Ագաթա Հարությունյան, Անահիտ Հայրապետյան, Լուսիա Կազրամանյան, Թենի Խաչատուրով, Ռուբեն Մալայան, Պետո Միշոյան, Վահրամ Մուրադյան, Սերգեյ Նավասարդյան, Վահրամ Մուրադյան, Արմինե Շահբազյան, Սուրեն Սարգսյան, Մելիք Սոֆոյան, Գայանե Յուխանյան, Հար Թում, Նվարդ Երկանյան, Դավիթ Յուրխանյան) հանդես եկան



խաղաղության, միասնականության, ազգային նոր էպոսի կերտման ու վերածննդի գաղափարը կրող պաստառներով:

Համադրող, արվեստաբան Նաիրի Խաչատուրյանն ու գրաֆիկ դիզայներ Նվարդ Երկանյանը «Ոսկե ծիրան» կինոփառատոնի շրջանակում ազդագրերի բարեգործական ցուցադրություն կազմակերպելու համար արվեստագետներին խնդրեցին նոր գործ ստեղծել: Արդյունքում ստեղծվեցին 30-ից ավել աշխատանքներ, մեկական գործեր, դիպտիխներ, տրիպտիխներ ու նույնիսկ ամբողջական շարք: Ոմանք էլ աշխատեցին միասին: Ցուցադրվեց ֆրանսահայ արվեստագետ Վահրամ Մուրադյանի «La Paix (Խաղաղություն)» դիպտիխը, որն արտահայտում է ոչ միայն խաղաղության փխրունությունը,

այլև այն, թե որքան հեշտ է կորցնել այդ խաղաղությունը՝ կորցնելով ուժերի հավասարակշռությունը: Մեկ այլ աշխատանքում Սուրեն Սարգսյանը ցույց է տալիս արթնացող ու պայքարող մարդկանց ալիքը: Կոլաժային դիպտիխով էր ներկայացել նաև գեղագիր Ռուբեն Մալայանը, ով այդ երկու պաստառներում բուռն էմոցիոնալությամբ համատեղել էր պատերազմի ընթացքում իր ստեղծած գրերն ու կոչերը: Դավիթ Յուխանյանի պաստառում հողի մեջ մխրճված հրթիռը ծիլ է տալիս, ծաղկում ու վեր խոյանում: KolektivRoom-ի ներկայացրած պաստառում էլ վեր է խոյանում դարեր ի վեր մեր կանգուն լինելու հավաստիքը՝ վիշապաքարը: Ի վերջո՝ ցուցահանդեսը հաստատում է՝ Մենք ենք.

Մենք ենք՝ միասին, աննկուն, վճռական,
Մենք ենք՝ ապրելու իրավունքի համար,
Մենք ենք՝ սգավոր հոգիների հետ,
Մենք ենք՝ ոգեկոչ ձայների կողքին,
Մենք ենք՝ բառ ու գույնով,
Մենք ենք՝ հարգանքով,
արժանապատիվ, խաղաղ:

Անշուշտ ղեռ վաղ է խոսել Արցախյան երկրորդ պատերազմի ազդեցությամբ ստեղծված արվեստի միտումներից ու տալ գնահատականներ, հատկապես, որ ունենք պատերազմի մասնակից արվեստագետներ, ինչպես Արթուր Պետրոսյանը, Արա Պետրոսյանը, Դավիթ Քոչունցը, Նարեկ Քոչունցը և այլոք: Պատերազմի ազդեցությունը երկարատև է, ինչպես և դրա թողած հետքը:

Համլիկ Բարխուդարյան
Դավիթ Գալստյան

Սոցանց

Պարերազմի օրերին կարևոր էին սոցցանցերը, բայց մեր կինվորների համար շատ ավելի կենսական նշանակություն ունեին պաշտպանիչ յանցերը: Դրանք գործելու համար մոբիլիզացվեցին «Արեգնազանի», ապա և մյուս դպրոցների սաներն ու ծնողները, իսկ Օպերայի և բալետի թատրոնի մասնագետները հիշեցին «Անուշի» ու «Ժիսելի» համար ռեկվիզիտային յանցեր գործելու փորձը:

↑ Վարդորֆի աշակերտուհի Արփին. ամեն ինչ սկսվեց այստեղից

Ծնողական յանկագործություն Վալդորֆում

Համացանցային (այդ բառի ոչ վիրտուալ, այլ ուղիղ, շոշափելի իմաստով) առաջին կենտրոններից էր «Արեգնազան» կրթահամալիրը՝ իր տարածքով, ակտիվ ծնողական բազայով: Տնօրենը երևի չէր էլ պատկերացնում, որ դպրոցի՝ անխտիր բոլոր պատերին մեխեր կխփվեն, բոլոր սենյակները «կզավթվեն» մանկահասակ բանվորների կողմից, իսկ ծնողները, որոնք մինչ այդ ծնողական ժողովի հագիվ էին գալիս, այլևս դպրոցից դուրս չեն գա: «Արեգնազանը» զարկ տվեց Հայկական բանակի համար քողարկող ցանցեր գործելուն: Տեխնիկան պարզ էր, որոշ նրբություններ յուրացնելուց հետո բոլորը կարող էին միանալ: Աշխատանքը բաժանված էր ըստ տարիքային խմբի՝ սեփական փոխադրամիջոց (ցանկալի է մեծ, տարողունակ) ունեցող պապաները սկզբում Երևանի, հետո արդեն մարզերի կարի արտադրամասերից գտնում-համոզում-վերցնում, իսկ հաճախ էլ առնում ու բերում էին զինվորական համազգեստի թափոններ, ամբողջական թոփեր: Հաջորդ փուլի պատասխանատուն դպրոցականներն էին: Կրտսեր սաները տեսակավորում էին կտորները, առանձնացնում մեծ հատվածները, լցնում արկղերի մեջ, ավագները մկրատով կտրատում էին դրանք եղևնու ձևով: Այնուհետ էստաֆետը հանձնվում էր մամաներին: Դպրոցի պատերից ամրացված ձկնորսական կամ այլ ցանցերի վրա նրանք ժրաջան մեղուների պես արագորեն գործում էին պաշտպանիչ ցանցերը: Ոչ մի օղակ չէր կաղում: Առաջին ցանցը՝ 5x6 մ չափսի, պլանավորել էին գործել հինգ օրում, իսկ ավարտեցին մեկում:

Հետո ծավալները շատացան, առաջնագիծն անընդհատ պահանջում էր ավելի ու ավելի շատ պաշտպանիչ ցանցեր: Տեսնելով, որ աշխատանքը շոշափելի արդյունքներ է տալիս և օգնում պատսպարվել ԱԹՍ-ների կարկուտից՝ դպրոցն օգնող ձեռքեր խնդրանքով հայտարարություն տարածեց: «Հենց հաջորդ օրն այնքան մարդ եկավ, որ ստիպված էինք հերթապահություն սահմանել: Շատերն էին փախչում տնից-տեղից, հեռուստացույցից, հեռախոսներից, ու ցանց գործելը լավագույն թերապիայի տարբերակն էր: Ոմանք գործում էին աղոթելով, ոմանք՝ անիծելով թշնամուն: Մի կին այնքան ձիգ էր գործում, ասես Էրդողանի վզի օղակը փաթաթեր... իհարկե, նրա գնալուց հետո քանդում-նորից էինք գործում, բայց հաջորդ օրն էլի թույլ էինք տալիս մասնակցել: Մի աղջիկ կար, մայրը չէր կարող գալ, նա էր գալիս-տանում կտորի դետալները, որ մայրն աղոթքներ գրի անկյուններում»,– պատմում է Վոլդորֆի ներկա ծնող, ցանցագործության ժամանակավոր խմբակի համակարգող ու հավերժ դասախոս, մարքեթոլոգ Իրինա Մինասյանը: Պատմում է ու ցույց տալիս տուփերի մեջ դասավորած փոքրիկ փայտեր խաչերը: Դպրոցի երգի ուսուցչուհի Արաքսն է բերել, օրհնված խաչերն են, ամրացնում են ցանցերի անկյուններում՝ գաղտնագրության շտայներական ուսմունքի ոգով:

«Արեգնազանում» աշխատանքի տարիքային սահմանափակում էլ կար. տատիկները, ցավոք, չէին կարող մասնակցել. դա պայմանավորված էր կորոնավիրուսով: Տատիկներին տալիս էին թելեր, խնդրում տանը գործել երկար գուլպաներ ու տաք ժիլետներ, հորդորում չմոռանալ ընթացքում աղոթել: Օրական տասից-տասներկու հսկայական ցանց արտադրող դպրոցն արդեն սկսել էր սպիտակ կտորներ փնտրել՝ առաջին ձյունից սպիտակած Արցախի սարերում զինվորներին պաշտպանելու, երբ զինադադարի մասին լուրը փորձեց վերջակետ դնել նաև այս ֆրոնտին: Փորձեց, բայց ապարդյուն: Նոյեմբերի 10-ից հետո էլ վալդորֆցիները շարունակում են հավաքվել և բանակի համար ցանցեր գործել: Ցավոք, ավելի պակաս քանակով, բայց գիտակցությամբ, որ պատերազմը դեռ չի ավարտվել:

Օպերայի բեմը՝ պաշտպանիչ յանկերի գործման կենտրոն

ԴՊՐՈՑԻ ՊԱՏԵՐԻՑ ԱՄՐԱՑՎԱԾ ՁԿՆՈՐՍԱԿԱՆ ԿԱՄ ԱՅԼ ՑԱՆՑԵՐԻ ՎՐԱ ՆՐԱՆՔ ՄԵՂՈՒՆԵՐԻ ՊԵՍ ԱՐԱԳՈՐԵՆ ԳՈՐԾՈՒՄ ԷԻՆ ՊԱՇՏՊԱՆԻՉ ՑԱՆՑԵՐԸ

Ազգային ակադեմիական ցանց

Սոցցանցերից փախնելու համար ցանցեր գործող մեկ այլ կետ էլ Ալեքսանդր Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոնի բեմն էր: Անվան նման վսեմ ու բարեհունչ կեցվածքով օպերային երգիչներն այստեղ համերաշխ կոլեկտիվով պաշտպանիչ ցանցեր էին գործում՝ ընթացքում երգելով արիաներ «Անուշ» և այլ օպերաներից:

Պատմական բեմի պատերը, բարեբախտաբար, մեխերով չծակվեցին. փրկեցին բեմի դեկորների համար կիրառվող շտանգետները, որոնք ծառայեցին որպես ձող ցանցերը կախելու համար: Ընդհանուր առմամբ, ցանցային ադմինիստրացիայի օպերայի թևի աշխատանքային միակ տարբերությունը սա էր: Հումքը նույնն էր՝ զինվորական համազգեստի թափոն, տեխնիկան՝ նույնպես: Թեև 47 տարի թատրոնում աշխատած կոստյումեր տիկին Նինան այս հարցին էլ ստեղծագործաբար մոտեցավ՝ տերևի տեսք ստանալու համար պտտելով կտորների մնացորդները:

Ցանցի հետ աշխատանքի փորձը շատ չէ, միայն «Դավիթ Բեկ» օպերայում են հայ զինվորները ցանցից հագուստներով... Իրականում՝ ոչ: 90-ականներից թատրոնի ռեկվիզիտոր Սերոբը հիշեցրեց տիկին Նինային, որ «Անուշ» օպերայում նույնպես ցանցեր կան՝ ջրհեղեղի տեսարանի ժամանակ: Պարուհիներից մեկը ցածրաձայն հուշեց՝ «Ժիզելում» էլ կա ցանց...

↑ Վալրորֆի ծնողներն ու ուսուցիչները՝ ցանցագործության ժամանակ

Օպերայի բեմը պարտավորեցնող է, այստեղ չկան կենցաղային խոսակցություններ, միմիայն բարձրագույն արվեստ: Ու արվեստի խոնարհ ծառաները հենց առաջին օրը պայմանավորվել են խնայել մեկմեկու և չհայտնել վատ լուրեր, միևնույն է՝ վատ լուրը շուտ է տեղ հասնում: Այստեղ հավաքվում են օգնելու Հայկական բանակին և իրենք իրենց՝ կտրվել սոցցանցերից՝ գործելով ցանցեր: Ֆիզիկական աշխատանքին անսովոր, նուրբ ձեռքերն արդեն հարմարվել են մկրատներին, չեն էլ նկատում այտուցները:

Մենթերգչուհի Սիրանույշ Գասպարյանը կտորի մի պատառիկ է վերցնում ու միանգամից ֆիքսում. «Սա հաստատ Աննա Կնյազյանն է կտրատել, սա նրա ձեռագիրն է»: Բոլորը ժպտում են, իսկ ինձ ու լուսանկարչին բացատրում, որ Աննան ջութակահար է: Մասնագիտական հումոր: Մենք շարունակում ենք չժպտալ... Բոլորից հեռու անկյունում մի սպիտակահեր տղամարդ կռիվ է տալիս ցանցի հետ, փորձում միայնակ երիզել:

«Թույլ տվեք օգնել, սա խմբակային աշխատանք է». չի մերժում: Թատրոնի հետ կապ չունի, նավաստի է, ուղղակի ապրում է թատրոնի հարևան տներից մեկում, իմացել է, որ այստեղ ևս ցանց են գործում, 40 տարվա աշխատանքային գործիք մեծ ասեղն առել-եկել է: Հովնան Ալեքսանյանը պատմեց, որ ավարտել է Լիտվայի ծովային դպրոցը, աշխատել

← Նսիրի Զարյանի անվան դպրոցի մարզադահլիճում

ձկնորսական նավերում, այս ասեղով հազարավոր ցանցեր գործել, հիմա էլ եկել է սովորեցնելու։ Սակայն տեսնելով, որ «ցանց գործելն» այլ բան է նշանակում, արագ վերապրոֆիլավորվել է, սկսել երիզել ցանցերը կտորի չենթարկվող պատառիկներով։ «Անկախությունից հետո եկա Հայաստան, դարձա ցամաքային նավաստի։ Մեր պատերազմը սկսվել է 88-ից, մենք չկարողացանք վերջակետ դնել, հիմա թողել ենք ձեր սերնդի վրա, ու մեզ մեղավոր ենք զգում»... Ցամաքային նավաստին առաջին օրն է միացել ու դեռ չգիտի, որ Օպերայի բեմում նույնիսկ ցանց գործելիս խոսում են միմիայն վեհ արժեքներից։ Արվեստից, ոչ թե պատերազմից...

Նաիրի Զարյան

Երևանի Նաիրի Զարյանի անվան դպրոցն առաջիններից էր, որ դեսանտ ուղարկեց «Արեգնազան»՝ յուրացնելու ցանցագործության նրբությունները։ «Ցանցը ցանցառ չպետք է լինի» հիմնական օրենքին ավելացրեցին սեփական հմտությունները։ Կարողացան գտնել ձկնորսական բարակ թելով հյուսած ցանցեր, ինչը զգալիորեն թեթևացրեց ընդհանուր քաշը։ Հումքը որոշեցին ոչ թե թափոններից ստանալ, այլ թոփով կտորներից։ Դրանց համար առաջին գումարը հատկացրեց տնօրենը. «լոտորեա» էր խաղացել, իր հերթն էր ստանալու, ուզում էր թոռան ծնունդին նվեր գնել։ Բայց թոռը դեռ կհասցնի նվեր ստանալ։ Ու դպրոցի սոցիալական հարթակներում կոչ արեցին դուրս գալ սոցիալական ցանցերից ու օգնել իսկական ցանցեր գործել։ Արագ արձագանքեցին հատկապես նոր շրջանավարտները։ Այդ նրանց տարիքակից տղաներն էին հիմա կռվում առաջնագծում։
Տնօրեն Արմինե Հովհաննիսյանը պատմեց, որ եթե երեկոյան ուշ չհամոզեին գնալ, ամբողջ գիշեր կգործեին. «Գիտեինք, որ դպրոցի սաների մեծ մասը պատերազմի առաջին գծերում է, ուզում էինք գոնե մի բանով աջակցել նրանց։ Ոչ կարգին կապ կար, ոչ դրական լուրեր, առավոտից իրիկուն պաշտպանիչ ցանցեր էինք գործում ու հավատում, անկեղծորեն հավատում, որ դա կօգնի... Ուսուցիչները մի կախարդական ձիրք ունեն, բոլոր աշակերտների անուններն անգիր գիտեն։ Ու երբ զոհերի ցանկն էինք կարդում, հանկարծ հանդիպում ծանոթ անունների, սառում էինք, թաց աչքերով իրար նայում ու չգիտեինք՝ մեզնից ով կզանգի ծնողին, կամ զանգենք՝ ի՞նչ ասենք, ինչպե՞ս մխիթարենք։ Ու ավելի եռանդով էինք գործում, գործում»։
Սպորտդահլիճը վերածվել էր հսկայական աշխատասենյակի, դպրոցի տնտեսվարն ամենուր ամրացրել էր ձողեր, ձողերին՝ ցանցեր, ցանցերի ներքևում՝ կշռաքարեր, կողքերից ցանցը ձողին ֆիքսել... կանանցի բիգուձիներով։ Տնտեսվարը, ինչ խոսք, հնարամիտ էր. «Ես ի՞նչ եմ արել։ Այ, մի անգամ մի ձեռնափայտով տատիկ եկավ, հազիվ էր քայլում։ Մեզ բերել էր կես մետր կանաչավուն կտոր՝ թևի տակ դրած։ Այ նա է արել ավելին, քան կարող էր...»

ԲՈԼՈՐԻՑ ՀԵՌՈՒ ԱՆԿՅՈՒՆՈՒՄ ՄԻ ՍՊԻՏԱԿԱՀԵՐ ՏՂԱՄԱՐԴ ԿՌԻՎ Է ՏԱԼԻՍ ՑԱՆՑԻ ՀԵՏ, ՓՈՐՁՈՒՄ ՄԻԱՅՆԱԿ ԵՐԻԶԵԼ

↑ *Նաիրի Զարյանի անվան դպրոցն առաջիններից էր, որ դեսանտ ուղարկեց «Արեգնազան»՝ յուրացնելու ցանցագործության նրբությունները*

Երևանից Վարդենիս

Այս մի քանի օրինակով պարզորոշ երևում է՝ ինչպես ինքնակազմակերպվեց թիկունքն ու արեց մի բան, որի վիդեոն Յութուբում մի ամիս առաջ տեսնելիս անկեղծորեն կզարմանար։ Ցանցագործությունը դարձել էր սոցիումի միավորման, թիկունքի պայքարի ճակատներից մեկը։ Հազարավոր անծանոթ մարդիկ, անտեսելով աշխարհին ինքնամեկուսացում պարտադրած կորոնավիրուսը, ամեն օր ժամերով կողք-կողքի գործում էին։ Շատ դպրոցներ ու թատրոններ միացան նախաձեռնությանը։ Զինվորին ռումբերից ու երկնքից թափվող հազար ու մի պատուհասներից պաշտպանելու, թևի տակ առնելու ցանկությունը շոշափելի տեսք էր ստանում նրանց շնորհիվ։
Քողարկող ցանցերը հիմնականում հանձնում էին Պաշտպանության նախարարությանը։ ՊՆ-ում զարմացած ասում էին՝ «Էս ժողովուրդը Երևանից Վարդենիս ցանց գործեց»։
Դառնորեն արձանագրենք՝ պետք էր գործել Բերձորից Թալիշ։

Էլեն Բաբայան
Վահան Սրբեփանյան

Փախուստ դեպի հեքիաթ

Պատերազմի օրերին հեքիաթագիր Արփի Մաղաքյանն արցախցի երեխաների հետ մի որոշ ժամանակով կտրվել էր ներկայիս ու խորասուզվել մեր պատմության մեջ, տեսել դարեր առաջ ապրած Անիգրան արքային ու պարտության մատնել չար վիշապին:

Պետք է մի բան անել...

Պետք է մի բան անել: Պատերազմի առաջին օրերն էին, ու դա միակ միտքն էր, որ գլխումս պտտվում էր: Նույնիսկ մտքիս դրել էի կամավորագրվել ու մեկնել Արցախ, բայց հետո հասկացա, որ ոչ կրակել գիտեմ, ոչ էլ բավարար պինդ մարդ եմ, որ, օրինակ, կարողանամ մարտի դաշտում վիրակապել: Անիմաստ էր:

Հենց այդ օրերին ինձ հետ կապվեց Սիրարփի Ադամյանը և հարցրեց՝ արդյոք կուզե՞մ արցախցի երեխաներին հեքիաթ պատմել: Ես էլ ասացի՝ ինչու չէ:

Ասեց, որ իրենց խանութի ետնաբակում պատրաստվում են հավաքել մի խումբ երեխաների, նրանց նվերներ տալ, ու այդ պահին որոշում էին, թե ինչ ժամանց կարելի է մտածել: Որոշեցի, որ երեխաներին իմ գրած հեքիաթներից կկարդամ, բայց ընտրեցի ոչ թե արդեն հրապարակված «Երևանյան հեքիաթներ» գրքից, այլ Տիգրան Մեծի մասին իմ նոր գրվող հեքիաթը:

Տիգրան Մեծը մեր պատմության հզոր կերպարներից է, ու երեխաներին այս վիճակում հենց այդ ուժն էր հարկավոր: Նախնական գաղափարով հեքիաթն ուրախ, հզոր, հետաքրքիր սյուժե ուներ, և դա հենց այն էր, ինչ մեզ պետք էր այս պահին: Առաջին հանդիպումս սեպտեմբերի 30-ին էր և շարունակվեց: Հեքիաթ պատմեցի այդ դժվար օրերին Երևանում և Երևանին մոտ քաղաքներում, գյուղերում ապաստանած հարյուրավոր արցախցիների: Սոցիալական ցանցում գրեցի՝ ում երեխայի տաք բաճկոնը, տաք շալվարը փոքրացել է, տվեք ինձ: Մեծ պատրաստակամությամբ տասնյակ մարդիկ ընտիր որակի, մաքուր ու տաք հագուստներով լցրեցին մեքենայիս բեռնախցիկը, այն անընդհատ վերալցվում էր: Ես էլ հեքիաթ պատմելուն զուգահեռ կարողացա բազմաթիվ երեխաների տաք հագուստով ապահովել: Շատ շնորհակալ եմ բոլորից:

Արցախցի հեքիաթագրերը

Հեքիաթի պատմելու ձևն ընթացքում փոփոխեցի: Սկսեցի մոմ տանել հետս և մոմի լույսի տակ պատմում էի հեքիաթը: Երեխաներն ուշադիր, աչքերը կլորացրած լսում էին: Նույնիսկ տատիկներն ու մայրիկներն էին գալիս ու երեխաների նման լսում: Մեծերը նույնպես այս օրերին հեքիաթի կարիք ունեին, գուցե երեխաներից էլ ավելի շատ:

Հետո հասկացա, որ երեխաներին դուր է գալիս մասնակցել հեքիաթի պրոցեսին, և մեր հանդիպումները վերածվեցին փոքրիկ ներկայացումների: Դերեր էի բաշխում, ինձ հետ «կախարդական սնդուկով» տարբեր հետաքրքիր իրեր էի տանում, որպեսզի մեր փոքրիկ ներկայացումն ամբողջական լինի:

Քանի որ հեքիաթը դեռ գաղափարային մակարդակում էր ու մի քիչ էլ թղթային սևագրերի տեսքով, այն ամբողջացրինք հենց երեխաների հետ, մեր հանդիպումների ժամանակ:

Նրանց պատմում էի, իսկ վերջում խնդրում, որ ինձ նույնը փոխադրեն արցախյան բարբառով: Երեխաների պատմածներից հասկանում էի, թե որ մասն առավել հաջող ու հիշվող է, իսկ որը երեխան բաց թողեց, քանի որ նրան հետաքրքիր չէր:

Այդպես իրար պատմելով հեքիաթն ամբողջացավ. արդեն 12 էջանոց հեքիաթ է:

Երբ հրատարակեմ, անպայման կնշեմ, որ այն ամբողջացրել ենք հենց արցախցի երեխաների հետ:

Տիգրան Մեծ արքայի մասին այս հեքիաթը մի ամբողջ շարքի առաջին մասն է: Հետագայում նաև կլինեն հեքիաթներ Արտավազդ թագավորի, Կիլիկայի և Լոռվա թագավորությունների մասին: Ի դեպ, չեմ հորինում: Թույլտվություն եմ ստացել աշխատել Մատենադարանի ընթերցասրահում, ուսումնասիրում եմ առկա նյութերը:

Սոպեկը խոսում է...

Դպրոցում լավ եմ սովորել, բայց պատմությունը չէի սիրում: Ուսուցիչը միշտ դասից հանում էր ինձ, քանի որ դասարանում կարծիք թելադրող էի և ամբողջ դասարանը հետս սկսում էր չսովորել առարկան: Պատմության ուսուցչին ասում էի՝ ես ձեր պատմածներին չեմ հավատում: Ասում էր՝ «Ըստ Խորենացու...»: Ես էլ ասում էի՝ միգուցե սուտ է գրել Խորենացին: Կատաղում էր:

Ավելի մեծ տարիքում միշտ զարմանում էի, որ ուսուցչի մտքով չէր անցել մեզ թանգարաններ տանել, ցույց տալ օրինակ՝ հին դարերից մեզ եկած մետաղադրամները:

Կամ ինչո՞ւ չէր ասում, որ Խորենացուց բացի այլ պատմիչներ կան, այլ աղբյուրներ կան՝ հունահռոմեական օրինակ, որոնք ուսումնասիրելով, համեմատելով են ստեղծվում դասագրքերը:

Միգուցե, եթե հետաքրքիր ձևով ինձ ներկայացվեր պատմությունը, ես որոշեի այդ ճանապարհով գնալ: Ներկայումս շատ եմ հետաքրքրվում պատմությամբ:

Սկսեցի Կենտրոնական բանկի Այցելուների կենտրոնի նմուշներն ուսումնասիրել: Այնտեղ պահվում են բազմաթիվ մետաղադրամներ, որոնք հատվել են հայոց արքաների, թագուհիների օրոք: Մտածեցի, որ իմ հեքիաթում հենց այդ կոպեկներից մեկը կլինի պատմող հերոսը:

Մետաղադրամը սկսում է խոսել, պատմում է, թե ինչպես են նրան հատել դրամահատարանում, ինչպես է երազել տեսնել Տիգրան արքային, բայց Վաղինակ անունով մի սուրհանդակ վերցրել և գցել է նրան այլ մետաղադրամների հետ մի քսակի մեջ ու ճանապարհ ընկել դեպի Միջերկրական ծով:

Պատմելու ընթացքում երեխաներին հարցնում եմ՝ ինչպե՞ս պիտի Վաղինակը ճանապարհ ընկներ, մեքենա կա՞ր այդ ժամանակ: Պատասխանում են՝ ոոոո՛չ: Հարցնում եմ՝ իսկ ինքնաթի՞ռ, կրկնում են՝ ոոոո՛չ: Հարցնում եմ՝ բա ինչո՞վ պիտի գնար: Պատասխանում են՝ էշոոո՛վ: Շատ եմ սիրում երեխաներին, արցախցի երեխաներին՝ հատկապես: Շատ խորն են, մի տեսակ... մեծ իրենց տարիքից, հասուն, մաքուր ու պինդ:

Հենց պատերազմը վերջանա

Մի քանի անգամ արցախցի երեխաներին տարել եմ մեր մայրաքաղաքում զբոսնելու, ռեստորանում սնվելու: Նախապես պայմանավորվում էի ռեստորանների սեփականատերերի հետ և շատ համեղ, բայց անվճար սնվում էին երեխաները: Որքան էլ սիրուն տեղերում էինք լինում, իրենք իրենց տունն էին երազում՝ Արցախ աշխարհը:

Երեխաներից մեկը՝ Ռոդիոնը, մի անգամ ասաց. «Հենց պատերազմը վերջանա, գնալու եմ մեր տան պատերը պաչպչորեմ»: Այս բառերն ինձ շատ էին հուզել:

Երեխաներին զարմացնում ու նույնիսկ մի քիչ վախեցնում էր Երևանի մեծությունը: Զարմացնում էր մուրացկանների քանակը, քանի որ Արցախում նման բան չկա: Զարմանում էին ծխող և վարորդ կանանց տեսնելով:

«Երևանյան հեքիաթներ» գիրքը՝ հիշատակ

Ամերիկայի Կոլորադո նահանգի հայկական դպրոցը գնեց իմ «Երևանյան հեքիաթներ» գրքերից՝ արցախցի երեխաներին նվիրելու համար: Շնորհիվ այս դպրոցի՝ ես հնարավորություն ստացա երեխաների հետ վերջին հանդիպումներիս ժամանակ գրքեր նվիրել նրանց: Շատ էին ուրախանում: Աչիկները փայլում էին, գրկում էին գիրքը, խոստանում, որ կկարդան ու կգրեն ինձ նամակ Արցախից: Շատ ընտանիքներ վերադարձան Արցախ պատերազմի ավարտից հետո: Ես էլ ուրախ եմ, որ կարողացել եմ մի փոքրիկ, լուսավոր կետ դառնալ երեխաների երևանյան հուշերում և երևանյան հեքիաթ նվիրել նրանց այս ծանր ու դժվար օրերին:

Մարգարիտ Միրզոյան
Արփի Մաղաքյանի արխիվ

«Հովեր» հանրապետություն

Ինչպես Դիլիջանի լավագույն հյուրանոցներից մեկը պապերազմի առաջին իսկ օրերից պատսպարեց Արցախից փեղափոխված քաղաքացիական կանանց ու երեխաների ու վերածվեց մի ամբողջ հանրապետության:

Արցախյան գերակտիվություն

Դիլիջանի Անդրանիկի անվան փողոցի վերջնամասում դեռ երբեք այսքան աղմկոտ չէր եղել: Ընդհանրապես, դիլիջանցիները հայտնի են իրենց խաղաղասեր, հանգիստ, տեղ-տեղ՝ դինջ բնավորությամբ: Խիտ անտառներն ու մաքուր օդն անում են իրենց գործը. մարդիկ այստեղ չեն շտապում, չեն բղավում, համընդհանուր կանաչը հարի կրիշնա է տարածում: Ու նույնիսկ նոր «սիլիկոնային հովիտ», ապա տնտեսական կենտրոն դառնալու հեռանկարը ընդհանուր առմամբ ոչինչ չէր փոխում նրանց կյանքում: Բայց եկան ուրիշ ժամանակներ, ու եկավ պատերազմը: Ու այն հասավ նաև Անդրանիկի փողոցի վերջնամաս, որտեղ բոլորովին վերջերս բացվել էր Դիլիջանի ամենաեվրոպական «Հովեր» հյուրանոցը: Ամեն դետալը մանրակրկիտ գծագրած, ինտերիերի յուրաքանչյուր իր խնամքով ընտրած, տարածքի ծառերն ու ծաղիկները վրաստաններից ու չինաստաններից ներմուծած հյուրանոցի սեփականատերերը բացեցին իրենց դռները Հադրութից, Քարվաճառից, Շուշիից, Ստեփանակերտից եկած արցախցի կանանց ու երեխաների առջև: Բացեցին դռներն ու տարածքը լցվեց Արցախի կոլորիտով: Դիլիջանյան հանգիստը վերածվեց արցախյան գերակտիվության:

Պապում ապրումակցելու մասին

Սա կարող էր լինել մի շատ տխուր պատմություն տեղահանվածների մասին: Բայց դա այդպես չէ: Թեև սա երբեք չի էլ կարելի անվանել ուրախ պատմություն: Հայտնի պատճառներով: Սա պատմություն է ապրումակցման, իրար հետ ընդհանուր լեզու գտնելու և իրար ներելու ու սիրելու մասին: Սկզբում ամեն ինչ այնքան բարդ էր, որ թվում էր անհնար: Պայթող արկերից մի կերպ փրկված ու այստեղ հասած արցախցիներին ամեն ինչ հունից հանում էր: Պատմում են, որ քամին երբ շրխկացնում էր հյուրանոցի դռները, երեխաները վախենում ու թաքնվում էին: Վարազույրի հետևում, սեղանի տակ... Պատմում են, որ օրական երեք-չորս անգամ շտապ օգնության մեքենա էր գալիս հյուրանոց... Պատմում են, որ սկզբում բոլորը բոլորի հետ կռվում էին, ու կռվում ամեն-ամեն ինչի համար... Պատմում են, որ փնտրում էին մեղավոր ու չէին գտնում, ու որ այնտեղ, ուր ոչ ոք մեղավոր չէ, մեղավոր են բոլորը...

Ամեն ինչ հենց այդպես էր, քանի դեռ «Հովեր» հանրապետության նախագահը, նույն ինքը՝ հյուրանոցի տնօրեն Վարուժան Բաբախանյանը բոլորին չհավաքեց բակում: Վարուժանը

↑ «Հովեր» հյուրանոցը վառարան դեղադրեց՝ իսկական ժենգյալով հայ սպանալու համար

→ Արցախցի երեխաները «Հովերում»

հանգիստ, հանդարտ ձայնով, Անգլիայում կրթություն ստացած, երիտասարդ գործարար է, ով Դիլիջանը ծաղկեցնելու (թեև ուղղակի իմաստով այն առանց այդ էլ Հայաստանի ամենականաչ գոտին է) մեծ երազանք ունի: Նա հիմնականում խոսում է արտասահմանյան խոշոր ներդրումներից, գյուղատնտեսության մեջ նանոտեխնոլոգիաների կիրառումից, ու մի քիչ էլ պատմում անգլիական ոսկե երիտասարդությունից:

Վարուժանը խաղաղասեր է, բայց հախուռն արցախցիները նրան էլ ստիպեցին անցնել ռադիկալ մեթոդների: Բակում հյուրանոցի ժողովրդին (իսկ նրանք քիչ չէին՝ 140 հոգի) հավաքեց ու ասաց, որ այսուհետ «պիտի ապրեք հանգիստ, առանց կռիվ-ղալմաղալի, պիտի թիկունքը չմասնատվի, որպեսզի առաջնագիծը պինդ լինի»: Ասաց, որ խաղաղությունն այլընտրանք չունի, ու կյանքի այս ժամանակահատվածը նրանք ստիպված են մոռանալ իրենց անձն ու դառնալ մեկ: Այլապես... այլապես «Հովեր» հանրապետության վիզայից կզրկվեն: Մեթոդն աշխատեց. արդեն հաջորդ օրը հյուրանոցում ավելի լուռ էր, ու միայն երեխաներն էին վազվզում ու արագարագ ինչ-որ բաներ խոսում ոչ այնքան հասկանալի լեզվով: Սակայն այդքանով խնդիրները չավարտվեցին:

Հակահարված ժենգյալով ու փախլավայով

Պատերազմն առաջնագծում օրեցօր խորանում էր, լուրերը բնավ հուսադրող չէին: Կանանցից յուրքանաչյուրն էլ ուներ կռվող զինվոր՝ ամուսին, տղա, սիրած տղա: Ու ամեն հանձնած, գրավյալ դիրքի, ամեն նահանջի հետ օդը հանրապետությունում կանգնում էր, լսվում էին զուսպ լացի ձայներ: Վարուժը գտավ այս խնդրի լուծումը. որպեսզի կանայք անդադար չնեղսրտեն (իսկ ուրիշ ոչինչ չեն կարող անել, ցավոք, քանի որ պատերազմը կանացի դեմք չունի), նրանք սկսեցին անել այն, ինչ ամենից լավ էր ստացվում: Դե, իհարկե, թխել ժենգյալով հաց:

Իրացման հարցերով զբաղվում էին հանգիստը կորցրած դիլիջանցիները: Օրական 500-600 ժենգյալով հաց... Ու հյուրանոց-հանրապետության ամեն բնակիչ ուներ իր խիստ կարևոր պարտականությունը: Երիտասարդ կանայք շրջակայքից հավաքում էին կանաչիների մի մասը, մյուս մասն ամեն օր դիլիջանյան շուկաներից գնում էր (սրբում-բերում) օրվա թարմ կանաչիները, տարիքով կանայք կտրատում էին, երեխաները՝ փոռում չորացնելու: Վարուժը խախտեց իր բարձրակարգ հյուրանոցի ինտերիերի ֆեն-շույն ու տեղադրեց փայտե վառարան, քանի որ իսկական ժենգյալով հացը հնարավոր է ստանալ միայն այդպիսի վառարանով: Ու թիկունքը սկսեց արարել՝ տարածքը լցնելով արցախյան համուհոտով: Դիլիջանա-արցախյան ժենգյալները շատ չանցած հասան նաև Երևան. այդ օրերին բոլոր հայերը կանաչի-հաց էին ուտում:

ժենգյալը լավ շեղեց կանանց իրենց վշտից: Վարուժը բիզնեսմեն է, նա գիտեր, որ աշխատանքի մեջ կորչում են ավելորդ, ոչ կառուցողական էմոցիաներն ու ոչինչ չփոխող զրույցները: Ու երբ կանայք արդեն այնքան լավ էին յուրացրել պրոցեսը, որ էլի ավելորդ ժամանակ հայտնվեց, Վարուժը մտածեց, որ հիմա էլ կարելի է փախլավա թխել: Բայց այս անգամ նա թերագնահատեց երեխաների դերը. սկզբում նրանց վրա դրվեց խմորեղենի ընկույզները ջարդելու գործը, բայց հաշվի չէին առել մի պարզ բան. երեխան ինչքան ջարդում, ճիշտ այդքան էլ ուտում է: Արդյունքում խմորը պատրաստ էր, մեղրը՝ լցրած, իսկ ընկույզը չկար: Ու ստիպված երեխաների դերը հանեցին, ընկույզն էլ սկսեցին գնել մաքրած վիճակում: Փախլավան նույնպես հաղթանակ ունեցավ թիկունքում:

↑ «Հովեր» հյուրանոցի հիմնադիր Վարուժ Բաբախանյանը

Պատերազմից հետո

Իսկ այ առաջնագծի հաղթանակն ուշանում էր: Ընկճված էին բոլորը: Բացի Վարուժից. «Որոշել եմ պատերազմից հետո Շուշիում «Հովեր» բացել, աշխատակիցներ արդեն ունեմ, շատ լավ լեզու ենք գտել, ընկերներիս էլ համոզել եմ ներդրումներ անել: Շուշին չքնաղ բնություն ունի, մեր Դիլիջանի նման...»:

Հետո արդեն եղավ այն, ինչ եղավ, ինչ դեռ երկար չենք մարսի, չենք համակերպվի ու չենք ների ղեկավարությանը, պաշտոնյաներին, ներկաներին, նախկիններին, ինքներս մեզ: Իսկ Շուշիում Վարուժի «Հովեր» հանրապետությունը դեռևս պետք է սպասի իր կառուցապատման շինթույլտվությանը: Հայաստանում «Արցախ» անունով փողոցներ շատ քաղաքներում կան: Երևանում էլ կա, լայն, բանուկ, դեռևս չբացահայտված պոտենցիալով փողոց՝ կիսակառույց (կամ կիսաքանդ՝ հստակ չէ) գործարաններով, արտադրական տարածքներով: Դիլիջանի Արցախի փողոցը «Հովեր» հյուրանոցի Անդրանիկի փողոցի վերևում է՝ սաղարթախիտ անտառ տանող վերջին ուղին: Ու պատմում են, որ զինադադարից հետո, երբ արցախցիները հետ գնացին՝ իրենց հայրենիքի բեկորներն ապրեցնելու, «Հովերի» Վարուժը մտածում է՝ ինչպես անել, որ Դիլիջանի Արցախի փողոցը «լա նդի» չմնա:

Էլեն Բաբայան
«Հովեր» հյուրանոց

Գիրք զինվորին

Հայ զինվորները վերջին ամիսներին անցան այնպիսի ծանր խանապարհ, որի մասին նախկինում կարելի էր կարդալ միայն գեղարվեստական գրքերում: «Գրքեր հայ զինվորներին» նախաձեռնության շնորհիվ այդ ծանր օրերին հիվանդանոցում վերականգնվող տղաները գրքեր և նամակներ էին ստանում աշխարհի տարբեր անկյուններից: ԵՐԵՎԱՆը զրուցել է նախաձեռնության թիմի հետ:

Արցախ, բայց արդեն ձմեռային, լուռ: Ամբողջ Ստեփանակերտում 10-ից 6-ը հոսանքն անջատված էր (խնայողություն): Հիվանդանոցում ոչ wifi կար, ոչ էլ հեռախոսակապ: Դարոնը՝ «Գրքեր հայ զինվորներին» նախաձեռնության կամավորներից մեկը, տեղ հասավ 5:30-ի մոտակայքում: Տղաները շատ ուրախացան՝ տեսնելով նրա բերած գրքերն ու նամակները: Նույնիսկ չսպասեցին, որ հոսանքը գա, մթության մեջ հեռախոսի լուսարձակները ձեռքերում բռնած՝ սկսեցին կարդալ: Փորձում էին գուշակել հեղինակի տարիքն ըստ բովանդակության: Այլևս չէին ձանձրանում:

Միտքը

Միտքը շատ պարզ էր. գրքեր և նամակներ հասցնել հիվանդանոցներում վերականգնվող զինվորներին: Առաջնային գաղափարը սփյուռքահայ Թալին Ասադուրիանինն էր, ով բոլոր հնարավոր տարբերակներով փորձում էր օգտակար լինել ստեղծված իրավիճակում և շատ էր ուզում որևէ կերպ աջակցել հենց հիվանդանոցներում գտնվող զինվորներին, բայց այնպես, որ օգտագործվեին առկա ռեսուրսները:

Նա մտածեց գրքերի մասին: «Հայերը, լինելով կիրթ և գրագետ ժողովուրդ, հաստատ իրենց տանը կունենային որոշ գրքեր, որոնցով կարող էին կիսվել,– ասում է Թալինը,– գրքերը կարծես զրույց լինեն, որի կարիքը զինվորներն այս պահին շատ ունեն»: Նախաձեռնության թիմը հավատում է, որ գրքերն ունեն այս կախարդական ունակությունը՝ մեզ այլ աշխարհներ տեղափոխելու, բայց, միևնույն ժամանակ, սովորեցնում են, թե ինչպես ընդունել և իմաստավորել մեր կյանքի փորձը՝ թե՛ լավը, թե՛ վատը:

Այսպիսով, հոկտեմբերի 20-ին Թալինն իր էջում գրում է, որ նման նախաձեռնության միտք կա, և ցանկացողները կարող են միանալ և օգնել: Ընկերները նրան կապում են Նանոր Բալբաբյանի և Լորի Ալվանդիանի հետ (իրենց դեռ կանդրադառնանք): Լորին իր հերթին կապվում է Արուսիկ Զեյնալյանի հետ, ով էլ տրամադրեց ծրագրի առաջին գրքերն իր նախաձեռնած «Գրադարակ» ծրագրի պահոցներից:

Հետո սկսեցին նամակները գալ՝ աշխարհի տարբեր անկյուններից: Մարդիկ պատմում էին իրենց մասին, կոնտակտային տվյալներ թողնում, որպեսզի այդ կապը չկտրվի:

Ոսկով ամենաթանկը

Նախաձեռնության մեկնարկի պահից մարդիկ միանգամից սկսեցին դիմել: Մի աղջիկ գրեց և ասաց, որ իր տատիկը՝ տիկին Մարին, որն ութսունն անց կին է և իր կյանքի ուղիղ կեսն աշխատել է որպես թարգմանչուհի, ցանկանում է իր անձնական գրադարանից գրքեր նվիրաբերել: Ռուբեն անունով մի տարեց մարդ բազմաթիվ գրքեր ուղարկեց: Առ այսօր ԱՄՆ-ում գրքասերները ևս նամակներ և գրքեր են հավաքագրում և ուղարկում Հայաստան: Երևանի Artbridge սրճարանը դարձել է գրքեր և նամակներ փոխանցելու կայան, իսկ Լոս Անջելեսի լեգենդար Abril Books գրախանութն արշավ էր սկսել՝ նվիրելով մեկ գիրք հանգստյան օրերին վաճառված յուրաքանչյուր գրքի համար: Ի դեպ, Abril Books-ը մինչև հիմա ընդունում և ուղարկում է օվկիանոսի մյուս կողմը գրքեր ու նամակներ, եթե էդ կողմերն եք՝ մի՛ վարանեք:

Նախ և առաջ, մարդիկ նվիրաբերում էին սեփական գրադարաններից առանձնացրած գրքեր: Երբեմն, երբ կոնկրետ գրքեր են խնդրում տղաները, անպայման տեղական գրախանութներից են գնում, որ իրենց էլ օգուտ լինի: Խնդրանքները տարբեր են՝ բիզնես գրքերից մինչև Հարրի Փոթերի մասին գրքեր և բանաստեղծություններ:

Կազմակերպիչները հատկապես փորձում են շատ հավաքել նոր հրատարակություններ: «Վերջերս այնքան շատ ֆանտաստիկ նոր հեղինակներ և թարգմանություններ են հրատարակվում հայերեն,– ասում է Լորին,– մենք իսկապես ցանկանում ենք աջակցել այդ նախաձեռնություններին, ինչպես նաև տեղական գրախանութներին, որոնք վաճառում են դրանք»:

Գիրք բերողները

«Գրքեր հայ զինվորներին» նախաձեռնության թիմի անդամները գտնվում են աշխարհի ամենատարբեր ծայրերում, մեծամասնությունը՝ Հայաստանում և ԱՄՆ-ում: Ի դեպ, կամավորներից շատերը սփյուռքից են և օգնության են հասել Հայաստան պատերազմի ընթացքում և հետո աջակցություն տրամադրելու համար:

«Միասին մենք կարծես ստեղծենք գրքերի փերիների մարդկային շղթա,– պատմում է Լորին,– հավաքագրում, տեղափոխում և առաքում գրքեր ու նամակներ, որտեղ էլ որ դրանք անհրաժեշտ լինեն»: Յուրաքանչյուր մարդ այս շղթայում հավասարապես կարևոր դեր ունի: Գրքերն ու նամակները զինվորներին հասցնող առաջին կամավորներից էր Նանոր Բալբաբյանը, ով Հայաստան էր տեղափոխվել պատերազմից ընդամենը մեկ օր առաջ: Եթե նույնիսկ չեք տեսել, ապա լսել եք իր և իր Քոքո անունով շան մասին (նրան վստահաբար նկատած կլինեք զինվորների հետ լուսանկարներում): Նրանք երկուսով առ այսօր հրաշալի թերապևտիկ աշխատանք են իրականացնում հիվանդանոցներում զինվորների հետ ու նաև արդեն մարզերում երեխաների հետ:

Լորի Ալվանդիանը գրադարանավար է ԱՄՆ-ից, բայց վերջին յոթ տարիներին ապրել է Հայաստանում: Լորին նաև «Փոքր Ազատ Գրադարաններ Հայաստանում» և «Deconstruct the Library» նախաձեռնությունների համահիմնադիրներից է: Նա զբաղվում է նոր գրքերի գնմամբ և հավաքագրմամբ, նվիրատվություններով, աշխարհի տարբեր ծայրերից ստացված զինվորների համար գրված նամակների պատրաստմամբ և տպագրությամբ: Նա նաև կազմակերպում է Հայաստանի կամավորների աշխատանքը:

Թիմը հատուկ խնդրեց նշել բոլորի անունները, քանի որ բազմաթիվ մարդիկ ամեն կերպ օգնել են նախաձեռնությանը. տեղափոխման հարցերով՝ Գևորգ, Էնդի և Մարիան, հիվանդանոցների կամավորական աշխատանքով՝ Վարակ, Դարոն, Լորի, Աննա, Սթեյսի ու ընդհանուր ադմինիստրատիվ հարցերով՝ Տաթևիկ, Արուսիկ, Ինֆա և շատ ու շատ այլ մարդիկ:

Արևմտյան խակատում նորություն չկա

Ծրագրի առաջին շաբաթն էր: Նանորը հանդիպեց Դավիթ անունով մի զինվորի, ով անչափ ուրախացել էր՝ տեսնելով Ռեմարկի «Արևմտյան ճակատում նորություն չկա» գիրքը: Դավիթը պատմեց, որ նախապատրաստական դասընթացների ընթացքում դա իր սիրելի գիրքն է եղել: Ընկերներից մի քանիսին թույլ էր տվել ժամանակավոր վերցնեն, բայց, ի վերջո, կորցրել էր: Այդ գրքի միջոցով փորձում էր պատկերացում կազմել, թե ինչպիսին կարող է լինել պատերազմը:

Այս մասին իմանալուց հետո Թալինը գնեց այդ գրքի անգլերեն տարբերակից մի քանի հատ և բաժանեց իր ընկերներին: Նա պլանավորում է «Գրքեր զինվորների համար» ակումբ ստեղծել և սա կլինի առաջին գիրքը, որը նրանք կքննարկեն: «Նրանց համար, ովքեր առաջնագծից հեռու են, կարևոր է ձեռք բերել որոշակի պատկերացում այն իրականության մասին, որին բախվում են մեր զինվոր եղբայրներն ու քույրերը,– ասում է Թալինը,– եթե դա կարող է օգնել մեզ ավելի սերտորեն կապվել միմյանց հետ, ապա մենք պետք է փորձենք հասկանալ նրանց փորձը, թեկուզև չնչին ձևով»:

Մարգարիտ Միրզոյան
«Գրքեր հայ զինվորներին» նախաձեռնություն

Սրբի Պապերապմ

Պապերապմը դեռ չի ավարտվել: Այն մարդի դաշտից վերադարձել է մեր մեզ և կշարունակի մեկ թուլայնել, քանի դեռ վախենում ենք դիմել օգնության: Պապերապմի օրերին MHS հոգեկան առողջության ծառայությունը նախաձեռնեց նոր ծրագիր, որը հոգեբանական ազակցություն է կրամադրում պապերապմի մասնակիցներին և նրանց ընտանիքների անդամներին: Նաև այսօր իրականացվում է «Դեպի կյանք» նախաձեռնությունը, որն այս կարևոր գործում ներգրավել է ողորի լավագույն մասնագետներին: ԵՐԵՎԱՆը կրուցել է MHS կենտրոնի մասնագետներ Արամ Հովսեփյանի, Մարիամ Բաբայանի և Սոաթև Ռաչպրյանի հետ:

Ծանոթ հատուկ մանկավարժի 2016-ին խնդրել էին մի զինվորի հետ զրուցել: Միակն էր, ով ողջ էր մնացել մի ամբողջ դասակից: Հետո ստիպել էին գնալ ու հատ առ հատ ճանաչել իր ընկերների դիակները: Անհնար է պատկերացնել, թե իր ներսում ինչ էր կատարվում, կամ ոչինչ չէր էլ կատարվում: Տղան հիվանդանոցում միայնակ էր, հարազատները, չգիտես ինչու, չէին եկել իր մոտ: Նրան առաջարկել էին հոգեբանի հետ զրուցել, բայց քաղաքավարի հրաժարվել էր: Մի խոսքով՝ այդ հատուկ մանկավարժ կնոջը խնդրել էին ներկայանալ որպես հրամանատարի քույր ու մի քիչ զրուցել տղայի հետ: Գնաց, զրուցեց, պինդ գրկեց: Պատմում էր, որ տղան դեռ պատրաստ չէր խոսել, ինչը նորմալ է, կամ էլ ամաչում էր, ինչը ևս նորմալ է, բայց մինչև որոշակի պահ: Ասում էր՝ որոշ ժամանակ անց տղան պիտի անպայման խոսի ու մասնագետի մոտ գնա, քանի որ շատ ծանր վիճակում է: Այս դեպքից հետո մտքերով էի ընկել, մտածում էի, որ նույնիսկ եթե պատերազմը կանգ է առնում մարտի դաշտում, շարունակվում է մարդկանց ներսում, քանի դեռ նրանք վախենում են դիմել օգնության՝ մտածելով, թե դա ամոթալի բան է:

Ներքին սահմանները

Պատերազմը խախտեց ոչ միայն Արցախի բնազծերը, այլև մարդկանց ներքին սահմանները: Երկուսն էլ հավասարապես դժվար է վերականգնել: Նույն սահմաններն արդեն իսկ տեղ-տեղ վնասվել ու ավերվել էին Արցախյան ազատամարտի, հետո ավելի խոր մխրճվել 2016-ի Ապրիլյանի հետևանքով: Ամենազարմանալին այն է, որ մինչև այս պատերազմը հետտրավմատիկ սթրեսի բուժումը Հայաստանում իրականացվել էր շատ փոքր ծավալներով և պատճառներից մեկն այն էր, որ չկար մասսայական իրազեկման հնարավորություն, ինչի հետևանքով կարելի է եզրակացնել, որ բազմաթիվ մարդիկ այդպես էլ հնարավորություն չունեցան ստանալ հոգեբանական աջակցություն: Փաստացի խնդրի լուծումը մնաց կիսատ:

Այս տարվա պատերազմի դեպքում պատկերը մի քիչ այլ էր: Հոգեբանական աջակցություն էին առաջարկում թե՛ պետական կառույցները, թե՛ մասնավոր կենտրոնները:

Նոյեմբերի սկզբին MHS հոգեկան առողջության ծառայությունը նախաձեռնեց աջակցման ծրագիր, որը նպատակ ուներ հոգեբանական օգնություն տրամադրել ռազմական գործողությունների արդյունքում տուժած մարդկանց՝ մարտի դաշտից վերադարձած զինծառայողներին և նրանց ընտանիքների անդամներին: Մարտերին զուգահեռ կազմակերպվում և հայթայթվում էին մի շարք կրթական ծրագրեր, որոնք թույլ տվեցին վերապատրաստել մասնագետների հենց հետտրավմատիկ սթրեսի պրոֆիլավորմամբ:

«Հայտարարությունից մի քանի օր անց արդեն դիմողներ եղան,– ասում է Տաթևիկ Խաչատրյանը,– և դրանք միանգամյա այցեր չեն: Մեր նպատակն է հասցնել լիարժեք ռեաբիլիտացիայի և վերադարձի հասարակությանը, այլ ոչ թե ձևի համար մեկական հանդիպում անցկացնել»:

Դիմողները միայն մարտի դաշտից վերադարձած զինծառայողները չեն: Զոհված զինվորների ծնողներն ու հարազատներն են հաճախ գալիս, որպես արդյունք մասնագետները գործունեն ոչ միայն հետտրավմատիկ սթրեսի, այլ նաև կորստի դեպքերի հետ:

Նրբանկատություն ու կարեկցանք

Հետտրավմատիկ սթրեսի առաջին սիմպտոմը որոշակի ֆունկցիաների խանգարումն է կամ վարքի կտրուկ փոփոխությունը: «Խանգարվում է քունը, աշխատունակությունը,

մարդը սկսում է հեռու մնալ հարազատներից և ընկերներից,– մանրամասնում է Տաթևիկ Խաչատրյանը,– հաճախ գնում է գերեզմաններ, ձգտում է հայտնվել այն միջավայրում, որտեղ մարտական գործողություններին մասնակցած մարդիկ են»։

Նաև բնորոշ են կպչուն խանգարող մտքերն ու հիշողությունները, այսպես կոչված՝ ֆլեշբեքերը։ Վատ երազներ, վախ բարձր ձայներից և ուժեղ լուսարձակումներից, ագրեսիայի պոռթկումներ, մտածելակերպի բևեռային փոփոխություններ, գերզգայունություն, ալկոհոլի կամ թմրանյութի չարաշահում։ Բացի այդ, մոտիվացիայի բացակայությունն ու անտարբերությունը, նպատակների բացակայությունն ու նույնիսկ համով սննդից հաճույք չստանալը կարող է հետտրավմատիկ սթրեսի նշան լինել։ Շրջապատի մարդկանցից պահանջվում է միայն նրբանկատ լինել, ուշադիր և հոգատար։

Վերջերս մի ընտանիքի հետ էինք շփվել։ Կանանցից մեկն ամուսնուն էր կորցրել։ Պատմեցին, որ առանց դրա էլ չխոսկան էր, բայց հիմա ընդհանրապես չի խոսում։ Ջրույցի ժամանակ ընտանիքի այլ կանանցից մեկն առանց որևէ հետին մտքի ասաց՝ «ոչինչ, կլացի կհանգստանա, նորից կխոսի»։

Ցավոք, այս իրավիճակում «ցրվի, լացի՝ կանցնի» մոտեցումը չի աշխատի, բայց միևնույն ժամանակ պետք չէ մարդուն զզվացնել։ Պետք է հնարավորության չափով համոզել նրան դիմել մասնագետի, բայց ճնշելը սխալ է։ «Պետք չէ մարդկանց զոռով ստիպել խոսել, եթե նրանք չեն ուզում ու դեռ պատրաստ չեն,– ասում է Մարիամ Բաբայանը,– Չի կարելի մարդուն պարտադրել այն, ինչ նրանք չեն ուզում և հոգեպես պատրաստ չեն անել»։ Շատ մոտեցումներ և ախտանիշներ կան, որոնք առանց կոնտեքստի առանձնացնել հնարավոր չէ, բայց վերոնշյալը հիմնականներն են։

Մյուս կողմից՝ եթե ժամանակին լուծում չտան, խնդիրները կարող են բարդացումներ առաջացնել։ «Ինչքան երկար է պահպանվում այդ վիճակը, այդքան մարդու անձի մեջ խոր փոփոխություններ են առաջանում, որոնք ավելի շատ են սկսում խանգարել ու հետագայում ավելի բարդ է լինում նաև բուժել»,– ասում է Արամ Հովսեփյանը։

Վախենալու բան չկա

Այս պատերազմի դեմքն անորոշությունն էր։ Արամ Հովսեփյանի խոսքով, երբ զինվորը տեսնում է իր հակառակորդին, գիտակցում վտանգը՝ նրա մոտ արթնանում է պայքարելու ֆիզիոլոգիական ռեակցիան, ինչը մոբիլիզացնում է օրգանիզմում որոշակի համակարգեր և օգնում է պայքարել կամ, թեկուզ, փախուստի դիմել։ «Այս պատերազմի ժամանակ մարդիկ ոչ թե գտնվել են մոբիլիզացված պայքարի վիճակում, այլ եղել են անորոշության մեջ,– ասում է Արամ Հովսեփյանը,– Նրանք չեն իմացել՝ որտեղից է գալիս այդ վտանգը և ինչպես պետք է պայքարեն դրա հետ»։

Արդեն պատերազմին հաջորդող օրերին ստեղծվեց «Դեպի կյանք» նախաձեռնությունը, որը նույնպես նպատակ ունի հոգեբանական աջակցություն ցուցաբերել պատերազմի արդյունքում տուժածներին։ Այն կոորդինացվում է «Հայկական հոգեբուժական ասոցիացիայի» կողմից՝ ի դեմս Արամ Հովսեփյանի և ներկայումս իրականացվում է MHS հոգեկան առողջության ծառայության, Ինտոռա հոգեկան առողջության կենտրոնի, Հոգեսոցիալական կարգավորման կենտրոնի։ Արդեն իսկ նախաձեռնությանը դիմել են երեք տասնյակից ավելի մարդ։ Մասնագետները հասցրել են անցկացնել մեկանգամյա թրեյնինգ «Պատերազմի հետևանքով առաջացած հոգեկան ոլորտի խնդիրների հայտնաբերում և վարում» թեմայով Մարտունու բժշկական կենտրոնում և սա դեռ պլանավորված թրեյնինգների շարքի սկիզբն է։ Նախատեսվում է նման թրեյնինգներ անցկացնել 21 մարզային բուժկենտրոններում։

Բացի այդ, կենտրոնը սկսել է համագործակցել Ստեփանակերտի «Ելարան երեխաների զարգացման, ուսուցման եւ սոցիալիզացման կենտրոնի» հետ, որպեսզի աջակցություն տրամադրի նաև պատերազմի արդյունքում տուժած երեխաներին։

Ակնհայտ է, որ մենք գործ ունենք բավական խոր արմատներ գցող խնդրի հետ, որը հաղթահարելու համար գուցե և սերունդներ պիտի անցնեն, եթե լուծումներն ուշանան։

Տաթև Խաչատրյանի խոսքով՝ մարդկանց համար բարդ է առաջին անգամ դիմել մասնագետի, բայց փորձը ցույց է տալիս, որ հետո արդեն իրենք են սպասում հաջորդ հանդիպմանը։

Ծրագիրն ամբողջությամբ անվճար է։ Օգտագործվող մեթոդը՝ կոգնիտիվ վարքաբանական թերապիա։ Ըստ խնդրի բարդության որոշվում է, թե որ տեսակի մասնագետը պետք է աշխատի պացիենտի հետ, հարկ եղած դեպքում նշանակվում է դեղորայքային բուժում։ «Շատ կարևոր է հասկանալ, որ խոսքը գնում է դեղերի թեթև չափաբաժինների մասին, որոնք աջակցող դեր ունեն,– ասում է Մարիամ Բաբայանը,– դրանք չեն հանդիսանում հիմնական բուժում»։

Թիմի խոսքով՝ շատերը խուսափում են դիմել օգնության, քանի որ վախենում են հենց դեղորայքային բուժումից, մինչդեռ այն կախվածություն չի առաջացնում, սեռական ակտիվության և կամ ռեպրոդուկտիվ ֆունկցիայի վրա որևէ կերպ չի ազդում։

Կարևոր է հասկանալ, որ ոչ մի ամոթալի բան չկա մասնագետին դիմելու մեջ։ Բնականաբար պահպանվում է կոնֆիդենցիալությունը։ Բացի այդ, գրանցում կամ հաշվառում գոյություն չունի, դիագնոզ չի դրվում։ Վախենալու ոչինչ չկա։

Մարգարիտ Միրզոյան

Անտեսանելի թիկունք

Բելգիայում սովորող Վիկտորյա Մուրադյանն իր փորձի հիման վրա պատմում է, թե ինչպես Սփյուռքը մի կողմ թողեց ամեն հարց ու համախմբվելով դարձավ Հայաստանի շահերի ներկայացուցիչն ամբողջ աշխարհում, և որ միայն Թանկյանն ու Քարդաշյանը չէին այդ շարժման գլխավոր դեմքերը:

Սեպտեմբերի 27-ին զարթնեցի մորս չարաբաստիկ զանգից. ասաց, որ պատերազմ է սկսվել: Տագնապն ու հարցերը սրտումս գնացի համալսարան, բայց այդ օրը ոչինչ չկարողացա ո՛չ լսել, ո՛չ սովորել: Օրս անցավ սոցիալական մեդիան քրքրելով: Գնացի ընթրիքի՝ որոնելով կարեկցող աչքեր: Սակայն ես՝ քաղաքի երևի միակ հայս, 350 ուսանողից ոչինչ չստացա՝ ոչ մի հայացք, ոչ մի խոսք, ոչ մի կարեկցական վերաբերմունք, որին այդքան հուսառատ սպասում էի. կյանքը Բրյուգեում շարունակվում էր իր բնականոն ռիթմով: Եվրոպայի արևելյան հարևանությունում ծավալվող պատերազմից տեղյակ էին քչերը, դրանով հետաքրքրված՝ գրեթե ոչ ոք: Այդպես սկսվեց անտեսանելի թիկունքի բացահայտման իմ խորդուբորդ ուղին:

↓ Բելգիա-Ֆրանսիա միզպեկական եռանապարհ

***

Պատերազմի առաջին շաբաթվա ընթացքում զբաղված էի բոլոր համալսարանականներին պատերազմի մասին պատմելով՝ տալով տիեզերական մասշտաբի ինֆորմացիա Հայաստանի, Արցախի, մեր հարևանների մասին: Որքան շատ էի ակնկալում շրջապատիս աջակցությունը, այնքան ներսումս ավելի էր խորանում մարդկանցից մեկուսանալու ցանկությունս: Լինելով 350 կրթված, խելացի երիտասարդների՝ ապագա դիվանագետների և քաղաքական գործիչների ամենօրյա միջավայրում՝ երևի երբևէ ինձ այդչափ միայնակ չէի զգացել: Առժամանակյա մեկուսացումս ու շուրջս տիրող անտարբերությունն ինձ դրդեց այլ լուծումներ գտնել պատերազմը, ռազմաճակատում ու Արցախում տեղի ունեցող իրադարձությունները իրական լույսի ներքո, սթափ ու անաչառ

լուսաբանելու համար: Որոշեցի համալսարանում կազմակերպել քննարկում լրագրողների հետ՝ Արցախյան պատերազմի լուսաբանման թեմայով: Երկու օրվա ընթացքում հավաքեցի թիմ, հայ, ադրբեջանցի և միջազգային լրագրողներ: Ոգևորված իմ իսկ գաղափարով՝ գնացի Բրյուսել՝ համահայկական ցույցի: Ետ վերադարձիս ճանապարհին գնացքի մեջ ստացա զանգ համալսարանի ադրբեջանցի շրջանավարտներից, ովքեր խոստացան տապալել միջոցառումը, եթե այն տեղի ունենա: Մի բան հստակ էր. ես ճնշման դիմաց չէի ընկրկելու, բայց ցավոք, նույն վճռականությունը չդրսևորեցին միջոցառմանս հյուրերը. նրանք սկզբունքայնորեն հրաժարվեցին մասնակցությունից՝ արծարծելով ինձ համար այնքան զզվելի «քաղաքական չեզոքություն» եզրույթը: Այդպիսով, միջոցառումը տեղի չունեցավ: Օրեր շարունակ անտեսվածության զգացմանը լրացնելու եկավ հայրենիքից դուրս սեփական ֆիզիկական անվտանգության մասին մտահոգությունը:
Հուսահատությունը և անարդարությունը խեղդում էին, իսկ միայնությունը և հայրենիքից հեռավորությունն ավելի սրացնում պատերազմական օրերի բոլոր ապրումներս: Ի վերջո հասկացա, որ Հայաստանին օգտակար լինելու այլ ձև պետք է գտնեմ: Այդ ժամանակ օնլայն ակտիվության մեծ արտահոսք էր գնում Ֆեյսբուքից դեպի այլ սոցիալական հարթակներ, որտեղ ավելի ակտիվ էր մեր թիրախային լսարանը: Ակտիվացրի թվիթերյան հաշիվս ու սկսեցի զբաղվել օնլայն ակտիվիզմով: Անում էի մի քանի տասնյակ գրառումներ օրվա ընթացքում՝ գրեթե առանց դադարի: Թվիթերյան բանակը, սակայն, արդեն իսկ բավական մեծ էր և ներառում էր հազարավոր սփյուռքահայ օգտատերերի: Ես դարձա այդ բանակի մի մասը, ինչն ինձ օգնեց բացահայտել Հայաստանի Սփյուռքը, և տարբեր երկրներում ապրող իմ հարյուր հազարավոր հայրենակիցներին:

***

Ամեն անգամ, երբ ինձ հարցրել են, թե քանի միլիոն հայ է ապրում Հայաստանում, գրեթե միշտ պատասխանել եմ՝ տասը, երեքը ՀՀ-ում և յոթն աշխարհում, ասես այդ տասը միլիոնը

Օրեր շարունակ անտեսվածության զգացմանը լրացնելու եկավ հայրենիքից դուրս սեփական ֆիզիկական անվտանգության մասին մտահոգությունը

մի կուռ զանգված են: Հիմա հետ հայացք գցելով՝ հասկանում եմ, որ մեր պատկերացումներն ու գաղափարները հայկական Սփյուռքի ահռելի ներուժի մասին իրականում շատ սահմանափակ են և հիմնականում ամփոփված են ամառային տուրիզմի և հեռուստամարաթոնների շրջանակներում: Այդ յոթ միլիոնն իրականում մեր անտեսանելի թիկունքն է: Մենք՝ հայաստանցիներս, հաճախ չենք գիտակցում, որ Սերժ Թանկյանից ու Քիմ Քարդաշյանից բացի Սփյուռքում մեր թիկունքն են պահում նյույորքցի արվեստի քննադատ Հրագը, հայկական խոհանոցի լավագույն ավանդույթների մասին գիրք հեղինակող իրանահայ ամերիկաբնակ Լիանան, կես սևամորթկես հայ ասպիրանտ Գոհարը և Հայաստանի ու Լոս Անջելեսի խաչմերուկում ապրող լրագրող Կարինան, Վարշավայում ապրող կանադահայ Պատրիկը և այլոք: Նրանց աշխատանքը և հայրենիքին աջակցությունը մենք տեսնում ենք հազվադեպ և հիմնականում միայն գումարի տեսքով:
Այն պահին, երբ Հայաստանում մարդիկ դանդաղորեն անցում էին կատարում հանրային հաղթական էյֆորիայից դեպի համազգային հուսահատություն և ատելություն, ես հասկացա՝ լավագույն լուծումն այդ երեք միլիոնից կտրվելն ու յոթ միլիոնին, որոնցից ոչ մեկին իրական կյանքում ցավոք երբեք չեմ հանդիպել, միանալն է:

***

Պատերազմի օրերին և դրանից հետո այդ անտեսանելի թիկունքն օր ու գիշեր զբաղված էր կազմակերպված և անկազմակերպ հայանպաստ աշխատանքով՝ ցույցեր, նամակներ իրենց հյուրընկալ երկրների դիվանագիտական ատյաններին, նախարարություններին, ղեկավարներին, մասնավոր ընկերություններին: Նրանք կազմակերպում էին դրամահավաքներ, բողոքի ակցիաներ, հումանիտար օգնություն, ի վերջո, չէին զլանում ամեն անհատի պատմել պատերազմի ու նրա հետևանքների մասին:

Ֆիզիկապես արտերկրում, բայց հոգեպես հայրենիքում ապրող Սփյուռքի առօրյան Հայաստանն էր՝ իր հոգսերով, հրատապ կարիքներով, վիրավորներով ու հերոսներով: Կոտրված սրտերով բոլորս զարթնում էինք և սկսում մեր գործը՝ ինչպես մեկ մարմին իրար հետ սերտ համագործակցելով ու համաձայնեցնելով մեր քայլերը: Բոլորիս առաքելությունն էր պատասխանատվության ենթարկել միջազգային հարթակներում ադրբեջանական լոբբիի աջակիցներին, բացահայտել կեղծիքը և սուտը, ստիպել միջազգային լրատվականներին լուսաբանել պատերազմը, միջազգային հանրության ուշադրությունը սևեռել Հյուսիսային Կովկասում ծվարած այս փոքր, բայց ամրակուռ ժողովրդի ազգային պայքարին:

Այս օրերին խոսել եմ Սփյուռքի տարբեր ներկայացուցիչների հետ, ինքս եմ մասնակցել մի քանի ցույցերի: Պետք է խոստովանել, որ ճգնաժամային իրավիճակներում արտասահմանում բնակվող բոլորը հայերը դառնում են մի բռունցք: Հասարակական գիտակցությունը և ինքնակազմակերպման հմտություններն անմերժելի են պետական ապարատի անարդյունավետ ղեկավարման պայմաններում:

Խորվաթիայում բնակվող խեցեգործության վարպետ Ալինա Գիշյանը պատմեց ինձ, թե ինչպես է տեղի փոքր 40-50 հոգանոց համայնքը կարողացել մի քանի խորվաթական հեռուստաալիքների եթերում Արցախի մասին պատմել և Զագրեբի կենտրոնական հրապարակներից

↑ Լոս Անջելես

← Սոդերթելիե, Շվեդիա

→ Լյուկեռն, Շվեյցարիա

Նրանցից յուրաքանչյուրը սկսում և ավարտում է իր օրը Հայաստանի համար մի փոքրիկ բան անելով: Նրանցից յուրաքանչյուրը Հայաստանի դեսպանն է աշխարհում

մեկում բողոքի ցույց կազմակերպել օտարազգիների մասնակցությամբ: Մեծ Բրիտանիայի հայկական ինստիտուտի խորհրդական և հոգաբարձու Տատյանա Տեր-Ավետիսյանը պատմեց տեղի հայկական համայնքի ցույցի և մամուլում տպագրած մի քանի հոդվածների մասին: Լեհաստանում Հայ երիտասարդների միության փոխնախագահը՝ Հովհաննես Գևորգյանը, Վարշավայի հայկական համայնքի հետ հսկայական աշխատանք է իրականացրել՝ հավաքելով Լեհաստանի տարբեր քաղաքներից ուղարկված հումանիտար օգնությունը և ուղարկելով Հայաստան: Հումանիտար օգնությունից բացի երիտասարդները կազմակերպել են տեղեկատվական ֆլեշմոբ, որի ընթացքում ուղարկել են հարյուրավոր էլեկտրոնային հաղորդագրություններ միջազգային դեսպանություններին՝ նրանց տեղեկացնելով Ադրբեջանի պատերազմական հանցագործությունների և ագրեսիայի մասին: Նրանցից ոչ մեկը չի աշխատել ՀՀ կառավարության կամ դիվանագիտական ծառայությունների հետ: Նմանօրինակ նախաձեռնությունները բազմաթիվ են՝ ձգվելով Ավստրալիայից մինչև Լոս Անջելես: Ինչպես ԱՄՆ նախկին նախագահ Օբաման էր ասում՝ «Փոփոխությունները տեղի են ունենում, քանի որ հասարակ մարդիկ անում են արտասովոր բաներ»:

***

Ցավոք, Հայաստանում քչերն են տեղյակ մեր անտեսանելի թիկունքի կազմակերպած այս մեծ ու փոքր միջոցառումներից: Երբ պատերազմի օրերին բացում էի Ֆեյսբուքը և Թվիթերը, հասկանում էի, որ գոյություն ունեն Արցախյան պատերազմի ընկալման երկու բացարձակ տարբեր աշխարհներ, որոնցից մեկում տիրում էր ատելությունը, մյուսում՝ սերն ու համախմբվածությունը: Վերջինս հատկապես բնորոշում էր սփյուռքահայ օնլայն համայնքը:

Այս թիկունքը մեր փոքրիկ ընտանիքն էր՝ հայրենիքից հեռու. մենք սովորում էինք իրարից ու աջակցում իրար, երբ մեզնից որևէ մեկը ընկնում էր հուսահատության գիրկը: Պատերազմական ծանր գիշերներից մեկից հետո, երբ սպասելիորեն հուսահատության ճահճում հայտնվեցի նաև ես, հենց այս թիկունքի աջակցությունը, ջերմ ու հոգատար խոսքերն ինձ հետ բերեցին իրականություն:

Գուցե այդ մարդիկ տարբերվում են մեզնից՝ հայաստանցիներից, իրենց ճակատագրով, քաղաքական նախընտրություններով կամ ապագայի տեսլականով, սակայն նրանց բոլորին միավորում է մի մեծ ցանկություն՝ տեսնել հայրենիքը հզոր, անկախ և ինքնաբավ: Եվ նրանցից յուրաքանչյուրը սկսում և ավարտում է իր օրը Հայաստանի համար մի փոքրիկ բան անելով: Նրանցից յուրաքանչյուրը Հայաստանի դեսպանն է աշխարհում: Ու այս թիկունքում շատերն են այսօր մտորում Հայաստան վերադառնալու, իրենց ընտանիքի կամ սիրելիների հետ տեղափոխվելու ու կյանքը հետպատերազմյան հայրենիքում կառուցելու մասին: Ավստրալահայերից մեկը՝ Վաչեն, մի քանի օր առաջ աշխատանքից ազատվելու դիմում գրեց: Որոշել է թողնել իր կարիերան, բարձր վարձատրվող աշխատանքը, ավստրալական տնտեսաքաղաքական կայունությունը, կորոնավիրուսից ազատ ապրելու հանգստությունը և տեղափոխվել Երևան՝ այն հետպատերազմական քաոտիկ միջավայրը, որն այս պահին ունենք: Վահեն մեկն է այն խիզախներից, ովքեր ուժ ու տոկունություն ունեցան նայել վտանգի աչքերին, ու հայրենադարձության որոշում կայացնել:

Սակայն հայրենադարձությունը ոչ մեկին հեշտ չի տրվում: Սակրամենտոյում բնակվող հայուհիներից մեկն ասաց, որ ցանկանում են կնոջ հետ տեղափոխվել Հայաստան և իրենց մասնագիտական ներդրումն ունենալ հայրենիքի վերակառուցման գործում: Սակայն միաժամանակ խոստովանեց, որ վախեր ունի, քանի որ չգիտի, թե հայրենակիցներն իրեն և օտարերկրացու հետ իր ամուսնությանն ինչպես կվերաբերեն:

Բազմաթիվ երիտասարդներ դիմում են մեզ՝ հայաստանցիներիս՝ հարցնելով, թե ինչպես կարող են որևէ օգուտ տալ երկրին, ինչի՞ կարիք մենք ունենք, ինչպե՞ս կարող են որևէ ներդրում ունենալ Հայաստանի զարգացման գործում: Նրանցից շատերին այլևս չի բավարարում բանկային փոխանցումներ կատարելը, որոնք նույնպես ծայրահեղ անհրաժեշտ և կարևոր են: Ցավոք, Հայաստանի և Սփյուռքի կապի կազմակերպումը և ղեկավարումը պետական մակարդակում այդքան էլ արդյունավետ չէ: Վերջին տարիներին առավել ևս հասարակ քաղաքացիներն իրենց ուսերին են վերցրել միջնորդական այդ առաքելությունը:

Մենք Հայաստանում հաճախ ենք խոսում մեծամասշտաբ հայրենադարձության մասին, ակնկալում, որ սփյուռքահայերը հեշտությամբ կթողնեն իրենց հիմնականում խաղաղ, անվտանգ, ազատ միջավայրը և կտեղափոխվեն մի երկիր, որտեղ անհատը շարունակաբար ենթարկվում է տարբեր ցնցումների՝ անձնական և հասարակական մակարդակներում: Անձը, որը չի ծնվել այն երկրում, որը կոչում է հայրենիք, շատ ավելի դժվարին փուլերի միջով է անցնում հայրենադարձության ճանապարհին: Մենք, որպես հասարակություն, կարող ենք թեթևացնել նրանց բեռը՝ լինելով ավելի բաց և հյուրընկալ, հանդուրժող և համբերատար: Գուցե այդ ժամանակ թիկունքը և ճակատը վերջապես կմիավորվեն անկախ և ինքնիշխան պետություն կառուցելու կարևոր առաքելության շուրջ:

Վիկտորյա Մուրադյան

«Ռապմաեռակայրին մոր թեպ շայր ասվելի կոմֆորտի մեզ էիր զգում»

Լուսանկարիչ Արեգ Բալայանն ու լրագրող Կարեն Ավետիսյանը մի քանի անգամ միասին եղել են պատերազմող Արցախում՝ վավերագրելու և լուսաբանելու կատարվողը: ԵՐԵՎԱՆի խնդրանքով նրանք մի անգամ էլ հանդիպեցին արդեն Երևանում, որպեսզի զրուցեն թիկունքի ու ճակատի, Արցախի ու Հայաստանի միջև անդունդի, անցյալի ու ապագայի մասին:

→ Ռմբակոծված դպրոցի պատը, Ստեփանակերտ

ԹԻԿՈՒՆՔ, ԹԵ՞ ԱՌԱՋՆԱԳԻԾ

Կարեն. Պատերազմի օրերին շատերը պիտի ընտրություն անեին՝ գնալ ու կռվել որպես զինվո՞ր, թե՞ մնալ թիկունքում, որը էլի կռվի մի ձև էր: Դու էդ իմաստով շատ վառ օրինակ ես, որովհետև 2016 թվին գնացել ես որպես զինվոր առաջնագիծ, իսկ էս անգամ թիկունքային գործունեություն ես վարել: Շատ մարդ էդ կամուկացն ա ունեցել՝ թիկունք, թե՞ առաջնագիծ: Քո ներսում էդ հարցը եղել ա՞:

Արեգ. Էս անգամ ես առաջնագծում չեմ եղել, բայց եթե նյութականացնենք արածս, էս անգամ ավելի մեծ էր: Բայց էդ էլ խաբուսիկ ա: 16 թվին ես պոստում եմ եղել մենակ ու էդ փոքր միջավայրը շուրջս փոխել եմ: Էդ զինվորները ուրիշ տեսակի վերաբերմունք են տեսել իմ շնորհիվ, ու էդ շատ կարևոր էր ինձ համար: Նաև հետո եմ ՄՈԲ ֆոտոպատմությունով մեծ ազդեցություն ունեցել՝ դրսերում ցուցադրվել ա, մրցույթ ա հաղթել, խոսվել ա Ղարաբաղի մասին դրա շնորհիվ: Բայց պատերազմի արդյունքը պարտությունը կամ հաղթանակն են, ուրեմն էդ ամեն ինչ կապ չուներ: Ու ոչինչ չէր փոխվի՝ անկախ նրանից, թե ես էս անգամ էլ կգնայի պոստում կռվելո՞ւ, թե՞ նախորդ անգամվա պես ֆոտո կանեի, թե՞ շտապ օգնության ավտո կքշեի:
Բայց լավ, էս անգամ մտքովս չէր անցնում գնալ սահման որպես զինվոր, որովհետև տղեքը ինձնից լավ գիտեն էդ գործը, իսկ իմ ֆունկցիան պիտի լինի վավերագրելը: 16 թվին էլ ասեցի՝ հարց չկա, բայց թողեք կամերա վերցնեմ հետս:

Կարեն. Ինչն ա, որ կուզեիր նկարել, բայց չես կարողացել:

Արեգ. Բժիշկները: Բժիշկների գործը պետք ա ցուցադրվեր: Մարդիկ անմարդկային պայմաններում հիսուն օր քսանչորս ժամ մարդ են փրկել: Մեզ չէին թողնում նկարել իրանց գործը: Ու մենակ էդ չէ: Մենք էսօր ունենք Ղարաբաղի պատերազմի քսան տոկոսը վավերագրած: Ինչի՝ չգիտեմ:

Կարեն. Մարդիկ կան, ովքեր իրոք որպես առաքելություն, որպես իրանց մասնակցություն ակտիվ զբաղվել են թիկունքում, չգիտեմ՝ օգնություն հավաքելուց մինչև թվիթերում կիբեր-պատերազմ մղելը, բայց հաստատ կան շատերը, ում համար դա ինքնաարդարացման միջոց էր:

← «Հայաստան, միասին, ազատություն». 1992 թվականի պաստառը Ստեփանակերտում

Արեգ. Նաև կային ավելի խելոք, կամ ավելի տեղեկացված մարդիկ, ովքեր չէին ուզում ուղղակի փուռը գնային առաջնագծում:

ԱՄԵՆ ԻՆՉ ԿԼԱՆՈՂ ԱՆԴՈՒՆԴԸ

Կարեն. Արի համեմատենք երկու թիկունքները: Երևանում ամեն ինչ ավելի էյֆորիկ էր: Նաև լրատվությունը, որ պրոպագանդայից տրվում էր՝ վատի կամ լավի համար չեմ ասում, թող լինի պաշտոնական տեղեկություն... Նենց տպավորություն էր, որ դա արվում էր մենակ Հայաստանի Հանրապետության համար: Արցախում կամ չէին լսում, կամ լսում էին ու բանատեղ չէին դնում, կամ Արցախում գտնվելն արդեն քո համար ավելի շատ էր, քան պաշտոնական տեղեկատվությունը: Չգիտեմ՝ էդ զուգահեռ իրականություններ ունենալը մեր հերթական պռավալն է՞ր, թե՞ բնական ա, երբ էպիկենտրոնում իրականությունը տարբերվում է հեռվից: Բայց էն անդունդը, որը կար հայաստանցի-ղարաբաղցի հարաբերությունների մեջ, ու որը պատերազմը շանս ուներ պակասացնելու ու թվում էր՝ արդեն բան չի մնացել, դա էլ էր խաբկանք ու իմ կարծիքով, անդունդը եթե չխորացավ, ապա մնաց նույնը...

Արեգ. Խորացավ, ու ավելի վատացավ, քան եղել ա Մարտակերտը հանձնելուց հետո էն թվերին:

Կարեն. Հայաստանում եղել ա տպավորություն, որ ամեն ինչ արվում ա միայն ու միայն Արցախի համար, ու էդ եղել ա նաև իրականություն, իսկ Արցախում եղել ա տպավորություն, թե՞ բա ուր ա էդ երկրորդ գիծը, բան չի հասնում, ուր են:

Արեգ. Ինչի՞ չմտավ Զանգեզուրի զորքը, Հայաստանից ինչի չբերեցին ռեզերվային խմբեր, տեխնիկա և այլն:

ՄԵԶ ՉԷԻՆ ԹՈՂՆՈՒՄ ՆԿԱՐԵԼ ԻՐԱՆՑ ԳՈՐԾԸ: ՈՒ ՄԵՆԱԿ ԷԴ ՉԷ: ՄԵՆՔ ԷՍՕՐ ՈՒՆԵՆՔ ՂԱՐԱԲԱՂԻ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՔՍԱՆ ՏՈԿՈՍԸ ՎԱՎԵՐԱԳՐԱԾ: ԻՆՉԻ՝ ՉԳԻՏԵՄ

→ *I Recognize Artsakh. փսվերագրող Անգելա Ֆրանգյանը, Կարեն Անվերդիսյանն ու Արեգ Բալայանը*

↑ *Բժիշկ կամավորը հանգստի րոպեին, Ստեփանակերտի բժշկական կենտրոն*

Կարեն. Եղել ա տպավորություն, որ Հայաստանում ամեն ինչ իբր հավաքում են, բա ինչի՞ տեղ չի հասնում: Մի կողմից իրոք՝ Հայաստանից հավաքվում ու ուղարկվում էր, դա իրականություն էր, բայց նաև իրականություն էր հակառակը, որ ամեն ինչ չէր տեղ հասնում: Որովհետև ստեղից իհարկե գնում էր, բայց շատ հաճախ առաջնագիծ ուղղակի չէր հասնում: Այսինքն էդ անդունդը համարյա բառի բուն իմաստով անդունդ էր, որտեղ կորում էր թիկունքի ահռելի աշխատանքը: Դավաճանության, թե բարդակի, թե թալանի արդյունքում՝ էդ ուրիշ հարց ա: Ու հետաքննությունը ոչինչ չի պարզի, իսկ անդունդը կմնա:

← Շուշի

Արեգ. Լիքը մարդ կար Հայաստանից՝ մոբը, կամավորները: Ապրանք էր գալիս լիքը: Ընկերս երեք օրը մեկ շտապ օգնության մեքենայով մի ավտո գռուզ էր ուղարկում: Քննարկում էինք ոնց փաթեթավորենք, որ հարմար լինի: Պահ կար, որ Ստեփանակերտում ոչինչ չկար ու սիգարետից մինչև շան ու կատվի կեր Երևանից էր գալիս: Ուղղակի շատ բան չէր հասնում պոստերին, որովհետև արդեն տեղում վախենալու էր՝ կարող ա աչքիդ առաջ դրոնով խփեին դիմացի ավտոյին ու դու ուղղակի կարող ա չկարողանաս քեզ համոզես գնաս էդ նույն ճանապարհով: Հետո, ինչպես միշտ, ոչ մեկի մտքով չէր անցել մարդավարի կազմակերպել օգնության հանձնումը, խեղճուկրակ տատիկները պիտի տնից դուրս գային, հասնեին իրանց օգնությունը ստանալու, փոխանակ մարդավարի տեղ հասցվեր: Համակարգի բացակայությունն էր, որ ստեղծում էր տպավորությունը, որ ոչինչ չի արվում:

ԻՆՔՆԱԽԱԲԵՈՒԹՅՈՒՆ

Կարեն. Բայց էն էլ ասեմ, որ չնայած ահռելի բան էր արվում, բայց ես հենց գալիս էի Արցախից, աչքերիս չէի հավատում՝ կաֆեներում հանգիստ նստած, մոլեր գնացող մարդիկ: Էդ էդքան էլ նման չէր ռազմական դրության մեջ ապրող հասարակության: Կոնտրաստը էն կողմի հետ անհավատալի էր: Ստեղ խաբկանքն էր ավելի շատ: Ու տարօրինակ կերպով ռազմաճակատին մոտ քեզ շատ ավելի կոմֆորտի մեջ էիր զգում՝ հաշվի առնելով, որ կենցաղային առումով ամեն ինչ դիսկոմֆորտ ա:
Ուղղակի ընդեղ լինելով՝ դու կիսում ես իրականությունը՝ վտանգը, օգնությունը: Չես կրակում, բայց մեջն ես, ապրումակցում ես:

Արեգ. Դու կաս: Ոչ թե նայում ես, թե ինչ ա կատարվում, այլ մեջն ես, դու ես կատարվում: Իմ կարծիքով, ստեղ լիքը մարդ չէր կատարվում, մենակ նայում էր: Ու համոզում էր ինքն իրան, որ քանի սահմանի տղեքը սահմանում կանգնած են, սաղ թույն ա, ոչինչ, որ ցեխի մեջ են քնում ու կիսասոված են: Ինքնախաբեություն:

→ Ղազանչեցոցը՝ կրկնակի ռմբակոծությունից հետո

Կարեն. Իսկ ինչ ես կարծում, էս մեր խաբվելը, էդ մենակ պրոպագանդայի արդյունք էր, թե՞ նաև ներսից եկող բան ա։

Արեգ. Հաստատ ներսից, դու ուզում ես քեզ խաբես, որովհետև եթե չանես էդ ու նայես իրականությանը, կխելագարվես։ Ամսի 9-ից հետո փուչիկը տրաքեց, մենք մանթո նստեցինք, իսկ ճակատի խնդիրները չեն լուծվել, զերիները հետ չեն եկել, դիակները փտում են, քաղաքներում լույս ու գազ չկա, մարդիկ տներ չունեն*։ Խնդիրները լիքն են, բայց թիկունքը մի տեսակ կանգնեց, ոնց որ պատերազմը վերջացել ա։ Բայց իրականում էդ մենակ առաջին փուլն էր, երկրորդը փուլը նոր ա սկսվել ու շատ ավելի բարդ ա։

*Զրույցը տեղի է ունեցել դեկտեմբերի սկզբին

→ Սպեփանակերտ

↑ Կարեն Ավետիսյան և Արեգ Բաղայան. սպվերային սելֆի Արցախում

→ Սպեփանակերտ, ռմբակոծումից հետո

ՈՒՂՂԱԿԻ ԸՆԴԵՂ ԼԻՆԵԼՈՎ՝ ԴՈՒ ԿԻՍՈՒՄ ԵՍ ԻՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ՝ ՎՏԱՆԳԸ, ՕԳՆՈՒԹՅՈՒՆԸ։ ՉԵՍ ԿՐԱԿՈՒՄ, ԲԱՅՑ ՄԵՋՆ ԵՍ, ԱՊՐՈՒՄԱԿՑՈՒՄ ԵՍ

ԿԻՍԵԼ ՈՉ ՄԻԱՅՆ ՀԱՂԹԱՆԱԿԸ

Կարեն. Տպավորություն կա հիմա, որ մինչև ամսի 9-ը միասնական էինք զուտ հաղթանակի համար։ Հետո պարզվեց հաղթանակ չկա, բայց արդեն շատ քչերն են իրանց ճղում։ Համ էլ մեղավոր կա, ասում են՝ դե ես ամեն ինչ արեցի, իսկ Նիկոլը սաղ հանձնեց, ես էլ գործ չունեմ։ Բայց բարեբախտաբար, կան էլի մարդիկ, որ հիմա գուցե առավել ևս են ջանքեր գործադրում։ Էդ ոգևորիչ ա։

Արեգ. Աղջկա թեմա էր։ Ընգերոջս ընգերն էր՝ ինչ-որ հիմարություն էր արել ու հայտնվել էր քաքի մեջ։ Մի քյարթ բոլոլա՛, խառնվում են իրար սաղ ու, մի խոսքով, էդ տղուն վերջին ձևերով փչացնում են։ Բայց իրա ընգերը մինչև վերջ մնաց կողքը, իրա հետ փչացավ, կիսեց էդ պռակոլը։ Հիմա մենք պիտի մեր վրա վերցնենք էս փչացնելը ու կիսենք կերած քաքը։ Էդ քո ասածն ա՝ հաղթանակի համար հեշտ ա կողքը լինելը, կարա՞ս՝ քաք ուտելուց էդի ընդեղ։ Պարզ ա, բարդ պատմություն ա, մի հատ աղջկա մասին բոլոլա չի, շերտերը շատ են, պատասխանատվությունը տարբեր կարող ա լինի, բայց մեկ ա՝ մարդա իրա չափով պիտի կիսի։ Մենք ուղղակի սովոր չենք դրան։ Համակարգն ամեն ինչ արել ա երկար տարիներ, որ մարդիկ պատասխանատվություն չկրեն արածների ու չարածների համար։

ՀԵՌ ԲԵՐԵԼ, ԹԵ ՀԵՌ ՉԲԵՐԵԼ

Կարեն. Հետաքրքիր ա՝ դու տղայիդ հետ տարիներ անց ալբոմ ես թերթում, մեջը տեսնում ես, ասենք՝ Շուշիի նկարներ։ Հիմա, Շուշին Անիի պես սուբյեկտ ա դարձել, որ զուտ պատմության կտոր ա ու, ասենք, բացի ինչ-որ շատ ռադիկալ մարդկանցից, ոչ մեկ չի ասում՝ հեսա գնանք հետ բերենք։ Տեսնց, թե՞ ասելու ես՝ տղա ջան, դու պիտի մեծանաս ու գնանք հետ բերենք Շուշին։

Արեգ. Ենթադրում եմ, որ չեմ ասի՝ հետ բերենք, բայց պատրաստելու եմ նրան, որ եթե իր մեջ ցանկություն առաջանա հետ բերելու, ինքը պատրաստ լինի հետ բերելու։ Կոպիտ ասած, կսովորացնեմ կրակել, բայց չեմ ասի՝ պիտի թուրք սպանես, կսովորացնեմ դիմանալ, բայց չեմ ասի, որ պատերազմի համար ա։ Մտածել, ուշադիր լինել կյանքում՝ եթե էդ ամեն ինչ իմանա, կկարողանա դա կիրառել էն պահին, երբ պետք գա։ Գուցե պետք գա Շուշին հետ բերելու ժամանակ։ Բայց ամեն դեպքում, չեմ ուզում պատրաստել իրան մի հատ սցենարի, որի չստացվելու դեպքում ինքն ավելի դժբախտ կլինի։

Կարեն. Արդյո՞ք չի ստացվում՝ մի դեպքում՝ էլի մտնել էս անվերջ ցիկլի մեջ, մյուս կողմից՝ համակերպվել։

Արեգ. Դե ուղղակի հիմիկվանից դժվար ա ասել, թե ինչ ա լինելու։ Ինչի՞ հիմիկվանից թունավորեմ։ Հետո գիտես, մենք սիրում ենք հերոսականի ժամանակ պատմել մենակ սիրուն մասերը՝ կգնա՛ս, կազատագրե՛ս, պապերիդ հողե՛ր։ Բայց չենք ասում, որ քո հետևից հաստատ թալանչիների խումբ կգա, որոնք մի հատ քո տունը կթալանեն, հետո կփորձեն թուրքերինը թալանել, դու կկռվես, իսկ իրանք գերիներին կփոթեն ու հետո հետ կգան որպես հերոս։ Մեկ ա՝ ինչքան էլ պատերազմին փորձես պատրաստես, չես կարողանալու։

ՃԱՆԱՉԵՆՔ ԶՄԻՄԵԱՆՍ

Կարեն. Մեր զորամասում կային տղեք, որ կյանքում Երևանում չէին եղել։ Կամ մի երկու անգամ էին եղել ու գիտեին Զրաշխարհն ու Հրապարակը։ Իսկ Երևանում տոննաներով մարդ կա, որ Արցախը չի պատկերացնում ինչ ա՝ բացի Ղազանչեցոցից, զոնտիկներից ու Գանձասարից։ Հիմա ինձ թվում ա՝ քանի որ մենք ինքներս էդքան հետ ենք մնացել ինքնաճանաչողության դասից, էս ամեն ինչ նաև դրա արդյունքն ա երևի։ Մենք չգիտենք Արցախը, բայց աշխարհից պահանջում ենք ճանաչել Արցախը։

→ Հերթական գիշերն ապաստարանում

ԵՍ ՀԵՆՑ ԵՐԵՎԱՆՈՒՄ ԼՍՈՒՄ ԷԻ ՄԵԿԸ ՎԱՏ ԲԱՆԵՐ ԷՐ ԱՍՈՒՄ ՂԱՐԱԲԱՂՑԻՆԵՐԻ ՄԱՍԻՆ, ՎԶԱԿՈԹԻՑ ԲՌՆՈՒՄ ԷԻ, ՀԵՏՍ ՏԱՆՈՒՄ ԷԻ ՂԱՐԱԲԱՂ

→ Շուշիի երեխաները

Արեգը. Մյուս կողմից էլ արցախցիներից շատերը չեն պատկերացնում՝ ինչ կա Հայաստանում։ Ասում են Մայր Հայաստանը, բայց մորը չեն ճանաչում։
Ընկերներիցս մեկը երեկ հուզված գրել ա՝ էս երեխեքին պետք ա հայրենասիրություն սովորացնել։ Ասում եմ՝ այ ցավդ տանեմ, հայրենասիրությունը չեն սովորացնում։ Ուղղակի ինձ ծանոթացրել են Հայաստանի հետ։ Փոքր ժամանակվանից ճամփորդել ենք Հայաստանով, մոտիկից տեսել ենք, արշավներ, բաներ։ 88 թվին հետները գնում էի պիկետների։ Ճամբարներ էինք մեր համար կազմակերպում, աղբյուրներ էինք սարքում՝ լուրջ գործ էր, եկեղեցիների տարածքներն էինք մաքրում։ Ապրում էինք հայրենիքի հետ, ու տենց սիրում էինք հայրենիքը։ Էդ անտերը դասընթաց չէր։
Ես հենց Երևանում լսում էի մեկը վատ բաներ էր ասում ղարաբաղցիների մասին, վզակոթից բռնում էի, հետս տանում էի Ղարաբաղ, մեր տուն էի տանում, անծանոթ մարդկանց մոտ էինք մտնում։ Հետո չոքերը թուլացած հետ էին գալիս։ Ու էդ պիտի երկկողմանի դառնա, պիտի մենք ճանաչենք իրար։

ԻՆՉ ՍՈՎՈՐԵԼ ՊԱՐՏՈՒԹՅՈՒՆԻՑ

Կարեն. Կա կարծիք, որ առաջին պատերազմում մենք հողի իմաստով հաղթեցինք, բայց ահռելի մեծ գին վճարեցինք դրա համար։ Ու ստացվեց, որ հարաբերական հաղթանակ էր։ Ու մտածում եմ՝ կարող ա՞ եթե խելոք լինենք, դասեր քաղենք, ապագայի ճիշտ վեկտոր ընտրենք,

← Սշակույթի պալատը ռմբակոծությունից հետո

էս պարտությունն էլ իր հերթին դառնա հարաբերական պարտություն։ Ու կարող ա՞ էդ դեպքում պետք չի ընդհանրապես կենտրոնանալ հաղթել/պարտվել կատեգորիաների վրա։

Արեգ. Հաստատ։ Էսօրվա մեր կենսագործունեությունը չպիտի բխի պարտվողի դիրքից։ Պիտի բխի կյանքի դիրքից։ Մարդու կյանքի, ընտանիքի կյանքի, երկրի կյանքի։

Կարեն. Ապրես, որովհետև 90-ականներին մենք հաղթողի դիրքից սկսել ենք մեծ-մեծ փոթել, թե մենք հաղթող ենք, դիմացինը էշ ա, մենք վերջն ենք, ու տենց ձախողել ենք։

Արեգ. Ուղղակի չեմ պատկերացնում, թե ոնց պիտի էս միտքը հասցվի տեղ։

Կարեն. Բայց ցավալի պարտությունը լավ դասատու ա, չէ՞։

Արեգ. Դե օրինակ էն ժամանակ, եթե ասեիր՝ էս պատից խփած առաջին պատերազմի հերոսների ֆոտոները հանեք, որովհետև երեսունից չորսն են իրական հերոս, իսկ մնացածը զող-ավազակներ են, քեզ կգային կգբից կտանեին, կծեծեին։ Իսկ հիմա էդ բաների մասին վերջապես կարելի ա խոսալ, կարելի ա առաջարկել սթափ դատել։ Որովհետև հիմա էլ չեն կարողանա լղոզել հաղթանակներով։ Լինում ա, որ պետք ա անցնես պիզդեցի միջով, որ լավը դառնաս։

→ Ղալամնչեչոյ, Շուշի



→ Արեգ Բալայանի բրոշիկները նկարվեցին ռումբերից շատերի վրա

← Մեղահանվող շատ արցախցիներ այրում են իրենց տները

ԹԱՔԻ ԽԱՂԱՂՈՒԹՅՈՒՆ ԸԼՆԻ

Կարեն. Շատ տարածված վեճ էր, որ մեկը ստեղ խաղաղության մասին բան էր ասում կես բերան, թռնում էինք դեմքին, թե բա՝ քեզ հեշտ ա տաք տեղից խոսալ, փորձվի ղարաբաղցուն տենց բան ասես։ Իբր՝ ղարաբաղցին միշտ պատրաստ էր կռվելուն։ Կամ հակառակը՝ ստեղից ռազմատենչ խոսք էր լսվում, ասում էին՝ բայց կռվողը դու չես, ղարաբաղցին ա։

Արեգ. Էնքան եմ լսել Ղարաբաղում թաքի խաղաղություն ընկնի։ Ոչ բոլորն իհարկե, բայց սովորական ժողովուրդը, որ այգի ու կով ա պահում, էդ մարդկանց համար խաղաղ կյանքն էր պետք։ Հայաստանում թվում ա, թե Ղարաբաղն ամբողջությամբ ֆրոնտ ա։ Բայց Ղարաբաղը ներսում գիտակցություն ունի առանձին պետության, որտեղ կա թիկունք, ֆրոնտ, մայրաքաղաք։ Նենց չի, որ Ղարաբաղը Սյունիք ա։ Սյունիքում որ ասում ես մայրաքաղաք, Երևանն են պատկերացնում։ Արցախում կառավարությունը ոչ թե Նիկոլն ա, այլ Արայիկը։ Ոնց որ Ղարաբաղը Հայաստանից էլ անկախ լինի։ Յանի։ Էդ խոհմ ա, որովհետև անձնագիրը նույնն ա, բյուջեն ստեղից ա, բանակը ստեղից էր և այլն։

Կարեն. Բայց էս նոր քարտեզով թիկունքն ու առաջնագիծը մի քիչ խառնվեցին իրար։

Արեգ. Դե հիմա մայրուղին ա դարձել առաջնագիծ։ Ցանկացած քաղաքացիական մարդ արդեն առաջնագծով ա գնում-գալիս։

Կարեն. Սաղս հելանք մայրուղի։

Արեգ. Սա ողբերգություն ա, բայց չպիտի մնա էդ կերպարում, պիտի արագ – կամ դանդաղ, ոնց կարողանանք – հասկանանք ու անցնենք առաջ։ Ամեն դեպքում՝ լիքը մարդ կա, լիքը միտք կա, լիքը գործ կա ու նաև անելու ցանկություն կա։ Հլը կանք, չենք պրծել, մի քիչ էլ հող կա։

Արեգ Դալֆյան
Արեգ Բալայան

Շուշին ջարդերից հետո, 1920 թ.

Շուշիի նախորդ կորուստը տեղի էր ունեցել 100 տարի առաջ: 1920 թվականի մարտի 22-ից 26-ը Շուշիում տեղի ունեցավ քաղաքի հայ ազգաբնակչության կոտորած, տեղահանություն, գույքի և անձնական ունեցվածքի ոչնչացում և թալան՝ իրագործված Թուրքիայի Հանրապետության բանակի, նրա կողմից աջակցություն ստացող Արցախում բնակվող թաթարների և քրդական առանձին խմբավորումների կողմից: Արցախի հայերի քաղաքական, տնտեսական, մշակութային կենտրոնը հայաթափվեց և ոչնչացվեց, ավելի քան 20.000 հայ սպանվեց: Շուշիի հայկական թաղամասը գրեթե ամբողջությամբ հրկիզվեց, այրվեցին բնակելի տներն ու հասարակական շինությունները: Ջարդերից փրկված շուրջ 25 հազար մարդ ապաստան գտավ Վարանդայի, Դիզակի և Զանգեզուրի գյուղերում:

↑ Շուշին 1900-ականներին

evnmag.com
կարդայեք առցանց

The Main
Design Store

@TheMainDesignStore

/

TheMain.am

/

Միեր Մկրտչյան 10
(Միրզոյան գրադարան,
առաջին հարկ)